ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԼՈՌԻ-1» ՀՈՂՄԱԿԱՅԱՆԻ VESTAS-47 ՄԱԿՆԻՇԻ ԹՎՈՎ 4 ՀԱՏ 660 ԿՎՏ ՀՈՂՄԱԱԳՐԵԳԱՏՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՐՏԱԴՐՈՂ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ՏԱՐԵԿԱՆ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ (ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՎ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՄԱՍԵՐ) ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԾԱԾԿԱԳԻՐ ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-21/33

Պատվիրատու՝

Կապալառու՝

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	
ԲԱԺԻՆ A.	**ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԵՐ**
ՁԵՎ 1.	ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
	ՀՈԴՎԱԾ (1) ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ **ՀՈԴՎԱԾ (2)** ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ **ՀՈԴՎԱԾ (3)** ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ **ՀՈԴՎԱԾ (4)** ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ **ՀՈԴՎԱԾ (5)** ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
ԲԱԺԻՆ B.	**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**
ՀԱՎԵԼՎԱԾ 1.	ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ
ՀԱՎԵԼՎԱԾ 2.	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀԱՎԵԼՎԱԾ 3.	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ-ՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԵՐ ԸՍՏ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ-ՆԵՐԻ
ՀԱՎԵԼՎԱԾ 4.	ՕԲՅԵԿՏԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՎԵԼՎԱԾ 4.1	ԱԿՏ N ՕԲՅԵԿՏԸ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՓԱՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵ-ԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՎԵԼՎԱԾ 5.	ԿԱՌՈՒՅՑԻ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՑԱՆԿ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆԹԱԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ
ԲԱԺԻՆ C.	**ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ**
ՁԵՎ 1.	ՕԲՅԵԿՏԻ ԱՎԱՐՏՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ
ՁԵՎ 2.	ՕԲՅԵԿՏԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ
ԲԱԺԻՆ E.	**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
ՀՈԴՎԱԾ 1.	ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ
ՀՈԴՎԱԾ 2.	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ
ՀՈԴՎԱԾ 3.	ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ
ՀՈԴՎԱԾ 4.	ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՊ
ՀՈԴՎԱԾ 5.	ԼԵՋՈՒ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱԺԻՆ F.	**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**
ՀՈԴՎԱԾ 6.	ՕԲՅԵԿՏՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼ
ՀՈԴՎԱԾ 7.	ՄԵԿՆԱՐԿԻ ԵՎ ԱՎԱՐՏՄԱՆ ԺԱՄԿԵՏ
ՀՈԴՎԱԾ 8.	ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՈԴՎԱԾ 9.	ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԲԱԺԻՆ G.	**ՎՃԱՐՈՒՄ**
ՀՈԴՎԱԾ 10.	ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆ
ՀՈԴՎԱԾ 11.	ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
ՀՈԴՎԱԾ 12.	ԵՐԱՇԽԻՔՆԵՐ
ՀՈԴՎԱԾ 13.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ

Պատվիրատու՝

Կապալառու՝

ԲԱԺԻՆ Հ.	**ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**
ՀՈԴՎԱԾ 14.	ԼԻՑԵՆԶԻԱ/ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
ՀՈԴՎԱԾ 15.	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ
ԲԱԺԻՆ Ի.	**ՕԲՅԵԿՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**
ՀՈԴՎԱԾ 16.	ԿԱՏԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀՈԴՎԱԾ 17.	ԵՆԹԱԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀՈԴՎԱԾ 18.	ՁԵՌՔԲԵՐՈՒՄ
ՀՈԴՎԱԾ 19.	ՏԵՂԱԿԱՅՈՒՄ/ՄՈՆՏԱԺ
ՀՈԴՎԱԾ 20.	ՓՈՐՁԱՐԿՈՒՄ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄ
ՀՈԴՎԱԾ 21.	ՕԲՅԵԿՏԻ ԱՎԱՐՏ
ՀՈԴՎԱԾ 22.	ՕԲՅԵԿՏԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ/ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ
ԲԱԺԻՆ Յ.	**ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
ՀՈԴՎԱԾ 23.	ԱՎԱՐՏՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԱՇԽԻՔ
ՀՈԴՎԱԾ 24.	ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՈԴՎԱԾ 25.	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ
ԲԱԺԻՆ Կ.	**ՌԻՍԿԻ ԲԱՇԽՈՒՄ**
ՀՈԴՎԱԾ 26.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ
ՀՈԴՎԱԾ 27.	ՕԲՅԵԿՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀՈԴՎԱԾ 28.	ԳՈՒՅՔԻ ԿՈՐՈՒՍՏ ԿԱՄ ՎՆԱՍՎԱԾՔ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ՎՆԱՍՎԱԾՔ, ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ
ՀՈԴՎԱԾ 29.	ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐ
ՀՈԴՎԱԾ 30.	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՒՄ
ՀՈԴՎԱԾ 31.	ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ
ՀՈԴՎԱԾ 32.	ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ
ԲԱԺԻՆ Լ.	**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՏԱՐՐԵՐՈՒՄ**
ՀՈԴՎԱԾ 33.	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՕԲՅԵԿՏՈՒՄ
ՀՈԴՎԱԾ 34.	ԱՎԱՐՏՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄ
ՀՈԴՎԱԾ 35.	ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՍԵՑՈՒՄ
ՀՈԴՎԱԾ 36.	ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄ
ՀՈԴՎԱԾ 37.	ՁԻՋՈՒՄ (ՓՈԽԱՆՑՈՒՄ)
ԲԱԺԻՆ Մ.	**ՊԱՀԱՆՋՆԵՐ**
ՀՈԴՎԱԾ 38.	ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Պատվիրատու՝

Կապալառու՝

ԲԱԺԻՆ Ա.	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԵՐ
ՁԵՎ 1. Պայմանագիր	**ՀՈԴՎԱԾ (1)** **ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ** **1.1 <u>Պայմանագրային Փաստաթղթեր</u>.** Ներքոշարադրյալ Պայմանագրային փաստաթղթերը ներառվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև կնքված Պայմանագրում, և յուրաքանչյուրը պետք է ընթերցվի և հանդիսանա Պայմանագրի անբաժանելի մաս. **(a)** Պայմանագիրը և վերջինիս կից ներկայացված Հավելվածներ, **(b)** Արտադրող գործարանի հրահանգների ծավալներ, **(c)** Կապալառուի կողմից ներկայացված հայտ և գնային առաջարկ (բացվածքը), **(d)** Պայմանագրի Ընդհանուր Պայմաններ: **(e)** Այլ փաստաթղթեր: **1.2 <u>Առաջնահերթության կարգ</u>.** Պայմանագրի 1.1 Ենթահոդվածում նշված Պայմանագրային փաստաթղթերի միջև որևէ երկիմաստության կամ տարաձայնության դեպքում, առաջնահերթության կարգը պետք է լինի այն հերթականությունը, որով Պայմանագրային փաստաթղթերը թվարկված են Պայմանագրի 1.1 Ենթահոդվածում: **1.3 <u>Սահմանումներ</u>.** Մեծատառ գրված բառերն ու արտահայտությունները պետք է ունենան այն նույն նշանակությունը, ինչ նրանց վերագրված է Պայմանագրի Ընդհանուր Պայմաններում: **ՀՈԴՎԱԾ (2)** **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ** **2.1 <u>Պայմանագրի Գինը</u>.** Օբյեկտի վրա կատարվող աշխատանքի համար Պայմանագրի գինը կազմում է 118 095 (մեկ հարյուր տասնութ հազար իննսունհինգ) եվրո: Պայմանագրի գինը ներառում է նաև բոլոր մյուս հարկերը (ուղղակի և անուղղակի), տուրքերը, պարտադիր վճարներն ու ծախսերը, այլ վճարները՝ բացառությամբ Պատվիրատուի անունով ապրանքների և սարքավորումների մատակարարումների դեպքում առաջացող ՀՀ պետական բյուջե վճարվող

Պատվիրատու՝

Կապալառու՝

մաքսազերծման հետ կապված հարկերի ու տուրքերի և այլ վճարների, որոնք վճարվելու են Պատվիրատուի կողմից:

2.2 <u>Վճարման պայմաններ</u>.

Վճարման պայմաններն ու ընթացակարգերը, որոնց համաձայն Պատվիրատուն կվճարի Կապալառուին, տրված են Պայմանագրի՝ «Վճարման պայմաններ և ընթացակարգեր» Հավելվածում:

ՀՈԴՎԱԾ (3)
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ

3.1 <u>Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվ</u>.

Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը, որից սկսած Օբյեկտի Ավարտման ժամկետը պետք է հաշվարկվի, այն օրն է, երբ ներքոշարադրյալ բոլոր պայմանները կատարված կլինեն ըստ ստորև նշված հաջորդականության՝

(a) Պայմանագիրը Պատվիրատուի և Կապալառուի կողմից պատշաճ կերպով կնքվել է,

(b) Կապալառուն Պատվիրատուին ներկայացրել է Կատարման (Պայմանագրի ապահովման) և Որակավորման ապահովման բանկային երաշխիքները,

ՀՈԴՎԱԾ (4)
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1 ՊԸՊ 4.1 ենթահոդվածի համաձայն՝ Պատվիրատուի և Կապալառուի ծանուցման հասցեներն են՝

Պատվիրատու Հասցե Հեռ. Էլ-հասցե	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ՀՀ, Ք. Երևան, Զ. Անդրանիկի 1 060 38-00-40 hven@hven.am
Կապալառու Հասցե Հեռ. Էլ-հասցե	ՍաբաՆիրու Թեհրան, Սավե մայրուղու 9 կմ, Շոհադայե Սադիդ փողոց +982155270251-3 sabaniroomanaging@gmail.com

Պատվիրատու՝

Կապալառու՝

ՀՈԴՎԱԾ (5)
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

5.1 Պայմանագրին կից Հավելվածները կազմում են Պայմանագրի անբաժանելի մաս:

5.2 Պայմանագրում որևէ Հավելվածին կատարված հղումը պետք է նշանակի հղում Պայմանագրին կցված Հավելվածին և Պայմանագիրը պետք է ընթերցվի և մեկնաբանվի վերջինիս համաձայն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Պատվիրատուն և Կապալառուն կնքում են Պայմանագիր ստորև նշված ամսաթվին:

Ստորագրված Պատվիրատուի անունից՝

[Ստորագրություն]

Գլխավոր տնօրեն Հայկ Հարությունյան

Ստորագրված Կապալառուի անունից՝

[Ստորագրություն]

Դիրեկտիվ մենեջեր Ալի Ղորբանի

«15» հունիսի 2021թ.

ԲԱԺԻՆ Բ.	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Վճարման պայմաններ և ընթացակարգեր	**(i)** Օբյեկտի վրա կատարվող աշխատանքի համար Կապալառուին վճարումն իրականացվելու է հետևալ կարգով և պայմաններով՝ **(a)** Պատվիրատուն Պայմանագրի ընդհանուր գնի մինչև 50 (հիսուն) %-ի չափով Կապալառուին կվճարի կանխավճար: Պատվիրատուն կանխավճարը պետք է փոխանցի Կապալառուի կողմից Կանխավճարի բանկային երաշխիք ներկայացնելուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Կանխավճարի գումարը պետք է մարվի Կապալառուի կողմից կատարված և Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով վերջինիս վճարվող Պայմանագրի գնից՝ ինչպես նշված է Պայմանագրում: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում: **(b)** Պատվիրատուն Պայմանագրի ընդհանուր գնի մնացած մասը Կապալառուին կվճարվի Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով՝ աշխատանքի ամբողջականը ավարտի վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունները Պատվիրատուի կողմից հաստատվելու օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում: **(ii)** Պատվիրատուն Պայմանագրի «Վճարման պայմաններ և ընթացակարգեր» վերտառությամբ Հավելվածի (i) կետի «b» ենթակետով նախատեսված պահանջը խախտելու դեպքում վերջինիս նկատմամբ յուրաքանչյուր կետանցված օրվա համար կհաշվարկվի տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.2 տոկոսի չափով:
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց	**Կից ներկայացվում է հավելված 1-ով**
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Աշխատանքների ծավալ և անհրաժեշտ սարքերի, սարքավորումների և նյութերի ցանկեր	**Կից ներկայացվում է հավելված 2-ով**

Պատվիրատու՝

Կապալառու՝

ըստ Պատվիրատուի կանխատեսումների	

ՀԱՎԵԼՎԱԾ 4.

Օբյեկտի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրություն

Պատվիրատու	Կապալառու
_____ գտնվելու վայր _____ հհ_____ ՀՎՀՀ_____ _____	_____ գտնվելու վայր _____ հհ_____ ՀՎՀՀ_____ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՕԲՅԵԿՏԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 20 թ.

Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ-ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
	անվանում	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	վճարման ենթակա գումարը	վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Պատվիրատու՝

Կապալառու՝

	Աշխատանքը հանձնեց _____ [սորագրություն] _____ [ազգանուն, անուն] Կ.Տ.	Աշխատանքը ընդունեց _____ [սորագրություն] _____ [ազգանուն, անուն] Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ 4.1

ԱԿՏ N

Օբյեկտը Պատվիրատուին հանձնելու փաստն արձանագրելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____-ին կնքված N _____ գնման _____ պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանք		
անվանում	չափման միավոր	քանակ (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____ [սորագրություն]	_____ [սորագրություն]
_____ [ազգանուն, անուն] Կ.Տ.	_____ [ազգանուն, անուն] Կ.Տ.

Պատվիրատու՝

Կապալառու՝

ՀԱՎԵԼՎԱԾ 5.
Կառույցի ու ծառայությունների հիմնական կետերի ցանկ և հաստատված Ենթակապալառուների ցանկ

Կառույցի ու ծառայությունների հիմնական կետերի ցանկը և Ենթակապալառուների, այդ թվում արտադրողների ցանկ պետք է ներկայացվի ստորև սահմանված կարգով:

Կառույցի և ծառայություն-ների հիմնական կետեր	Հաստատված Ենթակապալառուներ/ արտադրողներ	Երկիր

ԲԱԺԻՆ C. **ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ**

ՁԵՎ 1.
Օբյեկտի Ավարտման Վկայական

ՕԲՅԵԿՏԻ ԱՎԱՐՏՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ամսաթիվ՝ _____
Ում՝ _____
Պայմանագիր N՝ _____

Պատվիրատուի և Կապալառուի միջև կնքված Պայմանագրի Ընդհանուր Պայմանների 21 Հոդվածի (Օբյեկտի ավարտ) համաձայն, առ _____, որը վերաբերում է _____, սույնով ծանուցում ենք Կապալառուին, որ Օբյեկտն ավարտված է ստորև նշված ամսաթվին և որ ՊԸՊ 21.1.8 Ենթահոդվածի համաձայն Պատվիրատուն սույնով իր վրա է վերցնում Օբյեկտի խնամքի, պահպանման պարտականությունը՝ Օբյեկտի պատահական կորստի և վնասվածքի ռիսկի հետ միասին հետ՝ ստորև նշված ամսաթվին:

1. Օբյեկտի նկարագրություն՝ _____
2. Օբյեկտի Ավարտման ամսաթիվ՝ _____

Կապալառուին Օբյեկտի ավարտման վկայականի տրամադրումը վերջինիս չի ազատում Պայմանագրով ստանձնած այլ պարտավորությունները կատարելուց և ոչ էլ Թերությունների համար պատասխանատվությանից՝ ինչպես նկարագրված է ՊԸՊ 24 Հոդվածում:

Հարգանքով՝

_____
[Պաշտոն]

Պատվիրատու՝

Կապալառու՝

ՁԵՎ 2. Օբյեկտի Շահագործման ընդունման Վկայական	**ՕԲՅԵԿՏԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ** Ամսաթիվ՝ _____ Ում՝ _____ Պայմանագիր N՝ _____ Պատվիրատուի և Կապալառուի միջև կնքված Պայմանագրի Ընդհանուր Պայմանների 22 Հոդվածի (Օբյկետի Շահագործման Ընդունում) համաձայն, առ _____, որը վերաբերում է _____, սույնով ծանուցում ենք Կապալառուին, որ Օբյեկտի Երաշխիքային փորձարկումները բավարար կերպով ձեռք են բերվել ստորև նշված ամսաթվին: **1.** Օբյեկտի նկարագրություն՝ _____ **2.** Ավարտման ամսաթիվ՝ _____ Կապալառուին Օբյեկտի Շահագործման ընդունման վկայականի տրամադրումը վերջինիս չի ազատում Պայմանագրով ստանձնած այլ պարտավորությունները կատարելուց և ոչ էլ Թերությունների համար պատասխանատվությունից՝ ինչպես նկարագրված է ՊԸՊ 24 Հոդվածում: Հարգանքով՝ _____ [Պաշտոն]

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԲԱԺԻՆ F.	ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՈԴՎԱԾ (1) Սահմանումներ	Պայմանագրում օգտագործված հասկացություններն ու եզրույթներն ունեն ստորև նշված նշանակությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ Պայմանագրում օգտագործված հասկացությունների ու եզրույթների բովանդակությունն այլ իմաստ կպարունակի կամ այլ բան կբխի իրավահարաբերության էությունից՝ **1.1 «Պայմանագիր»** - Պատվիրատուի և Կապալառուի միջև կնքված պայմանագիր, նրա հետ առնչվող պայմանագրային փաստաթղթեր, որոնք միասին կազմում են Պայմանագրի անբաժանելի մաս: «Պայմանագիր» եզրույթը վերջինիս անբաժանելի մաս կազմող բոլոր փաստաթղթերում պետք է մեկնաբանվի այնպես, ինչպես նշված է Պայմանագրի «Պայմանագրային փաստաթղթեր» վերտառությամբ 1.1 Ենթահոդվածում:

Պատվիրատու՝

Կապալառու՝

1.2 «Պայմանագրային Փաստաթղթեր» - նշանակում է Պայմանագրի «Պայմանագրային փաստաթղթեր» վերտառությամբ 1.1 Ենթահոդվածում թվարկված փաստաթղթեր, ներառյալ նրանցում կատարվող փոփոխություններ ու լրացումներ:

1.3 «ՊԸՊ» - նշանակում է Պայմանագրի Ընդհանուր Պայմաններ:

1.4 «Օր» - նշանակում է օրացուցային օր, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

1.5 «Տարի» - նշանակում է 365 օր:

1.6 «Ամիս» - նշանակում է օրացուցային ամիս:

1.7 «Կողմ» - նշանակում է Պատվիրատու և (կամ) Կապալառու, ինչպես կպահանջի ենթատեքստը, իսկ «Կողմեր» նշանակում է երկուսը միասին:

1.8 «Պատվիրատու» - նշանակում է Պայմանագրում որպես այդպես հիշատակված անձ՝ ներառյալ Պատվիրատուի իրավահաջորդներ և (կամ) Պատվիրատուի կողմից լիազորված իրավասու անձինք:

1.9 «Կապալառու» - նշանակում է Պայմանագրում որպես «Կապալառու» նշված անձ և (կամ) անձինք՝ ներառյալ Կապալառուի իրավահաջորդներ և (կամ) Կապալառուի կողմից լիազորված իրավասու անձինք:

1.10 «Ենթակապալառու» - նշանակում է ցանկացած անձ, ներառյալ արտադրողներ, որոնց ուղղակի կամ անուղղակի կերպով Կապալառուի կողմից տրվել է Ենթակապալառուի պարտականություններ Օբյեկտի որևէ մասի իրականացման համար և ներառում է վերջինիս իրավահաջորդներին և (կամ) լիազորված իրավասու անձանց:

1.11 «Պայմանագրի գին» - նշանակում է Պայմանագրի՝ «Պայմանագրի գին և վճարման պայմաններ» վերտառությամբ 2.1 Ենթահոդվածում սահմանված գումար, որը ենթակա է այնպիսի լրացումների և կարգավորումների կամ պահումների, որոնք կարող են կատարվել Պայմանագրի պայմաններին համապատասխան:

1.12 «Օբյեկտ» - նշանակում է ՀՀ Լոռու մարզի Պուշկինի լեռնանցքում գտնվող «Լոռի-1» հողմակայան, որը ներառում է Vestas-47 մակնիշի թվով 4 հատ 660 կՎտ հողմաագրեգատների թերությունների վերացումը, արտադ-

Պատվիրատու՝

Կապալառու՝

	րող գործարանի հրահանգների ծավալների համաձայն մեկանգամյա տարեկան տեխսպասարկումը (էլեկտրոնային, էլեկտրական և մեխանիկական մասեր) և շահագործման հանձնումը: **1.13 «Կառույց»** - նշանակում է Օբյեկտի վրա կատարվող աշխատանքի համար անհրաժեշտ առարկաներ, սարքեր, սարքավորումներ, նյութեր և ամեն տեսակի պարագաներ, որոնք պետք է Կապալառուի կողմից Պայմանագրի համաձայն տրամադրվեն և ներառվեն Օբյեկտում, ներառյալ Կապալառուի կողմից ՊԸՊ 6.2 Ենթահոդվածի համաձայն տրամադրվող ապրանքներն ու նյութերը (այսուհետ՝ բոլորը միասին նաև «Նյութեր»), որը (Կառույցը), սակայն, չի ներառում Կապալառուի սարքավորումները: **1.14 «Ծառայություններ»** - նշանակում է Օբյեկտի վրա կատարվող աշխատանքի համար օժանդակ բոլոր այն ծառայությունները, որոնք պետք է Պայմանագրի համաձայն իրականացվեն Կապալառուի կողմից՝ ինչպիսիք են Տեղանքում նախապատրաստական աշխատանքները և Օբյեկտի ուսումնասիրությունը, Կապալառուի սարքավորումների ապահովումն ու օգտագործումը, պահանջվող բոլոր Նյութերի տրամադրումը, մատակարարումը, մոնտաժումը, փորձարկումը, շահագործման հանձնման աշխատանքները, շահագործման հանձնումը, տեխնիկական սպասարկումը և այլն՝ ինչպես որ տվյալ դեպքում կարող է պահանջվել: **1.15 «Կապալառուի սարքավորումներ»** - նշանակում է բոլոր սարքավորումները, մեքենամեխանիզմները, գործիքները, ապարատները, սարքերը կամ ամեն տեսակի պարագաները, որոնք պահանջվում են Օբյեկտի մոնտաժման, փորձարկման, շահագործման հանձնման աշխատանքների, շահագործման հանձնման, տեխնիկական սպասարկման համար, որոնք պետք է տրամադրվեն Կապալառուի կողմից, սակայն չեն ներառում Կառույցը: **1.16 «Ծագման երկիր»** - նշանակում է այն երկրներն ու տարածքները, որոնք ընդունելի են Պատվիրատուի կողմից Պայմանագրում նշված պայմանների համաձայն: **1.17 «Տեղանք»** - նշանակում է հողատարածք կամ այլ վայրեր, որտեղ Օբյեկտը տեղակայված է և որտեղ պետք է աշխատանքն իրականացվի, ինչպես նաև այլ հողատարածքներ կամ վայրեր, որոնք կարող են Պայմանագրում սահմանվել որպես «Տեղանք»:

Պատվիրատու՝

Կապալառու՝

1.18 «Պայմանագրի ուժի մեջ մտնելու օր» - նշանակում է Պայմանագրի ՝ «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթիվ» վերտառությամբ 3.1 Ենթահոդվածում սահմանված բոլոր պայմանների իրականացման ամսաթիվ, որից սկսած պետք է հաշվարկվի Օբյեկտի Ավարտման ժամկետը:

1.19 «Ավարտման ժամկետ» - նշանակում է այն ժամանակը, որի ընթացքում Օբյեկտի Ավարտումը պետք է կատարվի ՊԸՊ 7.2 Ենթահոդվածով սահմանված Ավարտման ժամկետում, և որ Օբյեկտն ավարտվել է գործառնորեն ու կառուցվածքորեն, դրվել է պատշաճ ու մաքուր վիճակում:

1.20 «Ավարտում» - նշանակում է՝ Օբյեկտը, որի համար ՊԸՊ 7.2 Ենթահոդվածով նախատեսված է Ավարտման ժամկետ, ավարտվել է գործառնորեն ու կառուցվածքորեն, դրվել պատշաճ ու մաքուր վիճակում, որ Օբյեկտի շահագործման հանձնման հետ կապված նախապատրաստման աշխատանքն ավարտվել է, և որ Օբյեկտը պատրաստ են Շահագործման հանձման և Շահագործման ընդունման համար՝ ինչպես նշված է ՊԸՊ 22.1 և 22.3 Ենթահոդվածներում:

1.21 «Շահագործման հանձնման նախապատրաստում» - նշանակում է փորձարկումը, ստուգումը և այլ պահանջները, որոնք պետք է ՊԸՊ ՊԸՊ 21 Հոդվածի համաձայն իրականացվեն Կապալառուի կողմից Շահագործման հանձնման նախապատրաստման նպատակով:

1.22 «Շահագործման հանձնում» - նշանակում է Կապալառուի կողմից Օբյեկտի շահագործում, որը, հաջորդելով Օբյեկտի Ավարտմանը, պետք է ՊԸՊ 22.1 Ենթահոդվածի համաձայն իրականացվի Կապալառուի կողմից՝ Երաշխիքային փորձարկում իրականացնելու նպատակով:

1.23 «Երաշխիքային փորձարկում» - նշանակում է փորձարկում, որը պետք է իրականացվի հավաստիանալու համար, որ Օբյեկտն ի վիճակի է ապահովելու Պայմանագրի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույց վերտառությամբ Հավելվածով նախատեսված գործառութային պահանջներին:

1.24 «Շահագործման ընդունում» - նշանակում է Օբյեկտի ընդունումը Պատվիրատուի կողմից, որը վկայում է Օբյեկտի նկատմամբ հետ կապված Կապալառուի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորության կատարում և պետք է ներառի ՊԸՊ 22.3.4 Ենթահոդվածի համաձայն ենթադրվող ընդունումը:

Պատվիրատու՝

Կապալառու՝

	1.25 «Թերությունների համար պատասխանատվության ժամկետ» - նշանակում է Կապալառուի կողմից Պայմանագրով տրված երաշխիքների վավերականության ժամանակահատված, որը սկսվում է Օբյեկտը Շահագործման ընդունելուց հետո, որի ժամանակ Կապալառուն պատասխանատու է Օբյեկտի թերությունների վերացման համար՝ ինչպես ամրագրված է ՊԸՊ 24 Հոդվածում:
ՀՈԴՎԱԾ (2) Պայմանագրային փաստաթղթեր	**2.1** Պայմանագրի՝ «Պայմանագրային փաստաթղթեր» վերտառությամբ 1.2 Ենթահոդվածի համաձայն՝ Պայմանագրի մաս կազմող բոլոր փաստաթղթերը (և նրա բոլոր մասերը) պետք է լինեն փոխկապակցված, մեկը մյուսին լրացնող և պարզաբանող: Պայմանագիրը պետք է ընթերցվի որպես մեկ ամբողջություն:
ՀՈԴՎԱԾ (3) Մեկնաբանում	**3.1 <u>Մեկնաբանում</u>.** **3.1.1** Պայմանագրում, բացառությամբ այն դեպքերի, երբ բովանդակությունն այլ իմաստ կպարունակի կամ այլ բան կբխի իրավահարաբերության էությունից՝ **(a)** մեկ սեռի իմաստով օգտագործված բառերը կներառեն նաև բոլոր սեռերը, **(b)** եզակի թվով նշված բառերը ներառում են նաև հոգնակի թիվը և բառերը, որոնք նշված են հոգնակի թվով, ներառում են նաև եզակի թիվը, **(c)** այն դրույթները, որտեղ կան «համաձայնել», «համաձայնեցված» կամ «համաձայնություն» բառերը, պահանջում են համաձայնությունն արձանագրել գրավոր, **(d)** «մրցույթ» բառը հոմանիշ է «հայտ» բառին, «մրցույթի մասնակիցը» հոմանիշ է «հայտատուին», իսկ «մրցութային փաստաթղթերը» հոմանիշ են «մրցույթի հայտի փաստաթղթերին», **(e)** «գրված» կամ «գրավոր» նշանակում է ձեռքով գրված, տպագիր, տպած կամ էլեկտրոնային տարբերակով գրված և արձանագրված: **3.1.2** Էջանիշներում գրված բառերը և վերնագրերը չունեն որևէ նշանակություն և չպետք է հաշվի առնվեն ՊԸՊ 3.1 Ենթահոդվածով նախատեսված պայմանները մեկնաբանելիս: **3.2 <u>Վերտառություններ և ուժը կորցրած պայմաններ</u>.** **3.2.1** Պայմանագրում օգտագործված վերտառությունները հաշվի են առնվում բացառապես Պայմանագրում առկա հոդվածների ճանաչման և վկայա-

Պատվիրատու՝

Կապալառու՝

կոչման համար, սակայն երբևէ չպետք է հաշվի առնվեն Պայմանագրի պայմանների, Կողմերի իրավունքների ու պարտականությունների մեկնաբանման ժամանակ:

3.2.2 Պայմանագրի պայմաններից որևէ մեկի անվավերությունը և (կամ) ուժը կորցնելը չի հանգեցնում Պայմանագրի մյուս պայմանների անվավարերության և (կամ) ուժը կորցնելուն:

3.2.3 ՊԸՊ 3.2.2 Ենթահոդվածով նախատեսված հետևանքները վրա հասնելու դեպքում Կողմերը ողջամիտ ժամկետում պետք է միջոցներ ձեռնարկեն (բանակցեն) Պայմանագրի անվավեր ճանաչված և (կամ) ուժը կորցրած պայմանները որքան հնարավոր է անվավեր ճանաչված և (կամ) ուժը կորցրած պայմաններին մոտ տնտեսական արդյունք ունեցող նոր պայմաններով փոխարինելու ուղղությամբ:

3.3 <u>Իրավունքից հրաժարում.</u>

3.3.1 ՊԸՊ 3.3.2 Ենթահոդվածի համաձայն՝ Պայմանագրի գործողության ընթացքում Կողմերից որևէ մեկի կողմից ոչ մի մեղմացուցիչ հանգամանք, կետանցում, կասեցում կամ բարի կամքի դրսևորում կամ Կողմերից մեկի կողմից մյուս Կողմին որևէ ժամկետի տրամադրում չպետք է վնաս պատճառի համապատասխան Կողմին, չպետք է որևէ կերպ ազդի կամ սահմանափակի այդ Կողմի իրավունքները համաձայն Պայմանագրի՝ հավասարապես այնպես, ինչպես որ Կողմերից մեկի կողմից իր իրավունքից հրաժարումը չպետք է հիմք հանդիսանա Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

3.3.2 Պայմանագրով Կողմերից որևէ մեկի կողմից իր ցանկացած իրավունքներից, իրավասություններից, պահանջներից, պարտավորություններից, իրավունքի պաշտպանության միջոցներից հրաժարումը, իր նկատմամբ մյուս Կողմի ունեցած պարտքի ներումը պետք է ձևակերպված լինեն գրավոր, լինեն թվագրված և ստորագրված Կողմերի լիազորված անձանց կողմից և պետք է սահմանվեն այն իրավունքները, իրավասությունները, պահանջները, պարտավորությունները, պաշտպանության միջոցները, պարտքը և վերջինիս չափը (գումարը), որքանով վերաբերում են այդ իրավունքներից, իրավասություններից, պահանջներից, պարտավորություններից, պաշտպանության միջոցներից հրաժարվելուն, պարտքը ներելուն:

Պատվիրատու՝

Կապալառու՝

3.3.3 Եթե Կողմերը և (կամ) Կողմերից որևէ մեկը ՊԸՊ 3.3.2 Ենթահոդվածով սահմանված կարգով հրաժարվել են իրենց ցանկացած իրավունքներից, իրավասություններից, պահանջներից, պարտավորություններից, իրավունքի պաշտպանության միջոցներից, մյուս Կողմի նկատմամբ ունեցած պարտքից, ապա այդ Կողմը և (կամ) Կողմերից որևէ մեկը հետագայում իրավունք չունեն որևէ պահանջ և (կամ) առարկություն ներկայացնել մյուս Կողմին, որը (պահանջը և (կամ) առարկությունը) բխում է հրաժարված իրենց ցանկացած իրավունքներից, իրավասություններից, պահանջներից, պարտավորություններից, իրավունքի պաշտպանության միջոցներից, մյուս Կողմի նկատմամբ ունեցած պարտքից:

3.4 <u>Պայմանագրում կատարվող փոփոխություններ և (կամ) լրացումներ</u>.

3.4.1 Պայմանագրում կատարված ոչ մի փոփոխություն և (կամ) լրացում իրավաբանական ուժ չունի, եթե փոփոխությունը և (կամ) լրացումը չի արվել գրավոր, չի թվագրվել, հստակորեն չի առնչվում Պայմանագրին և պատշաճ կերպով ստորագրված չէ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

3.4.2 Կողմերի կողմից ՊԸՊ 3.4.1 Ենթահոդվածով սահմանված կարգը չպահպանելու դեպքում Պայմանագրում կատարված փոփոխությունը և (կամ) լրացումը համարվում է անվավեր և Կողմերի համար չի առաջացնում որևէ իրավական հետևանքներ՝ բացառությամբ ՊԸՊ 3.4.3 Ենթահոդվածով նախատեսված հետևանքների:

3.4.3 Եթե Կողմերը Պայմանագրում փոփոխություն և (կամ) լրացում կատարել են Պայմանագրի 3.4.1 ենթահոդվածով սահմանցված կարգի խախտմամբ, ապա Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս Կողմին վերադարձնել կատարված փոփոխության և (կամ) լրացման արդյունքում ստացածը, իսկ ստացածը վերադարձնելու անհնարինության դեպքում՝ հատուցել դրա արժեքը:

3.4.4 Կողմերի կողմից Պայմանագրի ստորագրումից և (կամ) Պայմանագրում փոփոխություն և (կամ) լրացում կատարելուց հետո նախորդ բոլոր բանակցությունները, նամակագրությունները և ձեռք բերված համաձայնությունները (արված գրավոր և (կամ) բանավոր), որոնք կապված են Պայմանագրի ստորագրման և (կամ) Պայմանագրում փոփոխություն և (կամ) լրացում կատարելու հետ, համարվում են ուժը կորցրած:

Պատվիրատու՝

Կապալառու՝

3.4.5 Ի լրումն ՊԸՊ 3.4.4 Ենթահոդվածի՝ Պայմանագրի ստորագրումը և (կամ) Պայմանագրում կատարված փոփոխությունը և (կամ) լրացումը ներառում են մինչև Պայմանագրի ստորագրումը և (կամ) Պայմանագրում փոփոխություն և (կամ) լրացում կատարելը Կողմերի վարած բոլոր բանակցությունները, հաղորդակցությունները, նամակագրությունները և ձեռք բերված համաձայնությունները (արված գրավոր և (կամ) բանավոր):

3.5 <u>Անկախ Կապալառու</u>.

3.5.1 Կապալառուն պետք է լինի Պայմանագիրն իրականացնող անկախ Կապալառու: Պայմանագրով չպետք է ստեղծվի որևէ գործակալություն, համագործակցություն, համատեղ ընկերություն կամ համատեղ այլ հարաբերություն Պատվիրատուի և Կապալառուի միջև:

3.5.2 Պայմանագրի դրույթների համաձայն Կապալառուն պետք է անձամբ պատասխանատվություն կրի Պայմանագրի կատարման համար: Պայմանագրում Կապալառուի կողմից ներգրավված բոլոր աշխատակիցները, ներկայացուցիչները կամ Ենթակապալառուները, ներառյալ արտադրողները, որոնք կապված են Պայմանագրի կատարման հետ, պետք է լինեն Կապալառուի ամբողջական հսկողության ներքո և չպետք է դիտվեն որպես Պատվիրատուի աշխատակիցներ, և Պայմանագրով կամ ենթակապալի պայմանագրով Կապալառուի կողմից վերջիններիս շնորհված որևէ իրավունք կամ պարտականություն չպետք է մեկնաբանվի, որ ծագել կամ ծագելու է որևէ պայմանագրային հարաբերություն ցանկացած այդպիսի աշխատողի կամ ներկայացուցչի կամ Ենթակապալառուների կամ արտադրողների և Պատվիրատուի միջև:

Պայմանագրի կատարման ընթացքում Կապալառուի կողմից ներգրավված ցանկացած աշխատակցի, ներկայացուցչի կամ Ենթակապալառուի, ներառյալ արտադրողի որևէ գործողություն կամ անգործությունը, որը Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուի համար առաջացնում է կամ կարող է առաջացնել փաստական և (կամ) իրավական հետևանքներ՝ լինի դա դրական, թե՝ բացասական, համարվում է Կապալառուի կողմից և անունից կատարված:

3.6 <u>Ծագման երկիր</u>.

3.6.1 «Ծագում» նշանակում է այն վայրը, որտեղ Կառույցը կամ նրա բաղադրիչ մասերը մշակվել, աճեցվել, ստեղծվել կամ արտադրվել են և որտեղից մատուցվում են ծառայությունները:

Պատվիրատու՝

Կապալառու՝

	3.6.2 Կառույցի բաղադրիչները համարվում են արտադրված, երբ բաղադրիչների արտադրման, մշակման կամ էական/խոշոր հավաքակցման միջոցով ստացվում է կոմերցիոն տեսանկյունից ճանաչված արդյունք, որն իր բաղադրիչներով էականորեն ծառայում է իր հիմնական հատկանիշներին կամ նպատակներին:
ՀՈԴՎԱԾ (4) Հաղորդակցություններ և կապ	**4.1** Պատվիրատուի և (կամ) Կապալառուի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորություններից բխող հաստատումները, վկայագրերը (սերտիֆիկատները), թույլտվությունները, լիցենզիաները, համաձայնությունները, ծանուցումները, հարցումները, հաղորդագրությունները, խնդրանքը, հաշիվները, հաշվետվությունները կամ այլ տեղեկությունները, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են Պայմանագրի հետ, համարվում են մյուս Կողմին պատշաճ կերպով հանձնված, եթե հանձնվել են առձեռն ստացման մասին նշումով, ուղարկվել են գրավոր, փոստով և (կամ) պաշտոնական էլեկտրոնային հաղորդագրությամբ և (կամ) վճարված պատվերով՝ օդային փոստով և (կամ) միջազգային փոստով՝ ծրարի վրա նշելով Պայմանագրով Կողմերի կողմից նշված հասցեն և (կամ) մեկ այլ հասցե, որը Կողմերը գրավոր նախապես կսահմանեն որպես պատշաճ ծանուցման հասցե, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով: **4.2** Երբ Կողմին տրվում է վկայագիր (սերտիֆիկատ), թույլտվություն, լիցենզիա, ստացողը պետք է վկայագրի (սերտիֆիկատի), թույլտվության, լիցենզիայի օրինակը (պատճենը) ուղարկի մյուս Կողմին:
ՀՈԴՎԱԾ (5) Լեզու և օրենսդրություն	**5.1** Պատվիրատուի և Կապալառուի միջև կնքված Պայմանագիրը, նրանում կատարված փոփոխությունները և (կամ) լրացումները, Հավելվածները, Համաձայնագիրը, ինչպես նաև արտապայմանագրային պարտավորությունները, որոնք բխում են կամ կապված են Պայմանագրի, նրանում կատարված փոփոխությունների և (կամ) լրացումների, Հավելվածների, Համաձայնագրի հետ, կարգավորվում և մեկնաբանվում են ՀՀ օրենսդրության համաձայն: **5.2** Պայմանագրի ղեկավարման լեզուն հայերենն է: **5.3** Պայմանագրին առնչվող բոլոր փաստաթղթերը պետք է լինեն հայերեն: **5.4** Պատվիրատուն և Կապալառուն հայտարարում են, որ պատրաստակամ են գործադրել բոլոր հնարավոր և ողջամիտ միջոցները Պայմանագրի

Պատվիրատու՝

Կապալառու՝

	կամ վերջինիս հետ կապված վեճը և (կամ) տարաձայնությունը լուծել բանակցությունների միջոցով: Այնուամենայնիվ, եթե Կողմերի միջև առաջացած վեճը և (կամ) տարաձայնությունն այդպես էլ չեն լուծվում կամ Կողմերից որևէ մեկը չի տեսնում առկա տարաձայնությունը և վեճը բանակցությունների միջոցով լուծելու հնարավորությունը, ապա Կողմերի միջև ծագած վեճը և (կամ) տարաձայնությունը ենթակա է քննության Պատվիրատուի գտնվելու վայրի Դատարանում: **5.5** Ի լրում Պայմանագրի 5.5 ենթահոդվածի, եթե Կողմերից որևէ մեկն անցնում է Պայմանագրի կամ վերջինիս հետ կապված տարաձայնությունը և (կամ) վեճը դատական կարգով լուծելուն, ապա այդ դեպքում համարվում է, որ Կողմերի միջև առկա վեճը և (կամ) տարաձայնությունը հնարավոր չի եղել լուծել բանակցությունների միջոցով:
ԲԱԺԻՆ F.	**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**
ՀՈԴՎԱԾ (6) Օբյեկտում աշխատանքի ծավալ	**6.1** Ի լրումն ՊԸՊ 1.12, 1.13 և 1.14 Ենթահոդվածների՝ Կապալառուի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումն ընգրկում է ՊԸՊ 7.2 Ենթահոդվածով նախատեսված Ավարտման ժամկետում Օբյեկտի վրա կատարվող աշխատանքի իրականացումը Պայմանագրի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» վերտառությամբ Հավելվածով սահմանված կարգով և պայմաններով: **6.2** Ի լրումն ՊԸՊ 6.1 Ենթահոդվածի՝ Օբյեկտում աշխատանքի ծավալը ներառում է նաև Կապալառուի կողմից բոլոր այն աշխատանքների կատարումը, ծառայությունների կատարումը, Նյութերի տրամադրումը, որոնք Պայմանագրում նշված չեն որպես Պատվիրատուի պարտականություններ և ներառված չեն Պայմանագրի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» և «Աշխատանքների ծավալ և անհրաժեշտ սարքերի, սարքավորումների և նյութերի ցանկեր ըստ Պատվիրատուի կանխատեսումների» վերտառությամբ Հավելվածներում, սակայն ողջամտորեն կարող են բխել Պայմանագրից՝ որպես Օբյեկտի ավարտման համար Կապալառուից պահանջվող աշխատանքներ, ծառայություններ, Նյութեր, եթե այդպիսի աշխատանքները, ծառայությունները, Նյութերը նախատեսված լինեին Պայմանագրում: Ընդ որում Պայմանագիրը կնքելիս այդպիսի աշխատանքների, ծառայությունների և Նյութերի գինը համարվում է ներառված Պայմանագրի՝ «Պայմանագրի գին» վերտառությամբ 2.1 Ենթահոդվածով նախատեսված Պայմանագրի ընդհանուր

Պատվիրատու՝

Կապալառու՝

	գնի մեջ և հետագայում Կապալառուն իրավունք չունի Պատվիրատուից պահանջել հատուցելու այդպիսի աշխատանքների, ծառայությունների կամ Նյութերի արժեքը և (կամ) կատարած ծախսերը:
ՀՈԴՎԱԾ (7) Մեկնարկի և ավարտման ժամկետ	**7.1** Կապալառուն պետք է Օբյեկտի վրա աշխատանքը մեկնարկի Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և չպետք է խախտի ՊԸՊ 7.2 և 23.1 Ենթահոդվածների պահանջները: **7.2** Կապալառուն պետք է Օբյեկտի վրա աշխատանքն ավարտի Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց օրվանից հաշված 60 (վաթսուն) աշխատանքային օրվա ընթացքում: **7.3** Կապալառուի կողմից ՊԸՊ 7.2 Ենթահոդվածով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի կիրառել Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
ՀՈԴՎԱԾ (8) Կապալառուի պարտականություններ .	**8.1** Կապալառուն պետք է Պայմանագրի՝ «Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց» վերտառությամբ Հավելվածով սահմանված կարգով և պայմաններով իրականացնի Տեղանքում նախապատրաստական աշխատանքներն ու Օբյեկտի ուսումնասիրությունը, Կապալառուի սարքավորումների ապահովումն ու օգտագործումը, Կառույցի ձեռբերումը, մատակարարումը, ներառյալ փոխադրումը դեպի Տեղանք և այնտեղից դուրս, ինչպես նաև Տեղանքի տարածքում, բեռնաթափումը և պահեստավորումը, մոնտաժումը, փորձարկումը, շահագործման հանձնման աշխատանքները, շահագործման հանձնումը, տեխնիկական սպասարկումը՝ բացառությամբ այն մատակարարումների, աշխատանքների և ծառայությունների, որոնք պետք է ապահովվեն կամ կատարվեն Պատվիրատուի կողմից, եթե դա նախատեսված է Պայմանագրով: Տարեկան տեխնիկական սպասարկումը ենթադրում է՝ տուրբինի սպասարկում արտադրողի հրահանգներին համապատասխան, որը ներառում է առանձին մասերի փոխարինում, տարբեր մասերի յուղում և տուրբինի խնդիրների ստուգում և դրա մասին Պատվիրատուին տեղեկատվության տրամադրում: **8.2** Ի լրումն ՊԸՊ 6 Հոդվածի և ՊԸՊ 8.1 Ենթահոդվածի՝ Կապալառուն Օբյեկտի վրա աշխատանքը պետք է իրականացնի իր միջոցներով առարկաներով, սարքերով, սարքավորումներով, նյութերով և ամեն տեսակի պարագաներով, որոնք պետք է Պայմանագրի համաձայն Կապալառուի կողմից տրամադրվեն և ներառվեն Օբյեկտում:

Պատվիրատու՝

Կապալառու՝

8.3 Կապալառուն հաստատում է, որ Պայմանագիրը կնքել է Պայմանագրի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» և «Աշխատանքների ծավալ և անհրաժեշտ սարքերի, սարքավորումների և նյութերի ցանկեր ըստ Պատվիրատուի կանխատեսումների» վերտառությամբ Հավելվածներով նախատեսված Օբյեկտի վերաբերյալ տվյալների պատշաճ ստուգման հիման վրա ստացված տվյալների, ինչպես նաև այն տվյալների ու տեղեկությունների հիման վրա, որոնք Կապալառուն ձեռք է բերել կամ կարող էր ձեռք բերած լինել Օբյեկտի և (կամ) Տեղանքի ուսումնասիրությունից նախքան Պայմանագիր կնքելը: Կապալառուն ընդունում է, որ Պայմանագրի կատարման ընթացքում այդպիսի տվյալների և տեղեկությունների անհամապատասխանությունը չպետք է վերջինիս ազատի Պայմանագրով ստանձնած պարտավորություններից և պատասխանատվությունից Պայմանագրի ընդհանուր գնի այն սահմաններում, որը Պայմանագիրը կնքելիս նախատեսվել է Պայմանագրի ՝ «Պայմանագրի գին» վերտառությամբ 2.1 Ենթահոդվածում:

8.3 Կապալառուն պետք է իր հաշվին և իր միջոցներով ձեռք բերի բոլոր թույլտվությունները, հաստատումները և (կամ) վկայագրերը (լիցենզիաները) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից այն երկրում, որտեղ գտնվում է Օբյեկտը, որոնք պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պահանջում են, որպեսզի Կապալառուն ձեռք բերի իր անունով և որոնք անհրաժեշտ են Պայմանագրի կատարման համար, այդ թվում Կապալառուի անձնակազմի և Ենթակապալառուների համար մուտքի վիզաները և Կապալառուի սարքավորումների և Կառույցի ներմուծման համար անհրաժեշտ թույլտվությունները: Կապալառուն պետք է ձեռքբերի բոլոր այլ թույլտվությունները, հաստատումները և (կամ) վկայագրերը (լիցենզիաները), որոնք ՊԸՊ 9.3 Ենթահոդվածի համաձայն ներառված չեն Պատվիրատուի պարտավորությունների մեջ, բայց որոնք անհրաժեշտ են Պայմանագրի կատարման համար:

8.4 Կապալառուն պետք է գործի այն երկրի օրենսդրությանը համապատասխան, որտեղ գտնվում է Օբյեկտը: Օրենսդրությունը ներառում է նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը և այլ օրենսդրական ակտերը, որոնք կապված են Պայմանագրի ու Կապալառուի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման հետ: Կապալառուն պետք է պաշտպանի և Պատվիրատուին զերծ պահի ցանկացած և բոլոր որևէ բնույթի պատասխանատվությունից, վնասներից, պահանջ-

Պատվիրատու՝

Կապալառու՝

ներից, տույժ ու տուգանքներից և ծախսերից, որոնք կծագեն կամ կբխեն Կապալառուի կամ վերջինիս անձնակազմի, ներառյալ Ենթակապալառուների և վերջիններիս անձնակազմի կողմից այդ օրենսդրությունը խախտելու արդյունքում:

8.5 Ցանկացած Կառույց և ծառայություններ, որոնք կներառվեն կամ կպահանջվեն Օբյեկտի համար և այլ մատակարարումներ, պետք է լինեն այն ծագման, որը նշված է ՊԸՊ 1.16 Ենթահոդվածում (Ծագման երկիրը): Կապալառուի կողմից պահվող ցանկացած Ենթակապալառու պետք է լինի այն երկրից, ինչպես նշված է ՊԸՊ 1.16 Ենթահոդվածում (Ծագման երկիրը):

8.6 Եթե Կապալառուն համատեղ ձեռնարկություն է կամ երկու կամ ավելի անձանցից կազմված կոնսորցիում, ապա բոլոր անձինք Պատվիրատուի առջև կրում են համապարտ պատասխանատվություն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում: Նրանցից մեկը պետք է նշանակվի որպես համատեղ ձեռնարկության կամ կոնսորցումի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման համար համապատասխան իրավասություններով Լիազորված ղեկավար: Համատեղ ձեռնարկության կամ կոնսորցումը չի կարող փոփոխվել: Սույն պահանաջը խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, իսկ համատեղ ձեռնարկության և (կամ) կոնսորցումի անդամների նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Եթե Կապալառուն համատեղ ձեռնարկություն է կամ երկու կամ ավելի անձանցից կազմված կոնսորցիում, ապա պետք է ներկայացվի համատեղ ձեռնարկության կամ կոնսորցիումի մասին համաձայնագիր՝ ստորագրված բոլոր անդամների կողմից: Լիազորված ղեկավար պետք է պատասխանատվություն կրի և ստանա ցուցումներ համատեղ ձեռնարկության/կոնսորցիումի յուրաքանչյուր և բոլոր անդամների կողմից և անունից: Պայմանագրի ամբողջ իրականացումը պետք է կատարվի Լիազորված ղեկավարի հետ և Պայմանագրի շրջանակներում վճարումը համատեղ ձեռնարկության/կոնսորցիումի անունից պետք է ստանա Լիազորված ղեկավարը՝ ըստ լիազորագրով իրեն տրված լիազորության: Պայմանագրի շրջանակներում վճարումը կատարվում է համատեղ ձեռնարկության/կոնսորցիումի լիազորված անդամին:

Պատվիրատու՝

Կապալառու՝

ՀՈԴՎԱԾ (9) Պատվիրատուի պարտականություններ	**9.1** Պատվիրատուի կողմից Պայմանագրի՝ «Տեխնիկական բնութագիրգնման ժամանակացույց» վերտառությամբ Հավելվածի շրջանակներում տրամադրված տեղեկատվությունը և (կամ) տվյալները պետք է համարվեն ճշգրիտ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Պատվիրատուն հստակ կերպով այլ բան է սահմանում: Պատվիրատուի կողմից Պայմանագրի՝ «Աշխատանքների ծավալ և անհրաժեշտ սարքերի, սարքավորումների և նյութերի ցանկեր ըստ Պատվիրատուի կանխատեսումների» վերտառությամբ Հավելվածի շրջանակներում տրամադրվող տեղեկատվությունը և (կամ) տվյալները Կապալառուի համար ունեն ընդամենը կողմնորոշիչ (տեղեկատվական) նշանակություն Պայմանագրի գինը որոշելու հարցում, իսկ Պայմանագրի կատարման ընթացքում առաջացած փաստացի անհամապատասխանությունների հնարավոր ռիսկը, որը Պայմանագիրը կնքելիս արդեն իսկ պետք է ներառված լինի Պայմանագրի գնի մեջ, կրում է Կապալառուն և վերջինս հետագայում իրավունք չունի որևէ լրացուցիչ պահանջ ներկայացնել Պատվիրատուին, որն այդ տեղեկատվության և (կամ) տվյալների անհամապատասխանության հետևանք կարող է լինել: **9.2** Պատվիրատուն պետք է պատասխանատու լինի Տեղանքի իրավական ու ֆիզիկական տիրապետան և մուտքի թույլտվության ձեռք բերման ու տրամադրման համար, պետք է տրամադրի մնացած բոլոր տարածքների տիրապետման ու մուտքի իրավունքները, որոնք կպահանջվեն Պայմանագրի պատշաճ կատարման համար, այդ թվում երրորդ անձի տարածքով անցնելու համար պահանջվող իրավունքը: **9.3** Պատվիրատուն պետք է ձեռք բերի և վճարի բոլոր թույլտվությունները, հաստատումները և (կամ) վկայագրերը (լիցենզիաները) համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից այն երկրում, որտեղ գտնվում է Տեղանքը, որոնք՝ **(a)** պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պահանջում են, որպեսզի Պատվիրատուն ձեռք բերի իր անունով, **(b)** որոնք անհրաժեշտ են Պայմանագրի կատարման համար և որոնք պահանջվում են Պատվիրատուից Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների կատարման համար, և **(c)** որոնք սահմանված կլինեն Պայմանագրով:

Պատվիրատու՝

Կապալառու՝

9.4 Կապալառուի կողմից համապատասխան պահանջ ներկայացնելու դեպքում Պատվիրատուն պետք է գործադրի բոլոր ջանքերը՝ օժանդակելու Կապալառուին ժամանակին, արագ և արդյունավետ կերպով ձեռք բերելու անհրաժեշտ թույլտվությունները, հաստատումները և (կամ) վկայագրերը (լիցենզիաները), որոնք անհրաժեշտ են Պայմանագրի կատարման համար, և որոնք համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պահանջում են, որպեսզի Կապալառուն կա՛մ Ենթակապալառուն, կա՛մ Կապալառուի, կա՛մ Ենթակապալառուի անձնակազմը ձեռք բերեն՝ կախված հանգամանքներից:

9.5 ՊԸՊ 9 Հոդվածի շրջանակներում նախատեսված պարտավորությունների մեջ ներառվող բոլոր ծախսերը պետք է կրի Պատվիրատուն՝ բացառությամբ Երաշխիքային փորձարկումների անցկացման հետ կապված ծախսերի, որոնք կրում է Կապալառուն:

9.6 Այն դեպքում, երբ Պատվիրատուն կխախտի Պայմանագրով ստանձնած իր պարտավորություններից որևէ մեկը, Պայմանագրի գնին կավելան վերջինիս հետևանքով Կապալառուի կողմից հիմնավոր կերպով կրած լրացուցիչ ծախսերը:

9.7 Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից իրականացվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

9.8 Կապալառուի կողմից ՊԸՊ 7.2 Ենթահոդվածում նշված Օբյեկտի Ավարտման ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուից պահանջել վճարելու Պայմանագրի 23.3 Ենթահոդվածով նախատեսված տույժը:

9.9 Պատվիրատուն իրավունք ունի չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, Պայմանագրի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու Պայմանագրի 23.3 Ենթահոդվածով նախատեսված տույժը, ինչպես նաև 23.4 Ենթահոդվածով նախատեսված տուգանքը: Աշխատանքների և սարքավորումների որակի հետ կապված Պատվիրատուի և Կապալառուի միջև անհամաձայնությունների առկայության դեպքում Կողմերից մեկի պահանջով կարող է ներգրավվել անկախ փորձագետ:

Պատվիրատու՝

Կապալառու՝

	9.10 Պատվիրատուն իրավունք ունի, ի լրումն ՊԸՊ 36.2.2 Ենթահոդվածով նախատեսված հիմքերի, միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե՝ **a)** Կապալառուն ժամանակին չի սկսում Օբյեկտում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին Ավարտը դառնում է ակնհայտ անհնար, **b)** Կապալառուն խախտել է ՊԸՊ 7.2 Ենթահոդվածով նախատեսված Օբյեկտի Ավարտման համար նախատեսված ժամկետը, **c)** Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծային փաստաթղթերով սահմանված պահանջներին, **d)** Կապալառուի կողմից խախտվել են ՊԸՊ 9.9 Ենթահոդվածով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները: **9.11** Պատվիրատուն իրավունք ունի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել Թերությունների համար պատասխանատվության (երաշխիքային) ժամկետի ընթացքում: **9.12** Լիազորել այլ անձի՝ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով: **9.13** Մինչև Պատվիրատուի կողմից Օբյեկտն ընդունելը, պահանջել Կապալառուից իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ Պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում:
ԲԱԺԻՆ Գ.	**ՎՃԱՐՈՒՄ**
ՀՈԴՎԱԾ (10) Պայմանագրի գին	**10.1** Պայմանագրի գինը պետք է լինի այնպես, ինչպես նշված է Պայմանագրի՝ «Պայմանագրի գին և վճարման պայմաններ» վերտառությամբ 2.1 Ենթահոդվածում: **10.2** «Պայմանագրի գին և վճարման պայմաններ» վերտառությամբ 2.1 Ենթահոդվածում նախատեսված Պայմանագրի գինը հաստատուն (կայուն) է, որը ենթակա չէ որևէ փոփոխության՝ բացառությամբ Պայմանագրով նախատեսված դեպքերի:

Պատվիրատու՝

Կապալառու՝

ՀՈԴՎԱԾ (11) Վճարման պայմաններ	**11.1** Պայմանագրի գինը պետք է վճարվի այնպես, ինչպես նշված է Պայմանագրի՝ «Պայմանագրի գին և վճարման Պայմաններ» վերտառությամբ 2.1 Ենթահոդվածում և Պայմանագրի՝ «Վճարման պայմաններ և ընթացակարգեր» վերտառությամբ Հավելվածում, որը նկարագրում է վճարման հայտ ներկայացնելու և վճարում իրականացնելու ընթացակարգերը: **11.2** Այն դեպքում, երբ Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուին չի հաջողվում իրականացնել որևէ վճարում համապատասխան վճարման օրը կամ Պայմանագրում սահմանված այլ ժամկետում, ապա Պատվիրատուն պարտավոր է կետանցված օրերի դիմաց վճարման ենթակա գումարից Կապալառուին վճարել տույժ Պայմանագրի՝ «Վճարման պայմաններ և ընթացակարգեր» վերտառությամբ Հավելվածում նշված տոկոսադրույքի չափով՝ մինչև վճարման լրիվ կատարումը: **11.3** Արժույթը և (կամ) արտարժույթը, որով (որոնցով) պետք է իրականացվի Պայմանագրով նախատեսված վճարումները Կապալառուին, պետք է սահմանվի Պայմանագրի՝ «Վճարման պայմաններ և ընթացակարգեր» վերտառությամբ Հավելվածում՝ ելնելով այն ընդհանուր սկզբունքից, որ վճարումները կկատարվեն այն արժույթով կամ արտարժույթով, որով (որոնցով) սահմանված կլինի (կլինեն) Պայմանագրի գինը:
ՀՈԴՎԱԾ (12) Երաշխիքներ	**12.1 <u>Երաշխիքների տրամադրում</u>.** Կապալառուն պետք է Պատվիրատուի անունով տրամադրի ստորև սահմանված երաշխիքները՝ ստորև սահմանված ժամկետով, գումարով, եղանակով և ձևով: **12.2 <u>Կանխավճարի բանկային երաշխիք</u>.** **12.2.1** Կանխավճարի երաշխիքը պետք է տրամադրվի և գործի Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև այն օրը, երբ կանխավճարի ամբողջ գումարը կմարվի Պատվիրատուի կողմից Պայմանագրի շրջանակներում Կապալառուին վճարման ենթակա գումարից: **12.2.2** Կանխավճարի գումարը պետք է մարվի Կապալառուի կողմից կատարված և Պայմանագրի՝ «Վճարման պայմաններ և ընթացակարգեր» վերտառությամբ Հավելվածով սահմանված կարգով և պայմաններով վերջինիս վճարվող գումարներից՝ ինչպես նշված է Պայմանագրում և ինքնաբերաբար կդառնա զրոյական, երբ կանխավճարի ամբողջ գումարը կմարվի Պատվիրատուի կողմից Կապալառուին վճարման ենթակա գումարից:

Պատվիրատու՝ Կապալառու՝

Կանխավճարի երաշխիքը պետք է Կապալառուին վերադարձվի կանխավճարի ամբողջ գումարը մարվելուց հետո 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում:

12.3 <u>Կատարման (Պայմանագրի ապահովման) բանկային երաշխիք</u>.

12.3.1 Կապալառուն պետք է Պատվիրատուին տրամադրի Պայմանագրի Կատարման բանկային երաշխիք՝ Պայմանագրի գնի 10 (տաս) %-ի չափով:

12.3.2 Կատարման երաշխիքը պետք է լինի Պայմանագրով նախատեսված արժույթով կա՛մ արտարժույթով, կա՛մ Պատվիրատուի համար ընդունելի ազատ կոնվերտացվող (փոխարկվող) արտարժույթով:

12.3.3 Կատարման երաշխիքը պետք է վավեր լինի Թերությունների համար պատասխանատվության ժամկետը լրանալուն հաջորդող 20-րդ (քսաներորդ) աշխատանքային օրը ներառյալ: Կատարման երաշխիքը պետք է ուժը կորցնի Թերությունների համար պատասխանատվության ժամկետը լրանալուն հաջորդող 21-րդ (քսանմեկերորդ) աշխատանքային օրը: Կատարման երաշխիքը Կապալառուին պետք է վերադարձվի Թերությունների համար պատասխանատվության ժամկետը լրանալուց հետո 21 (քսանմեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

12.3.4 Այն դեպքում, երբ Օբյեկտի Ավարտման ժամկետը կամ Թերությունների համար պատասխանատվության ժամկետը երկարաձգվել է ՊԸՊ 34 Հոդվածի կամ ՊԸՊ 24.8 և 24.9 Ենթահոդվածների համաձայն, ապա Կապալառուն պետք է երկարաձգի Կատարման երաշխիքն այն նույն գումարի չափով, ձևով ու պայմանով, որը նախատեսված է ՊԸՊ 12.3 Ենթահոդվածում: Կատարման երաշխիքը պետք է Կապալառուին վերադարձվի Թերությունների համար երկարաձգված պատասխանատվության ժամկետը լրանալուց հետո 21 (քսանմեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

Կապալառուի կողմից ՊԸՊ 12.3.4 Ենթահոդվածով ստանձնած պարտավորությունը չկատարելու դեպքում Պատվիրատուին իրավունք ունի ՊԸՊ 12.3.1 Ենթահոդվածում նշված Պայմանագրի գնի 10 (տասը) %-ը գանձել Կատարման երաշխիքից:

12.3.5 Պատվիրատուն իրավունք ունի Կատարման երաշխիքով պահանջ ներկայացնել Կապալառուի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորություններից որևէ մեկի խախտման դեպքում՝ անկախ Պայմանագիրը լուծված լինելու կամ չլինելու հանգամանքից: Պատվիրատուն պետք է զերծ պահի

Պատվիրատու՝

Կապալառու՝

Կապալառուին Կատարման երաշխիքի պահանջի հետևանքով առաջացող բոլոր վնասներից, կորուստներից և ծախսերից այն չափով, որ չափով Պատվիրատուն իրավունք չուներ ներկայացնելու այդպիսի պահանջ:

12.4 <u>Որակավորման ապահովման բանկային երաշխիք</u>.

12.4.1 Կապալառուն պետք է Պատվիրատուին տրամադրի Որակավորման ապահովման երաշխիք Պայմանագրի գնի 30 (երեսուն) %-ի չափով:

12.4.2 Որակավորման երաշխիքը պետք է լինի Պայմանագրով նախատեսված արժույթով կա՛մ արտարժույթով, կա՛մ Պատվիրատուի համար ընդունելի ազատ կոնվերտացվող (փոխարկվող) արտարժույթով: Որակավորման երաշխիքը պետք է լինի Պայմանագրում նշված բանկային երաշխիքի ձևով:

12.4.3 Որակավորման երաշխիքը պետք է վավեր լինի ՊԸՊ 22.3 Ենթահոդվածով սահմանված կարգով Օբյեկտը Շահագործման ընդունելու օրվան հաջորդող 20-րդ (քսաներորդ) աշխատանքային օրը ներառյալ: Որակավորման ապահովման երաշխիքը պետք է ուժը կորցնի ՊԸՊ 22.3 Ենթահոդվածով սահմանված կարգով երկու Օբյեկտը Շահագործման ընդունված լինելու օրվան հաջորդող 21-րդ (քսանմեկերորդ) աշխատանքային օրը: Որակավորման ապահովման երաշխիքը Կապալառուին պետք է վերադարձվի ՊԸՊ 22.3 Ենթահոդվածով սահմանված կարգով Օբյեկտը Շահագործման ընդունված լինելու օրվան հաջորդող 21 (քսանմեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

12.4.4 Այն դեպքում, երբ Ավարտման ժամկետը երկարաձգվել է ՊԸՊ 34 Հոդվածի համաձայն, ապա Կապալառուն պետք է Պատվիրատուին տրամադրի Որակավորման ապահովման լրացուցիչ երաշխիք այն նույն գումարի չափով, ձևով ու պայմանով, որը նախատեսված է ՊԸՊ 12.4 Ենթահոդվածում:

Կապալառուի կողմից ՊԸՊ 12.4.4 Ենթահոդվածով ստանձնած պարտավորությունը չկատարելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և ՊԸՊ 12.4.1 Ենթահոդվածում նշված Պայմանագրի գնի 30 (երեսուն) %-ը գանձել Որակավորման ապահովման երաշխիքից:

12.4.5 Պատվիրատուն իրավունք ունի Որակավորման ապահովման երաշխիքով պահանջ ներկայացնել Կապալառուի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորություններից որևէ մեկի խախտման դեպքում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման: Պատվի-

Պատվիրատու՝

Կապալառու՝

	րատուն պետք է զերծ պահի Կապալառուին Որակավորման ապահովման երաշխիքի պահանջի հետևանքով առաջացող բոլոր վնասներից, կորուստներից և ծախսերից այն չափով, որ չափով որ Պատվիրատուն իրավունք չուներ ներկայացնելու այդպիսի պահանջ:
ՀՈԴՎԱԾ (13) Հարկեր և տուրքեր	**13.1** Օբյեկտի վրա կատարվող աշխատանքի համար Կապալառուի կողմից առաջարկված և Պայմանագրի՝ «Պայմանագրի գին և վճարման պայմաններ» վերտառությամբ 2.1 Ենթահոդվածում նշված Պայմանագրի գինը ներառում է բոլոր հարկերը (ուղղակի և անուղղակի), տուրքերը, պարտադիր վճարներն ու ծախսերը, ակցիզային հարկը, բնապահպանական վճարները՝ բացառությամբ Պատվիրատուի անունով ապրանքների և սարքավորումների մատակարարումների դեպքում առաջացող մաքսազերծման հետ կապված հարկերի ու տուրքերի և այլ վճարների, որոնք ՀՀ պետական բյուջե վճարվելու են Պատվիրատուի կողմից: **13.2** Ի լրումն ՊԸՊ 13.1 Ենթահոդվածի՝ Կապալառուն և Պատվիրատուն պետք է պատասխանատվություն կրեն հարկային պարտավորությունների հետ կապված գումարների հաշվարկման և վճարման համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Եթե Օբյեկտի մեջ ներառվող, այդ թվում ՊԸՊ 6.2 Ենթահոդվածի ուժով ենթադրվող Նյութերը, որոնք տրամադրվելու են Կապալառուի կողմից, այդ թվում Կապալառուի ապրանքները, որոնք սակայն չեն ներառվում Կառույցի մեջ, պետք է Տեղանք փոխադրվեն արտասահմանից, ապա Կապալառուն իրավունք չունի վերջիններս Հայաստանի Հանրապետություն ներմուծել (հայտարարագրել) Պատվիրատուի անունով: Կապալառուի կողմից ՊԸՊ 13.2 Ենթահոդվածի պահանջների խախտմամբ ներկայացված ցանկացած հաշիվ-ապրանքագիր և Կապալառուական ակտ չպետք է ընդունվի Պատվիրատուի կողմից: **13.3** Եթե որևէ հարկային արտոնություններ կարող են հասանելի լինել Կապալառուին այն երկրում, որտեղ Օբյեկտը գտնվում է, ապա Պատվիրատուն պետք է ձեռնարկի հնարավոր միջոցները, որոնք հնարավորություն կտան Կապալառուին առավելագույն չափով օգտվել հարկային այդպիսի արտոնություններից:

Պատվիրատու՝

Կապալառու՝

ԲԱԺԻՆ Հ.	ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀՈԴՎԱԾ (14) Լիցենզիա/տեխ-նիական տեղե-կատվության օգտագործում	**14.1** Եթե նախատեսված է պայմանագրով, ապա Օբյեկտի շահագործման համար Կապալառուն պետք է Պատվիրատուին փոխանցի ոչ բացառիկ և անփոխանցելի լիցենզիա (առանց երրորդ անձանց փոխանցելու իրավունքի)՝ արտոնագրերի, օգտակար մոդելների կամ արդյունաբերական սեփականության այլ իրավունքների համաձայն, որոնք տիրապետում է Կապալառուն կամ երրորդ անձը, որից Կապալառուն ստացել է լիցենզիայի փոխանցման իրավունքը:
ՀՈԴՎԱԾ (15) Տեղեկատվության գաղտնիություն	**15.1** Պատվիրատուն և Կապալառուն պետք է ապահովեն տեղեկատվության գաղտնիությունը և առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության չհրապարակեն (չբացահայտեն) որևէ երրորդ անձանց ցանկացած փաստաթղթի, տվյալների կամ այլ տեղեկատվության մասին, որոնք ուղղակի կամ անուղղակի տրամադրվել են մյուս Կողմի կողմից Պայմանագրի շրջանակներում՝ անկախ նրանից՝ այդպիսի տեղեկատվությունը տրամադրվել է նախքան, ընթացքում, թե Պայմանագրի լուծումից հետո: Կապալառուն կարող է Պայմանագրի շրջանակներում իր պարտավորությունների կատարման նպատակով Ենթակապալառուների կողմից պահանջվող սահմաններում Ենթակապալառուներին տրամադրել Պատվիրատուի կողմից տրամադրվող այդպիսի փաստաթղթեր, տվյալներ կամ այլ տեղեկատվություն: Այդ դեպքում Կապալառուն պետք է այդ Ենթակապալառուներից ստանա գաղտնիության երաշխիք այնպես, ինչպես որ պահանջվում է Կապալառուից ՊԸՊ 15.1 Ենթահոդվածի համաձայն: **15.2** Պատվիրատուն չպետք է Կապալառուի կողմից ստացված այդպիսի փաստաթղթերը, տվյալները և այլ տեղեկատվությունն Օբյեկտի շահագործման և տեխնիկական սպասարկման նպատակից բացի օգտագործի այլ նպատակով: Կապալառուն չպետք է Պատվիրատուի կողմից ստացված այդպիսի փաստաթղթերը, տվյալները և այլ տեղեկատվությունն Օբյեկտի վերակառուցման նպատակից բացի, որոնք պահանջվում են Պայմանագրի կատարման համար, օգտագործի այլ նպատակով: **15.3** ՊԸՊ 15.1 և 15.2 Ենթահոդվածների շրջանակներում Կողմերի պարտականությունները, այնուամենայնիվ, չպետք է կիրառվեն այնպիսի տեղեկատվության նկատմամբ, որը՝ **(a)** տվյալ պահին կամ հետագայում հանրությանը հայտնի է դառնել կամ դառնում ոչ Կողմերից մեկի մեղքով,

Պատվիրատու՝

Կապալառու՝

	(b) կարող է ապացուցվել, որ հրապարակման (բացահայտման) ժամանակ այն արդեն այդ կողմի տիրապետման տակ է եղել և այն նախապես ուղղակի կամ անուղղակի ձեռք չի բերվել մյուս Կողմի կողմից, **(c)** օրենսդրությամբ սահմանված հիմքերով մյուս կողմին հասանելի է դառնում երրորդ անձանց կողմից, որը տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու պարտականություն չի կրում: **15.4** ՊԸՊ 15 Հոդվածի դրույթները որևէ կերպ չպետք է փոփոխեն գաղտնիության ցանկացած երաշխիք, որոնք Օբյեկտի վերաբերյալ տրամադրվել են Կողմերի կողմից մինչև Պայմանագրի կնքման ամսաթիվը: **15.5** ՊԸՊ 15 Հոդվածի դրույթները պետք է իրենց ուժը պահպանեն Պայմանագիրը ցանկացած հիմքով լուծելուց հետո:
ԲԱԺԻՆ I.	**ՕԲՅԵԿՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**
ՀՈԴՎԱԾ (16) Կատարման ծրագիր	**16.1 <u>Կապալառուի կազմակերպումը</u>.** Կապալառուն պետք է Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց որքան հնարավոր է սեղմ ժամկետում Պատվիրատուին տրամադրի աշխատանքի կազմակերպման ժամանակացույց, որը պետք է արտացոլի Կապալառուի կողմից առաջարկվող աշխատանքների կազմակերպումը: **16.2 <u>Կատարման ծրագիր</u>.** Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո **10 (տասը)** օրվա ընթացքում Կապալառուն պետք է Պատվիրատուին ներկայացնի Պատվիրատուի համար ընդունելի ձևով պատրաստված Պայմանագրի կատարման մանրամասն ծրագիրը, որը պետք է արտացոլի Կապալառուի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման համար վերջինիս կողմից առաջարկվող հաջորդականությունը, ինչպես նաև այն ամսաթիվը, մինչև երբ Կապալառուն ողջամտորեն պահանջում է, որ Պատվիրատուն կատարած լինի Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները, որը Կապալառուին հնարավորություն կտա Պայմանագիրը կատարել ծրագրին համապատասխան և Պայմանագրի համաձայն հասնել Օբյեկտի Ավարտման, Շահագործման հանձնման ու Ընդունման: Կապալառուի կողմից այս եղանակով ներկայացված ծրագիրը պետք է համապատասխանի ՊԸՊ 7.2 Ենթահոդվածով նախատեսված Ավարտման ժամկետին: Կապալառուն պետք է թարմացնի և վերանայի ծրագիրը ինչպես և երբ անհրաժեշտ կամ նպատակահարմար է՝ ա-

Պատվիրատու՝

Կապալառու՝

	ռանց ՊԸՊ 7.2 Ենթահոդվածում նշված Օբյեկտի Ավարտման ժամկետի փոփոխման, Օբյեկտի Ավարտման ժամկետի երկարաձգման՝ համաձայն ՊԸՊ 34 Հոդվածի և այդպիսի բոլոր վերանայումները պետք է տրամադրվեն Պատվիրատուին: **16.2 <u>Կատարման առաջընթաց</u>.** Եթե որևէ պահի Կապալառուի կողմից փաստացի կատարման առաջընթացը հետ է ընկնում ՊԸՊ 16.2 Ենթահոդվածում նշված ծրագրից կամ ակնհայտ է դառնում, որ այն հետ է ընկնելու, Կապալառուն պետք է պատրաստի և Պատվիրատուին ներկայացնի ճշտված ծրագիր՝ հաշվի առնելով գերակշռող հանգամանքները և պետք է Պատվիրատուին ծանուցի կատարման առաջընթացն արագացնելու նպատակով ձեռնարկվող քայլերի մասին այնպես, որպեսզի ՊԸՊ 7.2 Ենթահոդվածի համաձայն հնարավոր լինի հասնել Օբյեկտի Ավարտին՝ դուրս չգալով Ավարտման ժամկետի, ՊԸՊ 34.1 Ենթահոդվածի համաձայն որևէ երկարաձգված Ավարտման ժամկետի կամ Պատվիրատուի և Կապալառուի միջև այլ կերպ համաձայնեցված ցանկացած երկարաձգված ժամկետի շրջանակներից:
ՀՈԴՎԱԾ (17) Ենթակապալի պայմանագիր	Կապալառուն աշխատանքներն իրականացնելու է առանց ենթակապալառուների:
ՀՈԴՎԱԾ (18) Ձեռքբերում	**18.1 <u>Կառույց</u>.** Օբյեկտի վրա աշխատանքի կատարման նպատակով Կապալառուն պետք է ՊԸՊ 13 Հոդվածի համաձայն իր ռիսկով, իր հաշվին, իր անունից և իր համար առավել ընդունելի տրանսպորտով դեպքի Տեղանք փոխադրի Պայմանագրի՝ «Աշխատանքների և դրանց համար անհրաժեշտ սարքերի, սարքավորումների և նյութերի ցանկեր՝ ըստ Պատվիրատուի կանխատեսումների» վերտառությամբ Հալվելվածով նախատեսված Կառույցը, այդ թվում ՊԸՊ 6.2 Ենթահոդվածի ուժով ենթադրվող Նյութերը: **18.2 <u>Փոխադրում</u>.** **18.2.1** Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Կապալառուն պետք է Օբյեկտի համար անհրաժեշտ Նյութերի և Կապալառուի սարքավորումների փոխադրման համար ցանկացած անձի կողմից շահագործվող որևէ անվտանգ տրանսպորտի տեսակ ընտրելու իրավունք ունենա:

Պատվիրատու՝

Կապալառու՝

	18.2.2 Օբյեկտի համար անհրաժեշտ բոլոր Նյութերի և Կապալառուի սարքավորումների փոխադրումից հետո Կապալառուն պետք է Պատվիրատուին տելեքսով, հեռագրով, ֆաքսով կամ էլեկտրոնային միջոցներով ծանուցի նյութերի և Կապալառուի սարքավորումների նկարագրության և ժամանման մասին դեպի Տեղանք: **18.2.3** Կապալառուն պետք է կրի Նյութերը և Կապալառուի սարքավորումները Տեղանք փոխադրելու համար իր անունից և իր հաշվին պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից հաստատումներ (թույլտվություններ) ստանալու պարտավորություն, եթե այդպիսիք կպահանջվեն: Պատվիրատուն հնարավորության դեպքում կօժանդակի Կապալառուին այդպիսի հաստատումները (թույլտվությունները) ժամանակին և արագ ստանալու հարցում, եթե Կապալառուն դիմում է այդպիսի խնդրանքով: Կապալառուն պետք է պաշտպանի և Պատվիրատուին զերծ պահի ճանապարհների, կամուրջների կամ որևէ այլ երթևեկության օբյեկտների վնասի հատուցման պահանջներից, որոնք կարող էին պատճառվել Նյութերը և Կապալառուի սարքավորումները Տեղանք փոխադրելու հետևանքով:
ՀՈԴՎԱԾ (19) Տեղակայում/մոնտաժում	**19.1 <u>Տեղակայում և հսկողություն</u>.** **19.1.1** Կապալառուն պետք է պատասխանատվություն կրի Պատվիրատուի կողմից տրամադրված տեխնիկական պահանջների համաձայն Օբյեկտի վրա աշխատանքի պատշաճ կատարման համար: **19.1.2** Կապալառուն պետք է իրականացնի կամ ապահովի անհրաժեշտ հսկողություն Օբյեկտի վրա կատարվող աշխատանքի ընթացքում՝ ապահովելով աշխատանքի նկատմամբ մշտական հսկողություն: Կապալառուն պետք է ապահովի տեխնիկական աշխատողների, ովքեր հմուտ են և փորձառու, ինչպես նաև հսկող անձնակազմ, որն իրավասու է պատշաճ կերպով իրականացնել հսողություն կատարվող աշխատանքի նկատմամբ: **19.2 <u>Աշխատուժ</u>.** **19.2.1 <u>Անձնակազմի և աշխատուժի ներգրավում</u>.** **(a)** Կապալառուն պետք է միջոցներ ձեռնարկի անձնակազմ և աշխատուժ ներգրավելու նպատակով՝ լինի տեղական, թե՝ այլ, ինչպես նաև կազմակերպի վերջիններիս վճարումը, կացարանը, սնունդը և փոխադրումը և այլն:

Պատվիրատու՝

Կապալառու՝

(b) Կապալառուն պետք է Տեղանքում ապահովի և աշխատանքի վերցնի Օբյեկտի վրա կատարվող աշխատանքում հմուտ, որակավորված, աշխատուժ, ինչն անհրաժեշտ է Պայմանագրի պատշաճ և ժամանակին կատարման համար: Կապալառուն խրախուսված է օգտագործելու տեղական աշխատուժը, որը կունենա համապատասխան հմտություն և փորձառնություն:

(c) Կապալառուն պետք է պատասխանատվություն կրի համապատասխան լիազոր մարմիններից ամբողջ աշխատուժի և անձնակազմի մուտքի համար անհրաժեշտ թույլտվություն(ներ) և (կամ) մուտքի արտոնագիր(եր) ձեռք բերելու համար, որոնք պետք է աշխատեն Տեղանքում: Պատվիրատուն պետք է հնարավորության սահմաններում և Կապալառուի խնդրանքի դեպքում գործադրի ջանքեր Կապալառուի անձնակազմը տվյալ երկիր տեղափոխելու համար որևէ թույլտվություն ձեռքբերելուն օժանդակելու նպատակով:

19.2.2 <u>Պատվիրատուի աշխատակիցներ</u>.

Կապալառուն չպետք է վարձի կամ փորձի վարձել անձնակազմ կամ աշխատուժ Պատվիրատուի անձնակազմից:

19.2.3 <u>Աշխատանքային օրենսդրություն</u>.

(a) Կապալառուն պետք է գործի այն աշխատանքային օրենսդրությանը համապատասխան, որը կիրառելի է Կապալառուի անձնակազմի նկատմամբ, ներառյալ այն օրենսդրությանը, որը կապված է նրանց աշխատանքի, առողջության, անվտանգության և սոցիալական ապահովության հետ:

(b) Կապալառուն Պայմանագրի ողջ ընթացքում պետք է իր և Ենթակապալառուների անձնակազմի և ծառայողների կամ նրանց միջև ոչ օրինական վարքագիծը, խռովությունները կամ կարգապահության խախտման դրսևորումները կանխելու նպատակով ձեռնարկի համապատասխան միջոցներ:

19.2.4 <u>Աշխատանքային ժամեր</u>.

(a) Տեղանքում նորմալ աշխատանքային ժամերն են՝ օրական 8 ժամ, շաբաթական 40 ժամ:

(b) Տեղանքում աշխատանքը չպետք է իրականացվի ոչ աշխատանքային կամ նորմավորված աշխատանքային ժամերից դուրս՝ բացառությամբ.

(i) Պայմանագրով սահմանված դեպքերի,

(ii) Պատվիրատուի կողմից տրված համաձայնությամբ,

Պատվիրատու՝

Կապալառու՝

(iii) աշխատանքն անխուսափելի կամ անհրաժեշտ է կյանքի կամ սեփականության պաշտպանության կամ աշխատանքների անվտանգության համար, որի դեպքում Կապալառուն պետք է անմիջապես տեղեկացնի Պատվիրատուին:

(c) Եթե Կապալառուն Ավարտման ժամկետի պահանջը բավարարելու նպատակով անհրաժեշտ է համարում իրականացնել աշխատանքը գիշերային ժամերին և (կամ) ոչ աշխատանքային օրերին և խնդրում է Պատվիրատուի համաձայնությունը, ապա Պատվիրատուն չպետք է անհիմն կերպով հրաժարվի այդպիսի համաձայնություն տալուց:

(d) ՊԸՊ 19.2.4 Ենթահոդվածով նախատեսված սահմանափակումները չի կիրառվում, եթե աշխատանքները սովորաբար կատարվում են հերթափոխով կամ երկու հերթափոխով:

19.2.5 <u>Անվտանգություն</u>.

(a) Կապալառուն պետք է վթարների կանխարգելման նպատակով նշանակի հրահանգիչ Տեղանքում, որը պատասխանատու կլինի անվտանգության պահպանման և պատահարներից պաշտպանության համար: Վերջինս պետք է հրահանգներ տալու լիազորություն ունենա և պատահարները կանխելու նպատակով պետք է ձեռնարկի համապատասխան միջոցառումներ: Պայմանագրի իրականացման ընթացքում Կապալառուն պետք է ապահովի հրահանգչի կողմից պահանջվող այն ամենը, ինչը վերջինիս հնարավորություն կընձեռնի իրականացնել իր պարտավորությունը և լիազորությունները:

(b) Պատահարից անմիջապես հետո Կապալառուն պետք է գործնականում որքան հնարավոր է շուտ Պատվիրատուին տրամադրի պատահարի մանրամասները:

19.2.6 <u>Գործողություններ մահվան դեպքում</u>.

Կապալառուի անձնակազմից կամ նրանց ուղեկցող ընտանիքի անդամներից որևէ մեկի մահվան դեպքում Կապալառուն պետք է պատասխանատվություն կրի վերջիններիս վերադարձի կամ թաղման կապակցությամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու համար, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

Պատվիրատու՝

Կապալառու՝

19.3 <u>Կապալառուի սարքավորումներ</u>.

19.3.1 Կապալառուի կողմից Տեղանք բերված բոլոր սարքավորումները պետք է նախատեսված լինեն օգտագործել բացառապես Պայմանագրի կատարման համար:

19.3.2 Օբյեկտի ավարտից հետո Կապալառուն պետք է հեռացնի Տեղանքից Կապալառուի կողմից Տեղանք բերված բոլոր սարքավորումները և որևէ հավելյալ նյութ, որոնք մնացել են այնտեղ:

19.4 <u>Վթարային աշխատանքներ</u>.

Եթե Պայմանագրի հետ կապված և վերջինիս կատարման ընթացքում որևէ պատճառով ծագել է վթարային իրավիճակ և անհրաժեշտ է կատարել պաշտպանիչ կամ վերականգնողական աշխատանքներ Օբյեկտին պատճառած վնասը կանխելու նպատակով, ապա Կապալառուն պետք է անմիջապես իրականացնի այդ աշխատանքը:

Եթե Կապալառուն ի վիճակի չէ կամ չի ցանկանում անմիջապես իրականացնել այդպիսի աշխատանքներ, ապա Պատվիրատուն կարող է իրականացնել կամ պահանջել իրականացնելու այդպիսի աշխատանքներ, որոնք համարում է անհրաժեշտ Օբյեկտին սպառնացող վտանգը կանխելու համար: Այդ դեպքում Պատվիրատուն պետք է հնարավորինս արագ կերպով այդպիսի վթարային իրավիճակ առաջանալուց հետո գրավոր ձևով ծանուցի Կապալառուին վթարային իրավիճակի, իրականացվող (իրականացված) աշխատանքի և պատճառների մասին: Եթե կատարված աշխատանքը կամ Պատվիրատուի կողմից կատարման համար պահանջված աշխատանքն այնպիսին էր, որ Պայմանագրի համաձայն Կապալառուն պարտավոր էր կատարել իր հաշվին, ապա Կապալառուն պետք է Պատվիրատուին վճարի այդպիսի աշխատանքների հետ կապված վերջինիս կրած հիմնավոր ծախսերը: Հակառակ դեպքում այդ աշխատատանքների ծախսերը պետք է կրի Պատվիրատուն:

19.5 <u>Տեղանքի մաքրում</u>.

19.5.1 Պայմանագրի իրականացման ժամանակ Կապալառուն պետք է Տեղանքը պահի մաքուր վիճակում ոչ անհրաժեշտ նյութերի կուտակումներից և ջարդոններից կամ հեռացնի Տեղանքից ավելորդ նյութերը, աղբը, ջարդոնները կամ ժամանակավոր աշխատանքի մնացորդները, ինչպես նաև հեռացնի Կապալառուի այն սարքավորումները, որոնք այլևս չեն պահանջվում Պայմանագրի կատարման համար:

Պատվիրատու՝ Կապալառու՝

	19.5.2 Օբյեկտն ավարտելուց հետո Կապալառուն պետք է Տեղանքից մաքրի և հեռացնի բոլոր բեկորները, աղբը և ցանկացած տիպի մնացորդները և պետք է Տեղանքն ու Օբյեկտը թողնի մաքուր և անվտանգ վիճակում: **19.6 <u>Հսկում ու լուսավորություն</u>.** Կապալառուն պետք է իր հաշվին ապահովի և պահպանի ամբողջ լուսավորումը, ցանկապատումն ու հսկումը որտեղ և երբ անհարժեշտ է Օբյեկտի պատշաճ կատարման և պաշտպանության համար կամ սեփականատերերի ու վարձատուների և հասարակության անվտանգության նկատառումներով:
ՀՈԴՎԱԾ (20) Փորձարկում և զննում/ստուգում	**20.1** Կապալառուն պետք է իր հաշվին Տեղանքում իրականացնի Կառույցի և (կամ) Օբյեկտի բոլոր փորձարկումները, զննումները/ստուգումները: **20.2** Պատվիրատուն կամ վերջինիս կողմից նշանակված ներկայացուցիչները պետք է իրավունք ունենան մասնակցել վերը նշված փորձարկումներին և (կամ) զննումներին/ստուգումներին, իսկ Կապալառուն, ի լրումն ՊԸՊ 20.1 Ենթահոդածի, պետք է կրի այդ փորձարկումների և (կամ) զննումների/ստուգումների հետ կապված բոլոր ծախսերը: **20.3** Երբ Կապալառուն պատրաստ կլինի իրականացնել այդպիսի փորձարկումներ և (կամ) զննումներ/ստուգումներ, Կապալառուն պետք է Պատվիրատուին փորձարկումներ և (կամ) զննումներ/ստուգումներ անցկացնելուց առնվազն 10 (տասը) օր առաջ կամ այլ ողջամիտ ժամկետում ծանուցի այդպիսի փորձարկումներ և (կամ) զննումներ/ստուգումներ անցկացնելու, ինչպես նաև անցկացման վայրի և ժամանակի մասին: **20.4** Կապալառուն պետք է Պատվիրատուին տրամադրի այդ փորձարկումների և (կամ) զննումների/ստուգումների արդյունքների մասին հաստատված հաշվետվություններ և փորձարկման վկայագիր: Եթե Պատվիրատուին կամ վերջինիս կողմից նշանակված ներկայացուցիչներին չի հաջողվում մասնակցել փորձարկմանը և (կամ) զննմանը/ստուգմանը, կամ եթե Կողմերի միջև համաձայնություն է ձեռք բերվել այն մասին, որ այդպիսի անձինք չպետք է մասնակցեն, ապա Կապալառուն կարող է իրականացնել փորձարկման և (կամ) զննման/ստուգման աշխատանքներն այդ անձանց բացակայությամբ և կարող է Պատվիրատուին տրամադրել արդյունքների մասին հաստատված հաշվետվությունը: **20.5** Պատվիրատուն կարող է Կապալառուից պահանջել իրականացնելու Պայմանագրով չնախատեսված որևէ փորձարկում և (կամ) զննում/ստուգում,

Պատվիրատու՝

Կապալառու՝

	պայմանով՝ այդպիսի փորձարկման և (կամ) զննման/ստուգման իրականացման հետ կապված Կապալառուի կրած ողջամիտ վճարներն ու ծախսերը պետք է ավելացվեն Պայմանագրի գնին: Բացի դրանից, եթե այդպիսի փորձարկումը և (կամ) զննումը/ստուգումը խոչընդոտում է Օբյեկտի վրա կատարվող աշխատանքի առաջընթացին և (կամ) Կապալառուի՝ Պայմանագրով ստանձնած այլ պարտավորությունների կատարմանը, ապա պետք է անհրաժեշտ ուշադրություն դարձնել Ավարտման ժամկետին և այդ կերպ առնչվող այլ պարտավորություններին: **20.6** Եթե որևէ Կառույցի և (կամ) Օբյեկտի փորձարկում և (կամ) զննում/ստուգում չի կատարվում (ձախողվում է), ապա Կապալառուն պետք է այդ Կառույցը և (կամ) Օբյեկտը ստուգի կամ փոխարինի և ՊԸՊ 20.3 Ենթահոդվածին համապատասխան ծանուցում ուղարկելուց հետո կրկնի փորձարկումը և (կամ) ստուգումը: **20.7** Եթե որևէ Կառույցի և (կամ) Օբյեկտի փորձարկման և (կամ) զննման/ստուգման հետ կապված որևէ վեճ կամ տարրակարծություն է առաջանում Կողմերի միջև, որը սկսան չի կարող Կողմերի կողմից կարգավորվել ողջամիտ ժամկետի ընթացքում, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դիմել Դատարան: **20.8** Կապալառուն համաձայնում է, որ որևէ Կառույցի և (կամ) Օբյեկտի փորձարկման և (կամ) զննման/ստուգման անցկացումը, Պատվիրատուի կամ վերջինիս կողմից նշանակված ներկայացուցիչների մասնակցությունը և ՊԸՊ 20.4 Ենթահոդվածի համաձայն փորձարկումների և (կամ) զննումների/ստուգումների արդյունքների մասին հաստատված հաշվետվությունները, այդ թվում փորձարկումների վկայագրի տրամադրումը չպետք է Կապալառուին ազատեն Պայմանագրով ստանձնած որևէ պարտավորությունից և (կամ) պատասխանատվությունից:
ՀՈԴՎԱԾ (21) Օբյեկտի ավարտ	**21.1** <u>**Օբյեկտի ավարտ**</u>. **21.1.1** Երբ ՊԸՊ 1.12 Ենթահոդվածում նկարագրված Օբյեկտը գործառնորեն և կառուցվածքորեն ավարտված է, բերված է կոկիկ և մաքուր վիճակում՝ ինչպես սահմանված է Պատվիրատուի պահանջներում, ապա Կապալառուն պետք է այդ մասին գրավոր ծանուցի Պատվիրատուին: **21.1.2** Կապալառու պետք է իր հաշվին տրամադրի բոլոր հումքերը, քսուկները, այլ նյութերն ու կառույցները, որոնք անհրաժեշտ են շահագործման

Պատվիրատու՝

Կապալառու՝

հանձնման համար: Կապալառուն պետք է տրամադրի շահագործման հանձնող թիմ:

21.1.3 Ի լրումն ՊԸՊ 21.1.1 և 21.1.2 Ենթահոդվածների՝ Կապալառուն պետք է Օբյեկտը Շահագործման հանձնելու նպատակով սկսի Օբյեկտի հանձնման-ընդունման աշխատանքները:

21.1.4 Օբյեկտն ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ:

Օբյեկտը Պատվիրատուին հանձնելու փաստն արձանագրվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Երբ ՊԸՊ 21.1 Ենթահոդվածով նախատեսված պահանջների պահպանմամբ Օբյեկտի հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտվեն և Օբյեկտը պատրաստ լինեն Շահագործման հանձնման համար, Կապալառուն պետք է այդ մասին գրավոր ծանուցի Պատվիրատուին ղեկավարին:

21.1.5 Կապալառուն Պատվիրատուին տրամադրում է իր կողմից ստորագրված՝ Օբյեկտը Պատվիրատուին հանձնելու փաստն արձանագրող փաստաթուղթը (Պայմանագրի Հավելված 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Պայմանագրի Հավելված 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերվում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Ի լրումն ՊԸՊ 21.1.5 Ենթահոդվածի 1-ին պարբերության՝ Կապալառուի կողմից Օբյեկտը Պատվիրատուին հանձնելու փաստն արձանագրող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալուց հետո 14 (տասնչորս) օրվա ընթացքում Պատվիրատուն ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված Օբյեկտի հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը և Օբյեկտի

Ավարտման վկայականը՝ նշելով, որ Օբյեկտը հասել է Ավարտման Կապալառուի կողմից ՊԸՊ 21.1.1 Ենթահոդվածի համաձայն ծանուցման ամսաթվի դրությամբ:

Եթե Օբյեկտը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և ՊԸՊ 21.1.5 Ենթահոդվածի երկրորդ պաբերությունում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Այդ դեպքում Կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է Պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

ՊԸՊ 21.1.5 Ենթահոդվածի երրորդ պարբերության կիրառման դեպքում համարվում է, որ Կապալառուն չի հասել Օբյեկտի Ավարտման, իսկ Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Եթե Պատվիրատուն էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը, ապա Կապալառուն պետք է ավարտի Օբյեկտը և պետք է կրկնի ՊԸՊ 21.1 Ենթահոդվածում նկարագրված ընթացակարգը:

Եթե ՊԸՊ 21.1.5 Ենթահոդվածի երկրորդ պարբերությունում նշված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում Օբյեկտը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա Օբյեկտը համարվում է ընդունված և ՊԸՊ 21.1.5 Ենթահոդվածի երկրորդ պարբերությունում նշված ժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և Օբյեկտի Ավարտման Վկայականը:

21.1.6 Եթե Պատվիրատուին չի հաջողվում ՊԸՊ 21.1.5 Ենթահոդվածի երկրորդ պարբերությունում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ վերադարձնել հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած

բացասական եզրակացությունը կամ եթե Պատվիրատուն օգտագործում է Օբյեկտը, ապա Օբյեկտը պետք է համարվի, որ հասել է Ավարտման ՊԸՊ 21.1.1 Ենթահոդվածի համաձայն Կապալառուի կողմից ծանուցումը ստանալու կամ Պատվիրատուի կողմից Օբյեկտի օգտագործման ամսաթվից սկսած:

21.1.7 Եթե ՊԸՊ 21.1.5 Ենթահոդվածի երկրորդ պաբերությունում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը, իսկ Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը ստանալուց հետո չի ձեռնարկում Օբյեկտի Ավարտման համար անհրաժեշտ միջոցներ, ապա Պատվիրատուն կարող է անձամբ իրականացնել Օբյեկտի Ավարտումը և կատարած ծախսերը պահել Կապալառուին վճարման ենթակա ցանկացած գումարներից:

21.1.8 Օբյեկտի Ավարտից հետո Պատվիրատուն պետք է պատասխանատվություն կրի ամբողջ Օբյեկտի խնամքի և պահպանման համար՝ Օբյեկտի ռիսկի, պատահական կորուստի կամ վնասվածքի հետ միասին:

21.1.9 Օբյեկտի ավարտման փաստով Կապալառուի կողմից պատրաստվում և Պատվիրատուի հաստատմանը ներկայացվում է հանձնման-ընդունման ակտ (այսուհետ՝ նաև ակտ), որում առնվազն ներկայացված լինի հետևյալ տեղեկատվությունը և որին կից պետք է ներկայացվեն ստորև նշված փաստաթղթերը:

Ակտում առնվազն պետք է նշված լինի Պայմանագրի անվանումը և համարը, կառույցի նկարագրությունը, կատարված աշխատանքի միավորը, քանակները, միավոր գները և ընդհանուր գումարը:

Ակտին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը կարող է փոփոխվել: Սույն մասով նշված փաստաթղթերի քանակը վերջնական չէ և աշխատանքների անհրաժեշտությունից ելնելով՝ այն ենթակա է փոփոխության:

Աշխատանքների ընդունման դեպքում Կապալառուն ակտին կից պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- աշխատանքի կատարման ընթացքում օգտագործված Կառույցի բացվածքը,
- Կառույցի ծագման վկայականը,
- Կառույցի համար Կապալառուի երաշխիքի վկայականները,

Պատվիրատու՝

Կապալառու՝

	• Կառույցի համապատասխանության վկայականը (բնօրինակները կամ հաստատված պատճենները), • Տեղանքում իրականացված փորձարկումների և (կամ) ստուգումների/զննումների արձանագրությունները, • այլ (ըստ պահանջի):
ՀՈԴՎԱԾ (22) Օբյեկտի Շահագործման հանձնում և Շահագործման ընդունում	**22.1 <u>Օբյեկտի Շահագործման հանձնում</u>.** **22.1.1** Կապալառուի կողմից Օբյեկտի Շահագործման հանձնումը պետք է սկսվի ՊԸՊ 21.1.5 Ենթահոդվածի համաձայն Պատվիրատուի կողմից Օբյեկտի հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը և Օբյեկտի Ավարտման Վկայականը տրամադրելուց անմիջապես հետո կամ ՊԸՊ 21.1.6 Ենթահոդվածի համաձայն ենթադրվող Ավարտից անմիջապես հետո: **22.1.2** Կապալառուն իր հաշվին պետք է տրամադրի բոլոր հումքը, քսուկները, այլ նյութերն ու կառույցները, որոնք անհրաժեշտ են Օբյեկտի Շահագործման հանձնման համար: Կապալառուն պետք է տրամադրի շահագործման հանձնող թիմ, ինչն անհրաժեշտ է Օբյեկտի Շահագործման հանձնման աշխատանքները պատշաճ կերպով իրականացնելու համար: **22.1.3** Պայմանագրի պահանջների համաձայն Կապալառուի և Պատվիրատուի անձնակազմը պետք է մասնակցի Օբյեկտի Շահագործման հանձնմանը, ներառյալ Օբյեկտի Երաշխիքային փորձարկմանը: **22.2 <u>Օբյեկտի Երաշխիքային փորձարկում.</u>** **22.2.1** Օբյեկտի Երաշխիքային փորձարկումը և վերջիններիս կրկնումները պետք է կատարվեն Կապալառուի կողմից Օբյեկտի Շահագործման հանձնման ընթացքում, որպեսզի հավաստիանան, որ Օբյեկտը համապատասխանում է Պայմանագրի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» վերտառությամբ Հավելվածում սահմանված պահանջներին: Պատվիրատուն պետք է անմիջապես Կապալառուին տրամադրի այնպիսի տեղեկատվություն, որը Կապալառուն կարող է ողջամտորեն պահանջել Երաշխիքային փորձարկման անցկացման, արդյունքների և վերջիններիս կրկնման համար: **22.2.2** Եթե Կապալառուին չվերագրվող պատճառներով Օբյեկտի Երաշխիքային փորձարկումը չի կարող հաջողությամբ ավարտվել Օբյեկտի Ավարտման ամսաթվից հետո 60 (վաթսուն) օրվա ընթացքում կամ Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված որևէ այլ ժամկետում, այդ դեպքում

Պատվիրատու՝ Կապալառու՝

պետք է համարվի, որ Կապալառուն կատարել է Երաշխիքային փորձարկումների հետ կապված իր պարտավորությունները:

22.3 <u>Օբյեկտի Շահագործման Ընդունում</u>.

22.3.1 Օբյեկտի Շահագործման Ընդունումը պետք է կատարվի Օբյեկտի նկատմամբ, երբ՝

(a) Օբյեկտի Երաշխիքային փորձարկումը հաջողությամբ ավարտվել է կամ

(b) Օբյեկտի Երաշխիքային փորձարկումը հաջողությամբ չի ավարտվել կամ չի իրականացվել Կապալառուին չվերագրվող պատճառներով Օբյեկտի Ավարտման ամսաթվից հետո 60 (վաթսուն) օրվա ընթացքում կամ ՊԸՊ 22.2.2 Ենթահոդվածի համաձայն Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված որևէ այլ ժամկետում, կամ

(c) ՊԸՊ 21.1.7 Ենթահոդվածի համաձայն Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը ստանալուց հետո չի ձեռնարկել Օբյեկտի Ավարտման համար անհրաժեշտ միջոցներ, իսկ Պատվիրատուն անձամբ իրականացրնել է Օբյեկտի Ավարտը:

22.3.2 ՊԸՊ 22.3.1 Ենթահոդվածում նշված իրադարձություններից որևէ մեկը վրա հասնելուց հետո ցանկացած ժամանակ Կապալառուն կարող է գրավոր ծանուցել Պատվիրատուին՝ պահանջելով Օբյեկտի վերաբերյալ այդ ծանուցման ամսաթվի դրությամբ տրամադրել Օբյեկտի Շահագործման Ընդունման Վկայականը:

22.3.3 Պատվիրատուն Կապալառուի կողմից ծանուցումը ստանալուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում պետք է Կապալառուին տրամադրի Օբյեկտի և Շահագործման Ընդունման Վկայական:

22.3.4 Եթե Կապալառուի կողմից ծանուցումը ստանալուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում Պատվիրատուին չի հաջողվում տրամադրել Օբյեկտի Շահագործման Ընդունման Վկայականը կամ չի հաջողվում Կապալառուին գրավոր տեղեկացնել Օբյեկտի Շահագործման Ընդունման Վկայականը չտրամադրելու հիմնավոր պատճառների մասին, ապա Օբյեկտը Կապալառուի կողմից տրված ծանուցման ամսաթվի դրությամբ պետք է դիտվեն որպես Պատվիրատուի կողմից ընդունված:

ԲԱԺԻՆ Յ.	ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՈԴՎԱԾ (23) Ավարտման ժամկետի երաշխիք	**23.1** Կապալառուն երաշխավորում է, որ Օբյեկտի Ավարտման, որի համար ՊԸՊ 7.2 Ենթահոդվածով նախատեսված է Ավարտման ժամկետ, հասնելու է ավարտման ժամկետի ընթացքում կամ այդպիսի երկարաձգված ժամկետում, որը Կապալառուին տրված կլինի ՊԸՊ 34 Հոդվածի շրջանակներում: **23.2** Եթե Կապալառուին չի հաջողվում հասնել Օբյեկտի ավարտման Ավարտման ժամկետի և (կամ) ՊԸՊ 34 Հոդվածի շրջանակներում Ավարտման ժամկետի երկարաձգման ընթացքում, ապա Կապալառուն պետք է Պատվիրատուին վճարի տույժ ու տուգանքներ ստորև սահմանված կարգով և պայմաններով: Այն դեպքում, երբ Կապալառուն կխախտի ՊԸՊ 7.2 և 23.1 Ենթհոդվածների պահանջները, Պատվիրատուն կարող է դիտարկել Պայմանագրի լուծման հարցը ՊԸՊ 37.2.2 Ենթահոդվածի համաձայն: **23.3** ՊԸՊ 7.2 Ենթահոդվածով նախատեսված Օբյեկտի Ավարտման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուն պետք է յուրաքանչյուր կետանցված օրվա դիմաց Պատվիրատուին վճարի տույժ՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.2 տոկոսի չափով: **23.4** ՊԸՊ 9.9 Ենթահոդվածով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Օբյեկտը չընդունվելու, ինչպես նաև ՊԸՊ 9.10 Ենթահոդվածով նախատեսված կարգով Պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ամբողջ գնի 5 տոկոսի չափով: **23.5** ՊԸՊ 23.3 և 23.4 Ենթահոդվածներով նախատեսված տույժը և տուգանքը Պատվիրատուի հայեցողությամբ կարող են հաշվարկել և հաշվանցվել են ինչպես Կապալառուին Պայմանագրի շրջանակներում վճարման ենթակա գումարներից, այնպես էլ կարող են գանձվել ՊԸՊ 12.3 և 12.4 Ենթահոդվածներով նախատեսված երաշիքներից: **23.6** Կապալառուի կողմից ՊԸՊ 23.3 և 23.4 Ենթահոդվածներով նախատեսված տույժերի և (կամ) տուգանքների վճարումը Կապալառուին չեն ազատում Օբյեկտի Ավարտման պարտավորությունից կամ Պայմանագրի շրջանակներում որևէ այլ պարտավորություններից կամ պատասխանատվությունից:

Պատվիրատու՝

Կապալառու՝

	23.7 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կապալառուն իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: **23.8** Եթե Կապալառուն հասնում է Օբյեկտի ավարտման նախքան Օբյեկտի Ավարտման ժամկետը կամ նախքան ՊԸՊ 34 Հոդվածի համաձայն երկարաձգված ժամկետը, ապա Պատվիրատուն Կապալառուին որևէ հավելավճար վճարելու պարտականություն չի կրում:
ՀՈԴՎԱԾ (24) Թերությունների համար պատասխանատվություն	**24.1** Կապալառուն երաշխավորում է, որ Օբյեկտը չպետք է ունենա թերություններ Կառույցի ու որակի մեջ և իրականացված աշխատանքում: **24.2** Թերությունների համար պատասխանատվության (երաշխիքային) ժամկետը պետք է լինի Օբյեկտն Շահագործման Ընդունելու, ինչպես նկարագրված է ՊԸՊ 22.3 Ենթահոդվածում, օրվանից հաշված 365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր: Եթե Թերությունների համար պատասխանատվության ժամկետի ընթացքում որևէ թերություն է ի հայտ գալիս իրականացված աշխատանքում, ապա Կապալառուն պետք է անմիջապես Պատվիրատուի հետ խորհրդակցելով և նրա հետ համաձայնեցնելով՝ իր հաշվին և իր միջոցներով վերացնի թերությունները, վերանորոգի, փոխարինի կամ այլ կերպ բերի սարքին վիճակի: Կապալառուն չպետք է պատասխանատվություն կրի Օբյեկտի վերանորոգման, փոխարինման, որևէ թերության վերացման կամ վնասի համար, որոնք ծագել կամ տեղի են ունեցել ստորև նշված պատճառների որևէ մեկի հետևանքով՝ **(a)** Պատվիրատուի կողմից Օբյեկտի ոչ ճիշտ շահագործում, **(b)** Օբյեկտի շահագործում տեխնիկական պայմաններից դուրս, այդ թվում՝ էլեկտրական ցանցերում տատանումներ, խափանումներ կամ **(c)** բնական մաշվածություն: **24.3** ՊԸՊ 24 Հոդվածով նախատեսված Կապալառուի պարտավորությունները չպետք է կիրառվեն՝ **(a)** տեխնիկական պայմանների կամ այլ տվյալների նկատմամբ, որոնք տրամադրվել կամ սահմանվել են Պատվիրատուի կողմից կամ նրա անունից, կամ որևէ այլ խնդիրների նկատմամբ, որոնք չեն վերագրվում Կապալառուին, **(b)** Պատվիրատուի կողմից կամ նրա անունից տրամադրված որևէ նյութ կամ կատարված որևէ աշխատանք՝ բացառությամբ ՊԸՊ 24.7 Ենթահոդվածի համաձայն կատարված աշխատանքի:

Պատվիրատու՝ Կապալառու՝

24.4 Պատվիրատուն պետք է գրավոր ծանուցի Կապալառուին՝ նշելով որևէ այդպիսի թերության բնույթը, վերջինիս վերաբերյալ առկա ապացույցները, որոնք անմիջապես հետևել են հայտնաբերմանը: Պատվիրատուն պետք է Կապալառուին տրամադրի որևէ այդպիսի թերություն հետազոտելու համար ողջամիտ հնարավորություն:

24.5 Պատվիրատուն պետք է Կապալառուին տրամադրի Տեղանք և Օբյեկտ մուտք գործելու բոլոր անհրաժեշտ թույլտվությունները, որոնք Կապալառուին հնարավորություն կտան կատարել իր պարտականությունները ՊԸՊ 24 Հոդվածի շրջանակներում:

Կապալառուն կարող է Պատվիրատուի համաձայնությամբ Տեղանքից հեռացնել ցանկացած անսարք կամ վնասված Կառույց կամ Օբյեկտի որևէ մաս, եթե Օբյեկտի անսարքության բնույթը և (կամ) որևէ վնասվածքն այնպիսին է, որ Տեղանքում արագ վերանորոգման ենթակա չէ:

24.6 Եթե վերանորոգումը, փոխարինումը կամ շտկումը կրում է այնպիսի բնույթ, որը կարող է ազդել Օբյեկտի արդյունավետության վրա, Պատվիրատուն կարող է Կապալառուին գրավոր ծանուցել և պահանջել վերանորոգման աշխատանքների ավարտից անմիջապես հետո իրականացնել Օբյեկտի անսարք կամ վնասված մասերի փորձարկումներ, որից հետո Կապալառուն պետք է իրականացնի այդ փորձարկումները:

Եթե այդպիսի մասի փորձարկումները չեն իրականացվում, ապա Կապալառուն պետք է կատարի հետագա վերանորոգումը, փոխարինումը կամ սարքին վիճակի բերելը, մինչև որ Օբյեկտի այդ մասն այդպիսի փորձարկումներ չանցնեն: Փորձարկումները պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի և Կապալառուի միջև:

24.7 Եթե Կապալառուին չի հաջողվում ողջամիտ ժամկետի ընթացքում (որը, սակայն, ոչ մի դեպքում չպետք է 15 (տասնհինգ) օրից պակաս լինի) ձեռնամուխ լինել իրականացված աշխատանքում անսարքությունը կամ վնասվածքը, թերությունը վերացնելու համար անհրաժեշտ աշխատանքներին, ապա Պատվիրատուն կարող է Կապալառուին գրավոր ծանուցելուց հետո ձեռնամուխ լինել այդպիսի աշխատանքների կատարմանը, իսկ վերջինիս հետ կապված Պատվիրատուի կողմից կրած ծախսերը պետք է Պատվիրատուին վճարվեն Կապալառուի կողմից կամ Պատվիրատուի կողմից կարող են պահվել ինչպես Կապալառուին Պայմանագրի շրջանակներում վճարման ենթակա

	որևէ գումարից, այնպես էլ կարող են գանձվել Պայմանագրի շրջանակներում Կապալառուի կողմից տրված Կատարման երաշխիքից: **24.8** Եթե Օբյեկտը չի կարող օգտագործվել թերության և (կամ) այդ թերության վերացման պատճառով, ապա Օբյեկտի Թերությունների համար պատասխանատվության ժամկետը պետք է երկարաձգվի այնքան ժամկետով, որի ընթացքում վերը նշված որևէ պատճառներով Պատվիրատուն չի կարողացել օգտագործել Օբյեկտը: **24.9** Եթե թերությունների վերացման ժամկետի ընթացքում իրականացված աշխատանքում ի հայտ է գալիս ցանկացած տեսակի որակական թերություն և այդ թերությունը, ինչպես նաև դրա հետևանքով Օբյեկտին պատճառած ցանկացած վնասը պետք է վերացվի, վերանորոգվի, փոխարինվի Կապալառուի հաշվին և իր միջոցներով, ապա Օբյեկտի Թերությունների համար պատասխանատվության (երաշխիքային) ժամկետը պետք է երկարաձգվի թերությունների վերացման օրվանից սկսած 12 (տասներկու) ամիս ժամանակահատվածով: Կապալառուի երաշխիքը գործում է իր կողմից տրամադրված և փոխարինված սարքավորումների ու կատարված աշխատանքների նկատմամբ:
ՀՈԴՎԱԾ (25) Պատասխանատվության սահմանափակում	**25.1** Բացի ՊԸՊ 23.3 և 23.4 Ենթահոդվածներով նախատեսված տույժ ու տուգանքից, որոնք ենթակա են վճարման ՊԸՊ 23 Հոդվածով սահմանված դեպքերում, կարգով և պայմաններով, եթե Կապալառուին չի հաջողվում ՊԸՊ 7.2 Ենթահոդվածով սահմանված ժամկետում հասնել Օբյեկտի Ավարտման կամ Պայմանագրով ստանձնած իր այլ պարտավորությունները չի կատարում կամ կատարում է ոչ պատշաճ, ապա Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուից պահանջել վճարելու իրեն պատճառված վնասը, այդ թվում նաև բաց թողնված օգուտը՝ տույժով և տուգանքով չծածկված մասով: **25.2** Ի լրումն ՊԸՊ 25.1 Ենթահոդվածի՝ Կապալառուն կրում է անկախ մեղքից պատասխանատվություն: Պատվիրատուի առջև Կապալառուի պատասխանատվությունը ներառում է՝ լինի դա Պայմանագրով նախատեսված իրավախախտում, թե՝ արտապայմանագրային պարտավորություն, անուղղակի կամ կողմնակի կորուստ, վնաս, օգտագործման կորուստ, արտադրական կորուստ, բաց թողնված օգուտ, տոկոսային կորուստ:

Պատվիրատու՝

Կապալառու՝

	Կապալառուի ամբողջական պատասխանատվությունը՝ լինի դա Պայմանագրով նախատեսված իրավախախտում, թե՝ արտապայմանագրային պարտավորություն, չպետք է գերազանցի Պայմանագրի ընդհանուր գնի հնգապատիկը:
ԲԱԺԻՆ Կ.	**ՌԻՍԿԻ ԲԱՇԽՈՒՄ**
ՀՈԴՎԱԾ (26) Սեփականության իրավունքի փոանցում	**26.1** Օբյեկտի համար անհրաժեշտ Կառույցի նկատմամբ, որը պետք է Կապալառուի անունից և վերջինիս հաշվին տեղափոխվի Տեղանք, սեփականության իրավունքը պետք է Պատվիրատուին փոխանցվի Օբյեկտի Ավարտման ամսաթվին՝ ինչպես նկարագրված է 21 Հոդվածում, բացառությամբ Պատվիրատուի անունով մատակարարված սարքավորումների: **26.2** Կապալառուի ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքը, որը Պայմանագրի նպատակներից ելնելով օգտագործվում է Կապալառուի և Ենթակապալառուների կողմից, պահպանվում է Կապալառուի և Ենթակապալառուի համար: **26.3** Ցանկացած Կառույց, բացի Օբյեկտի համար պահանջվողներից, պետք է վերադարձվի Կապալառուին Օբյեկտի Ավարտից հետո կամ ավելի վաղ, երբ Պատվիրատուն և Կապալառուն համաձայնեն, որ դիտարկվող Կառույցն այլևս չի պահանջվում Օբյեկտի համար:
ՀՈԴՎԱԾ (27) Օբյեկտի պահպանություն	**27.1** Կապալառուն պետք է պատասխանատվություն կրի Օբյեկտի խնամքի ու պահպանության համար մինչև Օբյեկտի Ավարտման ամսաթիվը՝ ինչպես նկարագրված է ՊԸՊ 21 Հոդվածում և պետք է իր հաշվին հատուցի ցանկացած կորուստ կամ վնասվածք, որը կարող է որևէ պատճառով տեղի ունենալ Օբյեկտի հետ ՊԸՊ 7.2 Ենթահոդվածով նախատեսված Օբյեկտի Ավարտման ժամկետի ընթացքում: Կապալառուն պետք է ՊԸՊ 24 Հոդվածի համաձայն նաև պատասխանատվություն կրի Կապալառուի կամ Ենթակապալառուների կողմից որևէ աշխատանքի կատարման ընթացքում Օբյեկտի որևէ կորստի կամ վնասվածքի համար: Անկախ վերոգրյալից՝ Կապալառուն չպետք է պատասխանատվություն կրի ՊԸՊ 27.2 Ենթահոդվածի (a), (b) և (c) պարբերություններում և ՊԸՊ 32.1 Ենթահոդվածում նշված դեպքերից որևէ մեկից բխող պատճառով Օբյեկտի կորստի կամ վնասվածքի համար:

Պատվիրատու՝

Կապալառու՝

27.2 Եթե տեղի է ունենում Օբեյկտի կամ Կապալառուի ժամանակավոր օբյեկտների որևէ կորուստ կամ վնասվածք հետևյալ պատճառներով՝

(a) այնքանով, որքանով վերաբերում են այն երկրին, որտեղ գտնվում է Տեղանքը, միջուկային ռեակցիան, միջուկային ճառագայթումը, ռադիոակտիվ աղտոտվածությունը, օդանավի կամ այլ օդային օբյեկտների պատճառով առաջացած ճնշման ալիքը կամ որևէ այլ պատահարներ, որոնք փորձառու Կապալառուն չէր կարող ողջամտորեն կանխատեսել կամ ողջամտորեն կանխատեսելին չի կարելի ողջամտորեն ամրագրել այնքանով, որքանով այդպիսի ռիսկերը սովորաբար չեն ապահովագրվում ապահովագրական շուկայում և նշվում են ապահովագրական քաղաքականության ընդհանուր բացառություններում՝ ներառյալ պատերազմի ռիսկերը և քաղաքական ռիսկերը,

(b) Պատվիրատուի կամ երրորդ կողմի կողմից որևէ օգտագործում կամ զբաղեցում (օկուպացիա)՝ բացառությամբ Օբյեկտի համար Պատվիրատուի կողմից լիազորված Ենթակապալառուի, կամ

(c) Պատվիրատուի կողմից կամ նրա անունից տրամադրած տվյալների կամ մասնագրի որևէ օգտագործում կամ կիրառում կամ էլ ցանկացած այնպիսի խնդիր, որի համար Կապալառուն Պայմանագրով չի ստանձնել պատասխանատվություն,

Պատվիրատուն պետք է Կապալառուին վճարի կատարված Օբյեկտի համար վճարման ենթակա գումարները: Եթե Պատվիրատուն գրավոր խնդրում է վերականգնել Օբյեկտի կորուստը կամ վնասվածքը, ապա ՊԸՊ 33 Հոդվածի համաձայն Կապալառուն պետք է Պատվիրատուի հաշվին վերականգնի կորուստը և վնասվածքը: Եթե Պատվիրատուն գրավոր չի խնդրում վերականգնել այդ կերպ տեղի ունեցած Օբյեկտի կորուստը կամ վնասվածքը, ապա Պատվիրատուն պետք է ՊԸՊ 33 Հոդվածի համաձայն պահանջի փոփոխություն՝ բացառությամբ Օբյեկտի այն մասի կատարման, որն այդ կերպ կորսվել, քանդվել կամ վնասվել է, կամ երբ այդ կորուստը կամ վնասվածքը ազդում է Օբյեկտի զգալի մասի վրա, ապա Պատվիրատուն պետք է Պայմանագիրը լուծի ՊԸՊ 36.1 Ենթահոդվածի համաձայն:

27.3 Կապալառուն պետք է պատասխանատվություն կրի վերջինիս ցանկացած սարքավորման կամ ցանկացած այլ գույքի որևէ կորստի կամ վնասվածքի համար, որն օգտագործվում է կամ ենթակա է օգտագործման Օբյեկտի համար՝ բացառությամբ **(i)** ինչպես նշված է ԸՊՊ 27.2 Ենթահոդվածում՝ Կապալառուի ժամանակավոր օբյեկտների համար, **(ii)** որտեղ այդպիսի կո-

	րուստը կամ վնասվածքը ծագում է ԸՊՊ 27.2 Ենթահոդվածի (b) և (c) պարբերություններում և ՊԸՊ 32.1 Ենթահոդվածում նշված պատճառներից կամ հանգամանքներից մեկի արդյունքում: **27.4** Օբյեկտի կամ Կապալառուի սարքավորումների հետ ՊԸՊ 32.1 Ենթահոդվածում նշված պատճառներից կամ հանգամանքներից մեկով տեղի ունեցած որևէ կորստի կամ վնասվածքի դեպքում պետք է կիրառվեն ՊԸՊ 32.3 Ենթահոդվածի դրույթները:
ՀՈԴՎԱԾ (28) Գույքի կորուստ կամ վնասվածք, աշխատողների դժբախտ պատահար և վնասվածք, փոխհատուցում	**28.1** ՊԸՊ 28.3 Ենթահոդվածի համաձայն Կապալառուն պետք է ապահովի և Պատվիրատուին, վերջինիս աշխատողներին ու ծառայողներին զերծ և անվնաս պահի որևէ և ցանկացած բնույթի գանգատարկումներից (հայց, բողոք, դիմում և այլն), գործողություններից կամ վարչական գործընթացներից, ցանկացած բնույթի պահանջներից, կորուստներից, վնասներից, ծախսերից, այդ թվում որևէ անձի մահվան կամ վնասվածքի կամ որևէ գույքի կորստի կամ վնասվածքի հետ կապված փաստաբանի, իրավաբանի վարձատրությունից ու ծախսերից, որոնք առաջացել են Կառույցի փոխադրման և տեղակայման հետ կապված և Կապալառուի կամ վերջինիս Ենթակապալառուների կամ նրանց աշխատողների, ծառայողների կամ գործակալների անփութության պատճառով՝ բացառությամբ որևէ վնասվածքի, մահվան կամ գույքի կորստի կամ վնասվածքի, որոնք պատճառվել են Պատվիրատուի, վերջինիս Կապալառուների կամ նրանց աշխատողների, ծառայողների կամ գործակալների անփութության պատճառով: **28.2** Եթե որևէ վարույթ է հարուցվում կամ հայցապահանջ է ներկայացվում ընդդեմ Պատվիրատուի, որը կարող է հանգեցնել Կապալառուի պատասխանատվության ՊԸՊ 28.1 Ենթահոդվածի համաձայն, ապա Պատվիրատուն պետք է այդ մասին անհապաղ ծանուցի Կապալառուին, իսկ Կապալառուն կարող է իր հաշվին ու Պատվիրատուի անունից իրականացնել այդ դատական վարույթները կամ հայցապահանջները և վարել այդպիսի վարույթների կամ պահանջի կարգավորման հետ կապված ցանկացած բանակցություններ: Եթե Կապալառուին չի հաջողվում ծանուցել Պատվիրատուին այն մասին, որ պատրաստ է իրականացնել դատական վարույթը կամ հայցապահանջն այդպիսի ծանուցումը ստանալուց հետո ողջամիտ ժամկետում, ապա այդ դեպքում Պատվիրատուն իրավունք ունի այդ ամենն իրականացնել իր անունից: Քանի դեռ Կապալառուին չի հաջողվել ծանուցել Պատվիրատուին Պատվիրատուն չպետք է վարույթի կամ հայցապահանջի շրջանակներում կատարի

	ոչ մի պահանջի ընդունում, որը կարող է այդպիսի վարույթի կամ հայցապահանջի շրջանակներում հանգեցնել շահերի պաշտանության վնասի: Կապալառուի պահանջով Պատվիրատուն պետք է Կապալառուին տրամադրի հնարավոր օժանդակություն այդպիսի վարույթներ կամ հայցապահանջներ իրականացնելիս և պետք է փոխհատուցի Կապալառուի կողմից դրա հետ կապված կրած բոլոր հիմնավորված ծախսերը: **28.3** Պատվիրատուն պետք է ապահովի և Կապալառուին, վերջինիս աշխատողներին, ծառայողներին և Ենթակապալառուներին զերծ և անվնաս պահի Պատվիրատուի գույքի կորստի կամ վնասվածքի համար որևէ պատասխանատվությունից՝ բացառությամբ ՊԸՊ 21 Հոդվածով սահմանված կարգով դեռևս չընդունված Օբյեկտի, որի կորուստը կամ վնասվածքը պատճառվել է հրդեհի, պայթյունի կամ որևէ այլ վտանգի հետևանքով, պայմանով՝ այդ հրդեհը, պայթյունը կամ այլ վտանգը չեն առաջացել Կապալառուի որևէ գործողության կամ անփութության պատճառով: **28.4** ՊԸՊ 28 Հոդվածի շրջանակներում փոխհատուցման գումարից օգտվելու իրավունք ունեցող կողմը պետք է ձեռնարկի առաջացած ցանկացած կորստի կամ վնասվածքի նվազեցման ուղղությամբ ողջամիտ միջոցներ: Եթե կողմին չի հաջողվում ձեռնարկել այդպիսի միջոցներ, ապա մյուս կողմի պատասխանատվությունը պետք է համապատասխանաբար նվազեցվի:
ՀՈԴՎԱԾ (29) Չնախատեսված պայմաններ	**29.1** Եթե Պայմանագրի իրականացման ընթացքում Կապալառուն Տեղանքում կհանդիպի ցանկացած ֆիզիկական պայմանների՝ բացառությամբ կլիմայական պայմանների կամ արհեստական խոչընդոտների, որոնք փորձառու Կապալառուի կողմից նախքան Պայմանագրի կնքումը չէին կարող ողջամտորեն կանխատեսվել Օբյեկտին վերաբերող տվյալների ստուգման հիման վրա, ներառյալ Պատվիրատուի կողմից տրամադրված տվյալները, եթե այդպիսիք առկա են, ինչպես նաև այն տեղեկատվության հիման վրա, որը կարող էր ձեռք բերված լինել Տեղանքի ուսումնասիրության միջոցով, եթե մուտքի հնարավորությունը հասանելի լիներ կամ Օբյեկտին վերաբերող այլ տվյալներ, որոնք ամբողջությամբ հասանելի կլինեին, և եթե Կապալառուն որոշում է, որ այդպիսի պայմանների կամ խոչընդոտների պայմաններում ինքը կկրի լրացուցիչ ծախսեր կամ կպահանջվի լրացուցիչ ժամանակ Պայմանագրի շրջանակներում իր պարտականությունները կատարելու համար, որը չէր պահանջվի, եթե այդպիսի ֆիզիկական պայմաններ կամ արհեստական խոչընդոտներ չառաջանային, ապա Կապալառուն պետք է անհապաղ, նախքան

Պատվիրատու՝

Կապալառու՝

	լրացուցիչ աշխատանք կատարելը կամ լրացուցիչ Կառույցի կամ Կապալառուի սարքավորումներ օգտագործելը գրավոր ծանուցի՝ տեղեկացնելով՝ **(a)** Տեղանքում ֆիզիկական պայմանների կամ արհեստական խոչընդոտների առկայության մասին, որոնք չէին կարող ողջամտորեն կանխատեսվել, **(b)** լրացուցիչ աշխատանքի և (կամ) Կառույցի և (կամ) պահանջվող Կապալառուի սարքավորումների մասին, այդ թվում քայլերը, որոնք Կապալառուն կառաջարկի կամ առաջարկում է ձեռնարկել այդպիսի պայմանները կամ խոչընդոտները հաղթահարելու համար, **(c)** կանխատեսվող ուշացման տևողության մասին, և **(d)** լրացուցիչ ծախսերի և միջոցների մասին, որոնք Կապալառուն հավանական է, որ կկրի: ՊԸՊ 29.1 Ենթահոդվածի շրջանակներում Կապալառուից ստանալով որևէ ծանուցում՝ Պատվիրատուն պետք է անհապաղ խորհրդակցի Կապալառուի հետ և ընդունի ծագած ֆիզիկական պայմանները կամ արհեստական խոչընդոտները հաղթահարելու համար ձեռնարկվող քայլերի մասին որոշում: Հետևելով այդ խորհուրդներին՝ Պատվիրատուն պետք է կատարվող քայլերի մասին հրահանգ տա Կապալառուին: **29.2** ՊԸՊ 29.1 Ենթահոդվածի համաձայն ֆիզիկական պայմաններն ու արհեստական խոչընդոտները հաղթահարելու նպատակով Պատվիրատուին հրահանգներին հետևելու արդյունքում Կապալառուի կողմից կրած ցանկացած ողջամիտ ծախսերն ու վճարները պետք է Պատվիրատուի կողմից հատուցվեն Կապալառուին որպես Պայմանագրի գնի ավելացում: **29.3** Եթե Կապալառուն ուշացնում կամ դանդաղեցնում է Պայմանագրի կատարումը ֆիզիկական պայմանների կամ արհեստական խոչընդոտների պատճառով, ապա Ավարտման ժամկետը պետք է երկարաձգվի ՊԸՊ 34 Հոդվածի համաձայն:
ՀՈԴՎԱԾ (30) Փոփոխություններն օրենսդրությունում և կանոնակարգերում	**30.1** Եթե Պայմանագրի կնքման ամսաթվից 28 (քսանութ) օր հետո այն երկրում, որտեղ գտնվում է Տեղանքը, որևէ օրենք, կանոնակարգ, հրաման, ենթաօրենսդրական ակտ կամ իրավական ուժ ունեցող որևէ փաստաթուղթ է ուժի մեջ է մտնում, հրապարակվում, փոփոխվում կամ ուժը կորցնում օրենսդրության համաձայն, որը ենթադրում է իրավասու մարմինների կողմից մեկնաբանման և կիրառման մեջ փոփոխություններ, որը համապատասխանա-

Պատվիրատու՝

Կապալառու՝

	բար ազդում է Կապալառուի ծախսերի և (կամ) վճարների, և (կամ) Ավարտման ժամկետի վրա, ապա Պայմանագրի գինը պետք է համապատասխանաբար ավելանա (առավելագույնը պայմանգրի գնի 10%-ի չափով) կամ նվազի և (կամ) Ավարտման ժամանակը պետք է ողջամտորեն կարգավորվի (Պայմանգրի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Աշխատանքի կատարման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է) այն չափով, որքանով այն ազդել է Պայմանագրով Կապալառուի ստանձնած որևէ պարտավորության կատարման վրա: Չնայած վերոգրյալին՝ այդպիսի լրացուցիչ կամ նվազեցված ծախսերը չպետք է առանձին վճարվեն, եթե վերջիններս ՊԸՊ 10.2 և 10.3 Ենթահոդվածների համաձայն արդեն իսկ հաշվարկված լինեին Պայմանագրի ընդհանուր գնի մեջ:
ՀՈԴՎԱԾ (31) Ֆորս-մաժոր	**31.1** «Ֆորս-մաժոր»՝ նշանակում ցանկացած դեպք, հանգամանք, իրադարձության, իրավիճակ (այսուհետ՝ նաև ՊԸՊ 31 Հոդվածում «Հանգամանք»), որը դուրս է Պատվիրատուի և Կապալառուի ողջամիտ վերահսկողությունից և որն անխուսափելի է ու անկանխատեսելի՝ անկախ Կողմերից կողմից ձեռնարկած ողջամիտ ջանքերի և որը, առանց սահմանափակման, ներառում հետևյալը՝ **(a)** հայտարարված կամ չհայտարարված պատերազմներ, ռազմական կամ պատերազմական գործողություններ, շրջափակումներ, այդ թվում ներխուժումներ, օտարերկրյա թշնամու գործողություններ, քաղաքացիական պատերազմներ, **(b)** ապստամբություն, հեղափոխություն, ներքին խռովություններ, դավադրություններ, հասարակական անկարգություններ, քաղաքական հուզումներ, ահաբեկչական գործողություններ, **(c)** առգրավում, ազգայնացում, մոբիլիզացում, հարկադիր զավթում, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից որևէ գործողություն կամ անգործություն, **(d)** գործադուլ, սաբոտաժ, լոկաուտ, էմբարգո, էլեկտրաէներգիայի մատակարարման սահմանափակում, հաղորդակցության միջոցների սահմանափակումներ կամ անբավարարություն, համաճարակներ, կարանտիններ,

(e) երկրաշարժ, սողանքներ, հրաբխային ակտիվություն, հրդեհ, ջրհեղեղ, աղետաբեր ալիք, թայֆուն, փոթորիկ կամ ցիկլոն, պտտահողմ, կայծակ կամ այլ խիստ եղանակային պայմաններ, միջուկային և ճնշման ալիքներ կամ այլ բնական կամ ֆիզիկական աղետներ,

(f) աշխատանքի, նյութերի կամ պարագաների պակաս՝ ֆորս-մաժորային հանգամանքների պատճառով:

31.2 Եթե Կողմերից որևէ մեկն ամբողջությամբ կամ մասնակի չի կարողանում կատարել Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները ֆորս-մաժորի հետևանքով, ապա այդ դեպքում համապատասխան Կողմը պարտավոր է մյուս Կողմին գրավոր ծանուցել այդ հանգամանքի առաջացման մասին՝ հանգամանքը տեղի ունենալուց հետո 14 (տասնչորս) օրերի ընթացքում՝ նկարագրելով հանգամանքը՝ կցելով հանգամանքը տեղի ունեցած լինելու վերաբերյալ ապացույց:

31.3 Եթե համապատասխան Կողմը ՊԸՊ 31.2 Ենթահոդվածով սահմանված ժամկետում և կարգով մյուս Կողմին գրավոր չի ծանուցում ՊԸՊ 31.1 Ենթահոդվածով նախատեսված հանգամանքներից մեկը և (կամ) մի քանիսը տեղի ունեցած լինելու մասին, ապա այդ Կողմը հետագայում չի կարող վկայակոչել, որ Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է եղել ֆորս-մաժորի, ինչպես նաև զրկվում է մյուս Կողմին հետագայում որևէ պահանջ կամ առարկություն ներկայացնելու իրավունքից:

31.4 ՊԸՊ 31.2 Ենթահոդվածով սահմանված ժամկետում և կարգով գրավոր ծանուցում տված Կողմը ազատվում է Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները կատարելուց, ինչպես նաև այդ պարտավորությունները չկատարելու համար Պայմանագրով նախատեսված պատասխանատվությունից այնքան ժամանակ, քանի դեռ առկա են և շարունակվում են ՊԸՊ 31.1 Ենթահոդվածով նախատեսված հանգամանքներից մեկը և (կամ) մի քանիսը և այն չափով, որքանով այդ հանգամանքներից մեկը և (կամ) մի քանիսը խոչընդոտում են այդ Կողմի կողմից Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների կատարմանը:

31.5 ՊԸՊ 31.1 ենթահոդվածով նախատեսված հանգամանքներից մեկի և (կամ) մի քանիսի առկայության դեպքում Կողմը կամ Կողմերը պետք է գործադրեն բոլոր ողջամիտ ջանքերը՝ մեղմացնելու այդ հանգամանքներից (դեպքերից, իրավիճակներից) մեկի և (կամ) մի քանիսի ազդեցությունը Կողմի և

(կամ) Կողմերի պարտավորությունների կատարման վրա և պետք է գործադրեն բոլոր ջանքերը Պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունները կատարելու ուղղությամբ, սակայն առանց սահմանափակելու ՊԸՊ 31.7 և 32.5 Ենթահոդվածների շրջանակներում Պայմանագիրը լուծելու Կողմերից որևէ մեկի իրավունքը:

31.6 Կողմերից որևէ մեկի կողմից ՊԸՊ 31.1 Ենթահոդվածում նշված հանգամանքներից (դեպքերից, իրավիճակներից) մեկի և (կամ) մի քանիսի հետևանքով Պայմանագրով ստանձնած պարտավորության չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը չպետք է՝

(a) հանգեցնի Պայմանագրի ձախողման և (կամ) խախտման,

(b) Կողմերից որևէ մեկի համար առաջացնի վնասի հատուցման, արժեքի ավելացման կամ լրացուցիչ ծախսերի վճարման պահանջ ՊԸՊ 27.2, 32.3 և 32.4 Ենթահոդվածների համաձայն

այն չափով, որ չափով, որ Կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ՊԸՊ 31.1 Ենթահոդվածով նախատեսված հանգամանքներից մեկի և (կամ) մի քանիսի առկայության հետևանք է:

31.7 Եթե ՊԸՊ 31.1 Ենթահոդվածով նախատեսված հանգամանքներից մեկի և (կամ) մի քանիսի պատճառով Պայմանագրի կատարումն էականորեն կանխվում առնվազն երեք ամիս, ապա Կողմերը պարտավորվում են գտնել փոխադարձ բավարարող լուծում, իսկ փոխադարձ բավարարող լուծում չգտնելու դեպքում Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ գրավոր ծանուցելով այդ մասին մյուս Կողմին, սակայն առանց սահմանափակելու ՊԸՊ 32.5 ենթահոդվածի շրջանակներում Պայմանագիրը լուծելու Կողմերից յուրաքանչյուրի իրավունքը:

31.8 ՊԸՊ 31.1 Ենթահոդվածով նախատեսված հանգամանքներից մեկի և (կամ) մի քանիսի առկայությունը որոշելիս ՊԸՊ 31.1 Ենթահոդվածով նախատեսված հանգամանքներից մեկի և (կամ) մի քանիսի առկայության և տևողության վերաբերյալ բավարար ապացույց է համարվում այն երկրի իրավասու մարմնի կողմից սահմանված կարգով և պայմաններով տրված համապատասխան տեղեկանքը (սերտիֆիկատը), որտեղ գտնվում է Տեղանքը:

31.9 ՊԸՊ 31.7 Ենթահոդվածի համաձայն Պայմանագիրը լուծելու դեպքում Պատվիրատուի և Կապալառուի իրավունքներն ու պարտավորությունները

	պետք է լինեն այնպես, ինչպես սահմանված է ՊԸՊ 36.1.2 և 36.1.3 Ենթահոդվածներում: **31.10** Անկախ ՊԸՊ 31.6 Ենթահոդվածից՝ ՊԸՊ 31.1 Ենթահոդվածով նախատեսված հանգամանքներից մեկի և (կամ) մի քանիսի առկայությունը չպետք է ազդեցություն ունենա Պատվիրատուի կողմից Պայմանագրի շրջանակներում Կապալառուին վճարում կատարելու ցանկացած պարտականության վրա:
ՀՈԴՎԱԾ (32) Պատերազմական ռիսկեր	**32.1** «Պատերազմական ռիսկեր»՝ ՊԸՊ 31.1 Ենթահոդվածի (a) և (b) պարագրաֆներում նշված ցանկացած դեպք և ցանկացած ականի, ռումբի, պայթուցիկի, այլ արկի, հրթիռի, զինամթերքի կամ պատերազմի արդյունքում պայթյունի վտանգ, որը առաջանում է կամ առկա է այն երկրում (կամ երկրներում) կամ նրա հարևանությամբ, որտեղ գտնվում է Տեղանքը: **32.2** Անկախ այն հանգամանքից, թե ինչ է նշված Պայմանագրում՝ Կապալառուն չպետք է հետևյալի առնչությամբ ունենա որևէ բնույթի պարտավորություն՝ **(a)** Օբյեկտի և (կամ) Կառույցի ոչնչացում կամ վնասում, **(b)** Պատվիրատուի կամ Երրորդ անձի գույքի ոչնչացում կամ վնասում, կամ **(c)** կյանքի կամ առողջության կորուստ, եթե այդպիսի ոչնչացումը, վնասը, կյանքի կամ առողջության կորուստը պատճառվել է Պատերազմական ռիսկերից որևէ մեկով, ապա Պատվիրատուն պետք է ապահովի և Կապալառուին անվնաս ու զերծ պահի որևէ և բոլոր պահանջներից, պատասխանատվությունից, գործողություններից, դատական վարույթներից, վնասներից, գանձումներից և ծախսերից, որոնք առաջացել են այդ ամենի հետևանքով կամ նրանց հետ կապված: **32.3** Եթե Օբյեկտը և (կամ) Կառույցը կա՛մ Կապալառուի սարքավորումները, կա՛մ Կապալառուի որևէ այլ գույք, որն օգտագործվել կամ նախատեսված է օգտագործել Օբյեկտի համար, Պատերազմական ռիսկերի պատճառով ոչնչացվում կամ վնասվում են, ապա Պատվիրատուն պետք է Կապալառուին վճարի՝ **(a)** քանդված կամ վնասված Օբյեկտի կամ Կառույցի համար, պայմանով, որ Պատվիրատուն դեռ չի վճարել վերջիններիս համար և այն չափով, որ չափով պահանջված է եղել Պատվիրատուի կողմից և անհրաժեշտ է եղել Օբյեկտի Ավարտման համար,

Պատվիրատու՝

Կապալառու՝

(b) այդ կերպ Կապալառուի քանդված ցանկացած սարքավորման կամ գույքի փոխարինման կամ վերականգման համար,

(c) քանդված կամ վնասված Օբյեկտի և (կամ) Կառույցի փոխարինման կամ նախկին տեսքին բերելու համար:

Եթե Պատվիրատուն Կապալառուից չի պահանջում փոխարինել կամ վերացնել Օբյեկտի ոչնչացումը ու վնասումը, ապա ՊԸՊ 33 Հոդվածի համաձայն Պատվիրատուն պետք է կա՛մ փոփոխություն կատարի՝ բացառելով Օբյեկտի վնասված կամ ոչնչացված մասերի կատարումը, կա՛մ եթե կորուստը, ոչնչացումը կամ վնասը ներգործել է Օբյեկտի վրա, պետք է Պայմանագիրը լուծի ՊԸՊ 36.1 Ենթահոդվածի համաձայն:

Եթե Պատվիրատուն Կապալառուից պահանջում է փոխարինել կամ վերացնել Օբյեկտի այդպիսի ոչնչացումը կամ վնասումը, ապա Ավարտման ժամկետը պետք է երկարաձգվի ՊԸՊ 34 Հոդվածի համաձայն:

32.4 Անկախ այն հանգամանքից՝ Պայմանագրում ինչ է նշված, Պայմանագրի կատարման ժամանակ Պատվիրատուն պետք է Կապալառուին վճարի ցանկացած ավելացված ծախսերի կամ վճարի համար, որոնք որևէ կերպ վերագրելի կամ հետևանք են կամ որևէ կերպ կապված են Պատերազմական ռիսկերի հետ, պայմանով՝ Կապալառուն պետք է գործնականում հնարավորինս շուտ Պատվիրատուին գրավոր ծանուցի ցանկացած այդպիսի ավելացված ծախսերի մասին:

32.5 Եթե Պայմանագրի կատարման ընթացքում կառաջանան Պատերազմական ռիսկեր, որոնք ֆինանսապես կամ նյութական առումով կազդեն Կապալառուի կողմից Պայմանագրի կատարման վրա, ապա Կապալառուն Պայմանագրի կատարման նպատակով պետք է ձեռնարկի ողջամիտ միջոցներ և պատշաճ ուշադրություն դարձնի Օբյեկտի վրա աշխատանքում ներգրավված իր և Ենթակապալառուների աշխատակազմի անվտանգությանը, սակայն պայմանով, եթե Օբյեկտի վրա աշխատանքի իրականացումը կդառնա անհնար, կամ աշխատանքները հիմնականում կդադարեցվեն ավելի քան երեք ամսով՝ Պատերազմական ռիսկերի հետևանքով, ապա Կողմերը կփորձեն գտնել փոխադարձ բավարարող լուծում, իսկ եթե դա չհաջողվի, ապա յուրաքանչյուր Կողմ կարող է լուծել Պայմանագիրը՝ այդ մասին ծանուցելով մյուս կողմին:

Պատվիրատու՝

Կապալառու՝

	32.6 Պայմանագիրը ՊԸՊ 32.3 կամ 32.5 Ենթահոդվածների համաձայն լուծելու դեպքում Պատվիրատուի և Կապալառուի իրավունքներն ու պարտականությունները պետք է լինեն այնպես, ինչպես նշված են ՊԸՊ 36.1.2 և 36.1.3 Ենթահոդվածներում:
ԲԱԺԻՆ Լ.	**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԱՐԲԵՐՈՒՄ**
ՀՈԴՎԱԾ (33) Փոփոխություններ Օբյեկտում	**33.1 <u>Փոփոխության ներկայացում</u>.** **33.1.1** ՊԸՊ 33.2.5 և 33.2.7 Ենթահոդվածների համաձայն Պատվիրատուն պետք է իրավունք ունենա առաջարկելու և այնուհետև պահանջելու, որ Պայմանագրի կատարման ընթացքում Կապալառուն ներկայացնի Օբյեկտի հետ կապված փոփոխություններ, ձևափոխություններ, լրացումներ կամ ջնջումներ (այսուհետ՝ «Փոփոխություն»), պայմանով՝ այդ Փոփոխությունը պետք է ընդգրկվի Օբյեկտի ընդհանուր շրջանակում, չպարունակի չառնչվող աշխատանքներ և տեխնիկապես կիրառելի լինի՝ հաշվի առնելով Օբյեկտի բարելավման վիճակը և Փոփոխության տեխնիկական համատեղելիությունն Օբյեկտի կառուցվածքի հետ՝ ինչպես սահմանված է Պայմանագրում: **33.1.2** Կապալառուն կարող է Պայմանագրի կատարման ընթացքում ժամանակ առ ժամանակ Պատվիրատուին առաջարկել որևէ Փոփոխություն, որն անհրաժեշտ կամ ցանկալի է համարում Օբյեկտի որակը, արդյունավետությունը կամ անվտանգությունը բարելավելու համար: Պատվիրատուն կարող է սեփական հայեցողությամբ հաստատել կամ մերժել Կապալառուի կողմից առաջարկվող ցանկացած Փոփոխություն, պայմանով՝ Պատվիրատուն պետք է հաստատի Օբյեկտի անվտանգությունն ապահովելու նպատակով Կապալառուի կողմից առաջարկվող ցանկացած Փոփոխությունը: **33.1.3** Անկախ ՊԸՊ 33.1.1 և 33.1.2 Ենթահոդվածներից՝ Փոփոխությունը, որն անհրաժեշտաբար կատարվել է Կապալառուի կողմից Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները կատարելուց հրաժարվելու պատճառով, չպետք է դիտվի որպես Փոփոխություն և այդպիսի Փոփոխությունը չպետք է հանգեցնի Պայմանագրի գնի կամ Ավարտման ժամկետի որևէ կարգավորման: **33.1.4** Փոփոխությունների ներկայացման և կատարման ընացակարգը նկարագրված է ՊԸՊ 33.2 և 33.3 Ենթահոդվածներում: **33.2 <u>Պատվիրատուի կողմից ներկայացվող փոփոխություններ</u>.**

Պատվիրատու՝

Կապալառու՝

33.2.1 Եթե ՊԸՊ 33.1.1 Ենթահոդվածի համաձայն Պատվիրատուն առաջարկում է Փոփոխություն, ապա վերջինս պետք է Կապալառուին ուղարկի «Փոփոխության առաջարկի խնդրանք»՝ պահանջելով Կապալառուից գործնականում որքան հնարավոր է շուտ պատրաստել և Պատվիրատուին տրամադրել «Փոփոխության Առաջարկ», որը պետք է ներառի հետևյալը՝

(a) Փոփոխության համառոտ նկարագրությունը,

(b) ազդեցությունը Ավարտման ժամկետի վրա,

(c) Փոփոխության նախահաշվարկային արժեքը,

(d) ազդեցությունը Օբյեկտի վրա,

(e) ազդեցությունը Պայմանագրի որևէ այլ դրույթների վրա:

33.2.2 Նախքան «Փոփոխության առաջարկ» պատրաստելն ու ներկայացնելը, Կապալառուն պետք է Պատվիրատուին ներկայացնի «Փոփոխության առաջարկի նախահաշիվ», որը պետք է լինի «Փոփոխության առաջարկի» պատրաստման և ներկայացման արժեքի նախահաշվարկը: Կապալառուի կողմից «Փոփոխության առաջարկի նախահաշիվը» ստանալուց հետո Պատվիրատուն պետք է կատարի ստորև նշվածներից մեկը՝

(a) ընդունել Կապալառուի նախահաշիվը՝ «Փոփոխության առաջարկի» պատրաստման գործընթացը շարունակելու համար Կապալառուին ուղղված հրահանգների հետ միասին,

(b) Կապալառուին տեղեկացնել «Փոփոխության առաջարկի նախահաշվի» որևէ մաս անընդունելի լինելու մասին և պահանջել Կապալառուից վերանայել իր նախահաշիվը,

(c) Կապալառուին տեղեկացնել այն մասին, որ Պատվիրատուն մտադիր չէ կատարել Փոփոխություն:

33.2.3 Կապալառուն ՊԸՊ 33.2.2 Ենթահոդվածի (a) պարբերության համաձայն Պատվիրատուից հրահանգը ստանալուց հետո պետք է անհապաղ սկսի «Փոփոխության առաջարկի» նախապատրաստումը՝ ՊԸՊ 33.2.1 Ենթահոդվածի համաձայն:

33.2.4 Ցանկացած Փոփոխության արժեք գործնականում որքանով հնարավոր է պետք է հաշվարկվի Պայմանագրում ներառված դրույքաչափերին և գներին համապատասխան: Եթե այդ դրույքաչափերը և գներն անհամատեղելի են, Կողմերը պետք է համաձայնության գան հատուկ դրույքաչափի շուրջ Փոփոխության գնահատման նպատակով:

Պատվիրատու՝

Կապալառու՝

33.2.5 Եթե «Փոփոխության առաջարկի» նախապատրաստումից առաջ կամ ընթացքում ակնհայտ է դառնում, որ ամբողջական ազդեցությունը Պայմանագրի պայմանների և Փոփոխության բոլոր այլ հրահանգների հետ միասին, որոնք արդեն պարտադիր են դարձել Կապալառուի համար ՊԸՊ 33 Հոդվածի շրջանակներում, որը կարող է ավելացնել կամ նվազեցնել ի սկզբանե Պայմանագրի՝ «Պայմանագրի գին և վճարման պայմաններ» վերտառությամբ 2 Հոդվածով նախատեսված Պայմանագրի գինը 10 (տասը) տոկոսով, ապա Կապալառուն կարող է նախքան վերը նշված «Փոփոխության առաջարկի» տրամադրումն իր առարկության մասին գրավոր ծանուցում ներկայացնել: Եթե Պատվիրատուն ընդունում է Կապալառուի առարկությունը, ապա Պատվիրատուն պետք է հետ վերցնի Փոփոխության առաջարկը՝ այդ մասին գրավոր ծանուցելով Կապալառուին:

Կապալառուի կողմից իր առարկության մասին ծանուցում ուղարկելու անկարողությունը չպետք է ազդի Կապալառուի՝ հետագայում պահանջվող ցանկացած այլ Փոփոխությունների կամ Փոփոխության Պատվերների վերաբերյալ իր առարկությունը հայտնելու իրավունքի վրա և ոչ էլ պետք է ազդի Կապալառուի՝ Պայմանագրի գնի ավելացման կամ նվազեցման տոկոսը, որը բխում է որևէ այլ Փոփոխությունից, հաշվի առնելու վերաբերյալ առարկություն հայտնելու իր իրավունքի վրա:

33.2.6 «Փոփոխության առաջարկը» ստանալուց հետո Պատվիրատուն և Կապալառուն պետք է համատեղ համաձայնության գան այնտեղ պարունակվող բոլոր հարցերի շուրջ: Այդպիսի համաձայնությունից հետո 14 (տասնչորս) օրվա ընթացքում Պատվիրատուն պետք է Կապալառուին տրամադրի «Փոփոխության պատվեր», եթե նա մտադիր է կատարել Փոփոխությունը:

Եթե Պատվիրատուն ի վիճակի չէ որոշում կայացնել 14 (տասնչորս) օրվա օրվա ընթացքում, ապա վերջինս պետք է այդ մասին ծանուցի Կապալառուին՝ մանրամասնելով, թե երբ կարող է Կապալառուն ակնկալել Պատվիրատուի որոշումը:

Եթե Պատվիրատուն որոշում է որևէ պատճառով չկատարել Փոփոխությունը, ապա վերջինս պետք է նշված 14 (տասնչորս) օրվա ընթացքում այդ մասին ծանուցի Կապալառուին: Այս դեպքում Կապալառուն իրավունք ունի պահանջել հատուցելու իր կատարած ողջամիտ ծախսերը, որոնք նա կրել է «Փոփոխության առաջարկը» պատրաստելիս, պայմանով, որ այս ծախսերը չպետք է

Պատվիրատու՝

Կապալառու՝

	գերազանցեն Կապալառուի կողմից ՊԸՊ 33.2.2 Ենթահոդվածով սահմանված կարգով ներկայացված «Փոփոխության առաջարկի նախահաշվում» նշված գումարը: **33.2.7** Եթե Պատվիրատուն և Կապալառուն չեն կարողանում համաձայնության գալ «Փոփոխության առաջարկով» ներկայացված Փոփոխության գնի, Ավարտման ժամկետի արդար կարգավորման կամ «Փոփոխության առաջարկում» սահմանված որևէ այլ հարցի շուրջ, ապա Պատվիրատուն կարող է այնուամենայնիվ հրահանգել Կապալառուին կատարել Փոփոխություն՝ տալով «Դիտարկվող Համաձայնագրի մասին Փոփոխության պատվեր»: «Դիտարկվող Համաձայնագրի մասին Փոփոխության պատվերը» ստանալուց հետո Կապալառուն պետք է անմիջապես նախաձեռնի այդ պատվերում ներառված Փոփոխությունների կատարումը: Կողմերը պետք է այնուհետև փորձեն համաձայնության գալ «Փոփոխության առաջարկում» չլուծված հարցերի շուրջ: Եթե Կողմերը «Դիտարկվող Համաձայնագրի մասին Փոփոխության պատվերի» տրամադրման ամսաթվից սկսած 30 (երեսուն) օրվա ընթացքում չկարողանան համաձայնության գալ «Փոփոխության առաջարկում» չլուծված հարցերի շուրջ, ապա ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի առկա տարաձայնությունը (վեճը) լուծելու նպատակով դիմել Դատարան: **33.3 <u>Կապալառուի կողմից ներկայացվող փոփոխություններ</u>.** **33.3.1** Եթե Կապալառուն առաջարկում է Փոփոխություն ՊԸՊ 33.1.2 Ենթահոդվածի համաձայն, ապա Կապալառուն պետք է Պատվիրատուին գրավոր ներկայացնի «Փոփոխության Առաջարկի Դիմում»՝ նշելով առաջարկվող փոփոխությունների պատճառները և ներառելով ՊԸՊ 33.2.1 Ենթահոդվածով նախատեսված տեղեկատվությունը: «Փոփոխության Առաջարկի Դիմումը» ստանալուց հետո Կողմերը պետք է հետևեն ՊԸՊ 33.2.6 և 33.2.7 Ենթահոդվածներում նկարագրված ընթացակարգերին: Սակայն, եթե Պատվիրատուն որոշում է չկատարել Փոփոխություն, ապա Կապալառուն չպետք է «Փոփոխության Առաջարկի Դիմումի» պատրաստման հետ կապված ծախսերի փոխհատուցման իրավունք ունենա:
ՀՈԴՎԱԾ (34) Ավարտման ժամկետի երկարաձգում	**34.1** ՊԸՊ 7.2 Ենթահոդվածով Օբյեկտի Ավարտման համար նախատեսված Ավարտման ժամկետը կարող է երկարաձգվել, եթե Կապալառուի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուշացնում կամ խոչընդոտում են հետևյալ պատճառներից որևէ մեկը՝ **(a)** ՊԸՊ 33 Հոդվածում նշված ցանկացած Փոփոխություն Օբյեկտում, կամ

Պատվիրատու՝

Կապալառու՝

	(b) ՊԸՊ 31 Հոդվածում նշված ֆորս-մաժորի ազդեցության որևէ դրսևորում, ՊԸՊ 29 Հոդվածում նշված չնախատեսված պայմաններ, կամ ՊԸՊ 27.2 Ենթահոդվածի (a), (b) և (c) պարագրաֆներում նշված կամ նկարագրված ցանկացած այլ հանգամանքներ և այլ իրավիճակներ, կամ **(c)** Պատվիրատուի կողմից ՊԸՊ 35 Հոդվածի համաձայն տրված որևէ կասեցման կարգադրություն կամ ՊԸՊ 35.2 Ենթահոդվածի համաձայն առաջընթացի տեմպի կրճատում, կամ **(d)** ցանկացած փոփոխություն օրենսդրությունում և կանոնակարգերում՝ ինչպես նշված է ՊԸՊ 30 Հոդվածում, կամ **(e)** Պատվիրատուի կողմից Պայմանագրի չկատարում կամ խախտում, Պատվիրատուի կամ Պատվիրատուի կողմից ներգրավված ցանկացած այլ Կապալառուների կողմից որևէ գործունեություն, գործողություն կամ անգործություն, կամ **(f)** Ենթակապալառուի կողմից որևէ ուշացում, պայմանով՝ այդ ուշացումը հետևանք է այն բանի, որի համար Կապալառուն ինքն իրավունք կունենար երկարաձգելու Ավարտման ժամկետը սույն Ենթահոդվածի շրջանակներում, կամ **(g)** Պայմանագրում հատուկ նշված որևէ այլ խնդիր այնպիսի ժամկետով, որը պետք է արդար, ողջամիտ և հիմնավոր լինի բոլոր հանգամանքներում և պետք է ողջամտորեն ու արդարացիորեն արտացոլի Կապալառուի կողմից կրած ուշացումը կամ խոչընդոտը: **34.2** Բացառությամբ այն դեպքերի, երբ Պայմանագրում այլ բան է նախատեսված, Կապալառուն պետք է դեպքը կամ հանգամանքը ծագելուց հետո Պատվիրատուին գործնականում որքան հնարավոր է արագ ներկայացնի Ավարտման ժամկետի երկարաձգման մասին պահանջ՝ դեպքի կամ հանգամանքի մանրամասն նկարագրությամբ: Ավարտման ժամկետի երկարաձգման մասին պահանջը դեպքի կամ հանգամանքի մանրամասն նկարագրության հետ միասին ստանալուց հետո որքան հնարավոր է շուտ Պատվիրատուն և Կապալառուն պետք է համաձայնության գան Ավարտման ժամկետի երկարաձգման շուրջ: Այն դեպքում, երբ Կապալառուն չի ընդունի Պատվիրատուի՝ Ավարտման ժամկետի երկարաձգման արժանահավատ և հիմնավորված հաշվարկը, ապա Կապալառուն պետք է իրավունք ունենա դիմել Դատարան ՊԸՊ 38.2 Ենթահոդվածի համաձայն:

Պատվիրատու՝

Կապալառու՝

	34.3 Կապալառուն պետք է մշտապես ձեռնարկի Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների կատարման որևէ ուշացում նվազեցնելու ուղղությամբ ողջամիտ միջոցներ: Բոլոր դեպքերում, եթե Կապալառուն ՊԸՊ 34.2 Ենթահոդվածի համաձայն ներկայացրել է Օբյեկտի Ավարտման ժամկետի երկարաձգման մասին պահանջ, Կապալառուն պետք է խորհրդակցի Պատվիրատուի հետ, որպեսզի որոշվի փաստացի կամ կանխատեսվող ուշացումը հաղթահարելու կամ նվազագույնի հասցնելու քայլերը (եթե այդպիսիք առկա են): Կապալառուն պետք է այնուհետև կատարի Պատվիրատուի կողմից տրված այդպիսի ուշացումը նվազեցնելու նպատակով բոլոր ողջամիտ հրահանգները: Եթե այդ հրահանգների կատարումը Կապալառուի համար կառաջացնի լրացուցիչ ծախսեր և Կապալառուն իրավունք կունենա Օբյեկտի Ավարտման ժամկետը երկարաձգել ՊԸՊ 34.1 Ենթահոդվածի համաձայն, ապա այդպիսի լրացուցիչ ծախսերի գումարը պետք է ավելացվի Պայմանագրի ընդհանուր գնին:
ՀՈԴՎԱԾ (35) Ժամանակավոր կասեցում	**35.1** Կապալառուն կարող է գրավոր ծանուցել Պատվիրատուին և կարգադրել կասեցնելու Կապալառուի կողմից Պայմանագրով ստանձնած որևէ կամ բոլոր պարտավորությունների կատարումը: Ծանուցման մեջ պետք է նշվի, թե որ պարտավորության կատարումն է կասեցվելու, ինչպես նաև կասեցման ամսաթիվը և հիմնավորված պատճառները: Կապալառուն պետք է վերջինիս հիման վրա կասեցնի այդպիսի պարտավորությունների կատարումը՝ բացառությամբ Օբյեկտի հսկողության և պահպանման համար անհրաժեշտ պարտավորությունների, քանի դեռ Պատվիրատուի կողմից վերսկսման մասին գրավոր կարգադրության չի ստացել: Եթե Պատվիրատուի կողմից տրված կասեցման մասին ծանուցման պատճառով, որը կապված չէ Կապալառուի կողմից Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ Պայմանագիրը խախտելու հետ, Կապալառուի ցանկացած պարտավորության կատարումը կասեցված է ավելի քան 60 (վաթսուն) օր, ապա ցանկացած ժամանակ դրանից հետո և պայմանով, որ այդ կատարումը դեռևս կասեցված է, Կապալառուն կարող է գրավոր ծանուցում ներկայացնել Պատվիրատուին՝ պահանջելով, որ ծանուցումը ստանալուց հետո 28 (քսանութ) օրվա ընթացքում կարգադրել վերսկսելու պարտավորության կատարումը կամ պահանջել Պայմանագրում կատարելու համապատասխան Փոփոխություն ՊԸՊ 33 Հոդվածով սահմանված կարգով՝ փոփոխելով կասեցված պարտավորության մասին Պայմանագրի դրույթը:

Պատվիրատու՝

Կապալառու՝

Եթե Պատվիրատուին չի հաջողվում այդպիսի ժամկետում ներկայացնել գրավոր ծանուցում կասեցված պարտավորության կատարումը վերսկսելու մասին, ապա Կապալառուն, Պատվիրատուին ծանուցելով, կարող է կասեցումը մեկնաբանել հետևյալ կերպ՝

(a) եթե կասեցված պարտավորությունը վերաբերում է Օբյեկտի որևէ մասին, ապա բացառել Օբյեկտի այդ մասը ՊԸՊ 33 Հոդվածով սահմանված կարգով, կամ

(b) եթե կասեցված պարտավորությունը վերաբերում է Օբյեկտին ամբողջությամբ, ապա Պայմանագիրը լուծել ՊԸՊ 36.1 Ենթահոդվածի շրջանակներում, պայմանով, որ առկա խնդիրը բոլոր դեպքերում հնարավոր չէ լուծել ՊԸՊ 33 Հոդվածով սահմանված կարգով Պայմանագրում Փոփոխություններ կատարելու միջոցով:

35.2 Եթե՝

(a) Պատվիրատուին սահմանված ժամկետում չի հաջողվում վճարել Կապալառուին Պայմանագրով վճարման ենթակա որևէ գումար, չի հաջողվում առանց իրավական հիմնավորման հաստատել որևէ հաշիվ-ապրանքագիր կամ հավաստող փաստաթղթեր Պայմանագրի՝ «Վճարման պայմաններ և ընթացակարգեր» վերտառությամբ Հավելվածին համապատասխան կամ կատարում է Պայմանագրի էական խախտում, ապա Կապալառուն կարող է գրավոր ծանուցել Պատվիրատուին՝ ներկայացնելով այդպիսի գումարի հետ միասին ՊԸՊ 11.2 Ենթահոդվածի համաձայն տոկոս վճարելու, ինչպես նաև այդպիսի հաշիվ-ապրանքագիրը կամ հավաստող փաստաթղթերը հաստատելու մասին պահանջ կամ խախտումը նկարագրելով՝ Պատվիրատուից պահանջել վերացնելու խախտումը՝ հանգամանքներից ելնելով: Եթե Կապալառուի կողմից այդպիսի ծանուցում ստանալուց հետո 14 (տասնչորս) օրվա ընթացքում Պատվիրատուին չի հաջողվում վճարել այդպիսի գումարը՝ ներառյալ տոկոսները, չի հաջողվում հաստատել այդպիսի հաշիվ-ապրանքագիրը կամ հավաստող փաստաթղթերը կամ չի հաջողվում ներկայացնել այդպիսի հաստատումից հրաժարվելու պատճառները կամ չի հաջողվում վերացնել խախտումը կամ ձեռնարկել խախտումը վերացնելու ուղղությամբ միջոցներ, կամ

(b) Կապալառուն չի կարող կատարել Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները Պատվիրատուին վերագրվող որևէ պատճառով՝ ներառելով, սակայն չսահմանափակելով Պատվիրատուի՝ ՊԸՊ 9.2 Ենթահոդվածի

Պատվիրատու՝

Կապալառու՝

	համաձայն Տեղանքի տիրապետման կամ մուտքի թույլտվությունների տրամադրման կամ Օբյեկտի ավարտման համար անհրաժեշտ թույլտվությունների ստացման անկարողությունը, ապա Կապալառուն կարող է Պատվիրատուին 14 (տասնչորս) օր առաջ գրավոր ծանուցելով՝ կասեցնել Պայմանագրով ստանձնած իր որևէ կամ բոլոր պարտավորությունները կամ նվազեցնել առաջընթացի տեմպերը: **35.3** Եթե Կապալառուի կողմից պարտավորությունների կատարումը կասեցվում կամ առաջընթացի տեմպերը կրճատվում են ՊԸՊ 35 Հոդվածի համաձայն, ապա այդ դեպքում Ավարտման ժամկետը պետք է երկարաձգվի ՊԸՊ 34.1 Ենթահոդվածի համաձայն և այդպիսի կասեցման կամ կրճատման հետևանքով Կապալառուի կողմից կրած որևէ կամ բոլոր լրացուցիչ ծախսերը Կապալառուին պետք է վճարվեն Պատվիրատուի կողմից որպես ի լրումն Պայմանագրի գնի՝ բացառությամբ կասեցման կամ առաջընթացի տեմպերի կրճատման այն դեպքերի, որոնք Կապալառուի կողմից Պայմանագրի չկատարման կամ խախտման հետևանք են: **35.4** Կասեցման ժամանակահատվածի ընթացքում առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության Կապալառուն չպետք է Տեղանքից հեռացնի որևէ Կառույց կամ Կապալառուի որևէ սարքավորում:
ՀՈԴՎԱԾ (36) Պայմանագրի լուծում	**36.1 <u>Լուծումը Պատվիրատուի հայեցողությամբ</u>.** **36.1.1** Պատվիրատուն կարող է ցանկացած ժամանակ, ցանկացած պատճառով լուծել Պայմանագիրը՝ Կապալառուին տալով լուծման մասին ծանուցագիր՝ հղում կատարելով ՊԸՊ 36.1 Ենթահոդվածին: **36.1.2** ՊԸՊ 36.1.1 Ենթահոդվածի համաձայն լուծման մասին ծանուցագիրը ստանալուց հետո Կապալառուն պետք է կա՛մ անհապաղ, կա՛մ լուծման մասին ծանուցագրում նշված ամսաթվին՝ **(a)** դադարեցնի հետագա բոլոր աշխատանքները՝ բացառությամբ այն աշխատանքների, որոնք Պատվիրատուն նշել է Պայմանագրի լուծման մասին ծանուցագրում մեկ նպատակով՝ պաշտպանել Օբյեկտի կատարված մասը կամ ցանկացած աշխատանք, որոնք պահանջվում են Տեղանքը մաքուր և անվտանգ վիճակում թողնելու համար, **(b)** լուծի ենթակապալի բոլոր պայմանագրերը՝ բացառությամբ այն պայմանագրերի, որոնք պետք է զիջվեն Պատվիրատուին ՊԸՊ 36.1.2 Ենթահոդվածի «d» պարագրաֆի «ii» պարբերության համաձայն,

(c) Տեղանքից հեռացնի Կապալառուի բոլոր սարքավորումները, հետ վերադարձնի Կապալառուի անձնակազմը և Ենթակապալառուներին, Տեղանքից հեռացնի ցանկացած բեկորներ, աղբ և ցանկացած բնույթի մնացորդներ և Տեղանքը թողնի մաքուր և անվտանգ վիճակում և

(d) ՊԸՊ 36.1.3 Ենթահոդվածում նշված վճարումից կախված՝

(i) Պատվիրատուին փոխանցի Կապալառուի կողմից մինչև լուծման ամսաթիվը Օբյեկտի կատարված մասերը,

(ii) լուծման ամսաթվի դրությամբ իր իրավասության սահմաններում Պատվիրատուին զիջի Օբյեկտի և (կամ) Կառույցի հետ կապված Կապալառուի բոլոր իրավունքները, լիազորությունները և արտոնությունները և եթե կպահանջվի Պատվիրատուի կողմից, ապա Կապալառուի և Ենթակապալառուների միջև կնքված պայմանագրերի հետ կապված Կապալառուի բոլոր իրավունքները, լիազորությունները և արտոնությունները,

(iii) լուծման ամսաթվի դրությամբ Պատվիրատուին փոխանցի Օբյեկտի հետ կապված փաստաթղթեր, որոնք պատրաստվել են Կապալառուի կամ վերջինիս Ենթակապալառուների կողմից:

36.1.3 Պայմանագիրը ՊԸՊ 36.1.1 Ենթահոդվածի շրջանակներում լուծելու դեպքում Պատվիրատուն պետք է Կապալառուին վճարի հետևյալ գումարները՝

(a) Պայմանագրի գինը, որն ուղղակի կապ ունի լուծման ամսաթվի դրությամբ Կապալառուի կողմից Օբյեկտի կատարված մասերի հետ,

(b) Կապալառուի սարքավորումները Տեղանքից հեռացնելու և Կապալառուի անձնակազմին ու վերջինիս Ենթակապալառուներն հայրենիք վերադարձնելու հետ կապված Կապալառուի կրած ողջամիտ ծախսերը՝

(c) Կապալառուի կողմից Ենթակապալառուներին վճարման ենթակա ցանկացած գումարներ, որոնք կապված են ենթակապալի պայմանագրերի լուծման՝ ներառյալ լուծման հետևանքով ցանկացած տույժերի հետ,

(d) ՊԸՊ 36.1.2 Ենթահոդվածի (a) պարագրաֆի համաձայն Օբյեկտը պաշտպանելու և Տեղանքը մաքուր և անվտանգ վիճակում պահելու հետ կապված Կապալառուի կրած ծախսերը,

(e) բոլոր այլ պարտավորությունների, պարտականությունների և պահանջների բավարարման արժեքը, որոնք Պայմանագրի հետ կապված Կապալառուն բարեխղճորեն ստանձնած կլինի երրորդ անձանց առջև և որոնք սակայն ներառված չեն ՊԸՊ 36.1.3 Ենթահոդվածի (a), (b), (c) և (d) պարագրաֆներում:

Պատվիրատու՝

Կապալառու՝

36.2 <u>Լուծումը Կապալառուի կողմից պարտավորությունների խախտման հետևանքով</u>.

36.2.1 Պատվիրատուն, առանց իր ցանկացած իրավունքների և պաշտպանության միջոցների վրա ազդեցության, կարող է ամիջապես լուծել Պայմանագիրը ՊԸՊ 36.2 Ենթահոդվածի համաձայն՝ Պայմանագրի լուծման և վերջինիս պատճառների նկարագրության մասին Կապալառուին ծանուցագիր ուղարկելու միջոցով՝ հետևյալ պատճառների առկայության դեպքում՝

(a) եթե Կապալառուն սնանկ կամ անվճարունակ է, ունի ընդդեմ իրեն տրված Կապալառուական թերթ, մարում է իր պարտատերերի նկատմամբ ունեցած պարտքերը, կամ եթե Կապալառուն կորպորացիա է և ընդունվել է լուծարման մասին որոշում՝ բացառությամբ միաձուլան կամ վերակազմավորման նպատակներով կամավոր լուծարման դեպքի, և նշանակված է վերջինիս ակտիվների և պարտավորությունների հետ կապված լուծարային հանձնաժողով, կամ եթե Կապալառուն ձեռնարկում կամ կատարում է պարտքերի հետ կապված համանման որևէ այլ գործողություն,

(b) եթե Պայմանագրի շրջանակներում Կապալառուն Պայմանագիրը կամ ցանկացած իրավունք կամ շահ զիջել է երրորդ անձի՝ խախտելով ՊԸՊ 37 Հոդվածը,

(c) եթե Պայմանագրի կատարման կամ մրցույթի ընթացքում Կապալառուն ներգրավված է կոռուպցիայի կամ խարդախության մեջ:

36.2.2 Եթե Կապալառուն՝

(a) մերժում (տեղանքը լքում) կամ հրաժարվում է Պայմանագրից,

(b) առանց որևէ պատճառի չի կարողանում արագ սկսել աշխատանքներն Օբյեկտի վրա կամ Պայմանագրի կատարումը դադարեցրել է 28 (քսանութ) օրից ավելի ՊԸՊ 35.1 Ենթահոդվածում նշվածից տարբերվող պատճառներով Պատվիրատուի կողմից Պայմանագրի կատարման վերաբերյալ գրավոր հրահանգ ստանալուց հետո,

(c) մշտապես ձախողում է Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը կամ Պայմանագրի շրջանակներում մշտապես արհամարում է իր պարտավորությունների կատարումն առանց որևէ պատճառի,

(d) հրաժարվում կամ ունակ չէ տրամադրել բավականաչափ նյութեր, ծառայություններ կամ աշխատույժ Օբյեկտի կատարման և ավարտման համար ՊԸՊ 16.2 Ենթահոդվածի շրջանակներում ներկայացված ծրագրով սահմանված կարգով, ըստ որի Կապալառուն կարող է հասնել Օբյեկտի ավարտման Ավարտման ժամկետի ընթացքում,

	այդ դեպքում Պատվիրատուն կարող է Պայմանագրի շրջանակներում առանց վերջինիս ցանկացած այլ իրավունքների վրա ազդեցության ծանուցագիր ուղարկել Կապալառուին՝ մատնանշելով խախտման բնույթը և պահանջել Կապալառուից վերացնել այն: Եթե այդպիսի ծանուցագիր ստանալուց հետո 14 (տասնչորս) օրվա ընթացքում Կապալառուին չի հաջողվում վերացնել այն կամ այդ ուղղությամբ ձեռնարկել համապատասխան քայլեր, ապա ՊԸՊ 36.2 Ենթահոդվածի համաձայն Պատվիրատուն կարող է անմիջապես լուծել Պայմանագիրը՝ Կապալառուին ուղարկելով Պայմանագրի լուծման մասին ծանուցագիր: **36.2.3** ՊԸՊ 36.2.1 և 36.2.2 Ենթահոդվածների շրջանակներում Պայմանագրի լուծման մասին ծանուցագիր ստանալով՝ Կապալառուն պետք է կա՛մ անհապաղ, կա՛մ լուծման մասին ծանուցագրում նշված ամսաթվին՝ **(a)** դադարեցնի բոլոր հետագա աշխատանքները՝ բացառությամբ նրանց, որոնք Պատվիրատուն կարող է նշել լուծման մասին ծանուցագրում Օբյեկտի այն մասի պաշտպանության նպատակով, որն արդեն իսկ կատարված է կամ բացառապես այն աշխատանքների համար, որը պահանջվում է Տեղանքը մաքուր և անվտանգ վիճակում թողնելու համար, **(b)** լուծի ենթակապալի բոլոր պայմանագրերը՝ բացառությամբ նրանց, որոնք Պատվիրատուին զիջվելու են ՊԸՊ 36.2.2 Ենթահոդվածի (d) պարագրաֆին համաձայն, **(c)** Պատվիրատուին փոխանցի լուծման ամսաթվի դրությամբ Կապալառուի կողմից Օբյեկտի կատարված մասերը, **(d)** իր իրավասությունների սահմաններում Պայմանագրի լուծման ամսաթվից սկսած Պատվիրատուին փոխանցի Օբյեկտի որևէ մասի ու Կառույցի, իսկ եթե կպահանջվի Պատվիրատուի կողմից, ապա Կապալառուի և Ենթակապալառուների միջև կնքված ցանկացած ենթակապալի պայմանագրերի նկատմամբ Կապալառուի բոլոր իրավունքները, իրավասությունները և արտոնությունները, **(e)** Պատվիրատուին փոխանցի Օբյեկտի հետ կապված բոլոր փաստաթղթերը: **36.2.4** Պատվիրատուն կարող է մուտք գործել Տեղանք, հեռացնել Կապալառուին Տեղանքից և ինքնուրույն ավարտել Օբյեկտը կամ ներգրավել որևէ երրորդ կողմի: Պատվիրատուն կարող է, Կապալառուի ցանկացած իրավունք այդ ամենի նկատմամբ բացառելով, ընդունել և Կապալառուին վարձակալման

դրույքաչափի, Պատվիրատուի հաշվին շահագործման ծախսերի վճարմամբ և Պատվիրատուի կողմից բոլոր պարտավորությունների՝ ներառյալ Պատվիրատուի կողմից այդպիսի սարքավորումների օգտագործման հետևանքով անձանց կյանքին ու առողջությանը պատճառված վնասի հատուցմամբ օգտագործել Կապալառուին պատկանող և Օբյեկտի հետ կապված Տեղանքում գտնվող Կապալառուի ցանկացած սարքավորում այնպիսի ողջամիտ ժամկետով, որը Պատվիրատուն համարում է իրատեսական:

Օբյեկտի Ավարտից հետո կամ այնպիսի ավելի վաղ ժամկետում, որը Պատվիրատուն համարում է իրատեսական, պետք է ծանուցագիր ուղարկի Կապալառուին առ այն, որ Կապալառուի այդպիսի սարքավորումը վերջինիս կվերադարձվի Տեղանքում կամ Տեղանքից ոչ հեռու և պետք է Կապալառուի սարքավորումը վերադարձվի այդ ծանուցագրին համապատասխան: Այդ ամենից հետո Կապալառուն պետք է անհապաղ և իր հաշվին հեռացնի կամ կազմակերպի այդպիսի սարքավորումների հեռացումը Տեղանքից:

36.2.5 ՊԸՊ 36.2.6 Ենթահոդվածի համաձայն Կապալառուն պետք է ունենա լուծման ամսաթվի դրությամբ կատարված Օբյեկտի դիմաց Պայմանագրի գնից վճարում, Տեղանքում չօգտագործված կամ մասնակի օգտագործված Կառույցի արժեքը և ծախսերը ստանալու իրավունք, որոնք Կապալառուն կրել է Օբյեկտը պաշտպանելու և Տեղանքը մաքուր և անվտանգ վիճակում թողնելու համար ՊԸՊ 36.2.3 Ենթահոդվածի «a» պարագրաֆի համաձայն: Կապալառուի կողմից վճարման ենթակա ցանկացած գումար, որը կուտակվել է մինչև լուծման ամսաթիվը, կարող է պահվել ինչպես Պայմանագրով Կապալառուին վճարվելիք գումարից, այնպես էլ ՊԸՊ 12 Հոդվածով նախատեսված երաշխիքներից:

36.2.6 Եթե Օբյեկտն ավարտվում է Պատվիրատուի կողմից, ապա Օբյեկտի Ավարտման արժեքը պետք է սահմանվի Պատվիրատուի կողմից:

Եթե գումարը, որին Կապալառուն հավակնում է ՊԸՊ 36.2.5 Ենթահոդվածի համաձայն, ներառյալ Օբյեկտի ավարտման համար Պատվիրատուի կրած հիմնավորված ծախսերը, որոնք գերազանցում են Պայմանագրի գինը, ապա Կապալառուն պետք է պատասխանատվություն կրի այդպիսի գերազանցման համար:

Եթե այդպիսի գերազանցումը ավելին է, քան այն գումարները, որոնք ենթակա են վճարման Կապալառուին ՊԸՊ 36.2.5 Ենթահոդվածի շրջանակներում, ապա Կապալառուն պետք է տարբերությունը վճարի Պատվիրատուին և

	եթե այդպիսի գերազանցումն ավելի փոքր է, քան այն գումարները, որոնք ենթակա են վճարման Կապալառուին ՊԸՊ 36.2.5 Ենթահոդվածի շրջանակներում, ապա Պատվիրատուն պետք է Կապալառուին վճարի տարբերությունը: Պատվիրատուն և Կապալառուն պետք է գրավոր համաձայնության գան վերը նշված հաշվարկների և կարգի մասի, որոնց համաձայն պետք է վճարվի ցանկացած գումար: **36.3 <u>Լուծումը Կապալառուի կողմից</u>.** **36.3.1** Եթե՝ **(a)** Պատվիրատուին սահմանված ժամկետում չի հաջողվում վճարել Կապալառուին Պայմանագրով վճարման ենթակա որևէ գումար, չի հաջողվում առանց իրավական հիմնավորման հաստատել որևէ հաշիվ-ապրանքագիր կամ հավաստող փաստաթղթեր Պայմանագրի՝ «Վճարման պայմաններ և ընթացակարգեր» վերտառությամբ Հավելվածին համապատասխան կամ կատարում է Պայմանագրի էական խախտում, ապա Կապալառուն կարող է գրավոր ծանուցել Պատվիրատուին՝ ներկայացնելով այդպիսի գումարի հետ միասին ՊԸՊ 11.2 Ենթահոդվածի համաձայն տոկոս վճարելու, ինչպես նաև այդպիսի հաշիվ-ապրանքագիրը կամ հավաստող փաստաթղթերը հաստատելու մասին պահանջ կամ խախտումը նկարագրելով՝ Պատվիրատուից պահանջել հանգամանքներից ելնելով վերացնել այն: Եթե Կապալառուի կողմից այդպիսի ծանուցագիր ստանալուց հետո 14 (տասնչորս) օրվա ընթացքում Պատվիրատուին չի հաջողվում վճարել այդպիսի գումարը՝ ներառյալ տոկոսները, չի հաջողվում հաստատել այդպիսի հաշիվ-ապրանքագիրը կամ հավաստող փաստաթղթերը կամ չի հաջողվում ներկայացնել այդպիսի հաստատումից հրաժարվելու պատճառները կամ չի հաջողվում վերացնել խախտումը կամ ձեռնարկել խախտումը վերացնելու ուղղությամբ միջոցներ, կամ **(b)** Կապալառուն չի կարող կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները Պատվիրատուին վերագրվող որևէ պատճառով՝ ներառելով, սակայն չսահմանափակելով Պատվիրատուի՝ ՊԸՊ 9.2 Ենթահոդվածի համաձայն Տեղանքի տիրապետման կամ մուտքի թույլտվությունների տրամադրման կամ Օբյեկտի կատարման և ավարտման համար անհրաժեշտ թույլտվությունների ստացման անկարողությունը, ապա Կապալառուն կարող է Պատվիրատուին այդ մասին գրավոր ծանուցել, և եթե Պատվիրատուին չի հաջողվում վճարել չմարված գումարը, չի հաջողվում հաստատել հաշիվ-ապրանքագիրը կամ հավաստող փաստաթղթերը

կամ չի հաջողվում ներկայացնել այդպիսի հաստատումից հրաժարվելու պատճառները, չի հաջողվում վերացնել խախտումն այդպիսի ծանուցագիր ստանալուց հետո 28 (քսանութ) օրվա ընթացքում, կամ եթե Կապալառուն դեռևս չի կարողանում իրականացնել Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները Պատվիրատուին վերագրվող ցանկացած պատճառով այդպիսի ծանուցագիր ստանալուց հետո 28 (քսանութ) օրվա ընթացքում, ապա Կապալառուն կարող է Պատվիրատուին վերջին ծանուցագիրն ուղարկելու միջոցով անմիջապես լուծել Պայմանագիրը ՊԸՊ 36.3.1 Ենթահոդվածի համաձայն:

36.3.2 Կապալառուն կարող է, հղում կատարելով ՊԸՊ 36.3.2 Ենթահոդվածին, Պատվիրատուին ծանուցագիր ուղարկելու միջոցով անմիջապես լուծել Պայմանագիրը նաև այն դեպքում, երբ Պատվիրատուն սնանկ կամ անվճարունակ է, ունի ընդդեմ իրեն տրված Կապալառուական թերթ, մարում է իր պարտատերերի նկատմամբ ունեցած պարտքերը կամ եթե Պատվիրատուն կորպորացիա է և ընդունվել է լուծարման մասին որոշում՝ բացառությամբ միաձուլման կամ վերակազմավորման նպատակներով կամավոր լուծարման դեպքի, և նշանակված է վերջինիս ակտիվների և պարտավորությունների հետ կապված լուծարային հանձնաժողով, կամ եթե Պատվիրատուն ձեռնարկում կամ կատարում է պարտքերի հետ կապված համանման որևէ այլ գործողություն:

36.3.3 Եթե Պայմանագիրը լուծվում է ՊԸՊ 36.3.1 կամ 36.3.2 Ենթահոդվածների համաձայն, ապա Կապալառուն պետք է անմիջապես՝

(a) դադարեցնի հետագա բոլոր աշխատանքները՝ բացառությամբ այն աշխատանքների, որոնք անհրաժեշտ են Օբյեկտի արդեն կատարված մասը պաշտպանելու նպատակով կամ որևէ այլ աշխատանքներ, որոնք պահանջվում են Տեղանքը մաքուր և անվտանգ վիճակում պահելու համար,

(b) դադարեցնի ենթակապալի բոլոր պայմանագրերը՝ բացառությամբ այն պայմանագրերի, որոնք պետք է զիջվեն Պատվիրատուին ՊԸՊ 36.3.3 Ենթահոդվածի (d) պարագրաֆ (ii) կետի համաձայն,

(c) Տեղանքից հեռացնի Կապալառուի բոլոր սարքավորումները, հետ վերադարձնի Կապալառուի և վերջինիս Ենթակապալառուների անձնակազմը,

(d) ՊԸՊ 36.3.4 Ենթահոդվածում նշված վճարումից կախված՝

(i) Պատվիրատուին փոխանցի Կապալառուի կողմից մինչև լուծման ամսաթիվը Օբյեկտի կատարված մասերը,

Պատվիրատու՝

Կապալառու՝

	(ii) լուծման ամսաթվի դրությամբ իր իրավասության սահմաններում Պատվիրատուին զիջի Օբյեկտի և (կամ) Կառույցի հետ կապված Կապալառուի բոլոր իրավունքները, լիազորությունները և արտոնությունները և եթե կպահանջվի Պատվիրատուի կողմից, ապա Կապալառուի և Ենթակապալառուների միջև կնքված պայմանագրերի հետ կապված Կապալառուի բոլոր իրավունքները, լիազորությունները և արտոնությունները, (iii) լուծման ամսաթվի դրությամբ Պատվիրատուին փոխանցի Օբյեկտի հետ կապված փաստաթղթեր, որոնք պատրաստվել են Կապալառուի կամ վերջինիս Ենթակապալառուների կողմից: **36.3.4** Եթե Պայմանագիրը լուծվում է ՊԸՊ 36.3.1 կամ 36.3.2 Ենթահոդվածների համաձայն, ապա Պատվիրատուն պետք է Կապալառուին վճարի ՊԸՊ 36.1.3 Ենթահոդվածում նշված վճարները և կրած վնասների համար ողջամիտ փոխհատուցումը՝ բացառությամբ բաց թողնված օգուտի կամ Կապալառուի կողմից կրած վնասի, որոնք բխում, կապված կամ հետևանք են Պայմանագրի այդպիսի լուծման: **36.3.5** ՊԸՊ 36.3 Ենթահոդվածի համաձայն Կապալառուի կողմից Պայմանագրի լուծումը չի ազդում Կապալառուի որևէ իրավունքի կամ միջոցի վրա, որոնք կարող է դրսևորվել փոխարեն կամ ի լրումն ՊԸՊ 36.3 Ենթահոդվածի շրջանակներում տրված իրավունքների: **36.4** ՊԸՊ 36 Հոդվածում օգտագործված «Օբյեկտի կատարված մաս» արտահայտությունը պետք է ներառի կատարված բոլոր աշխատանքները, մատուցված ծառայությունները և տեղակայված Կառույցը կամ Օբյեկտի համար օգտագործված Կառույցը մինչև լուծման ամսաթիվը ներառյալ: **36.5** ՊԸՊ 36 Հոդվածում Պատվիրատուի կողմից Կապալառուին վճարման ենթակա գումարները հաշվարկելիս պետք է հաշվի առնել նախապես Պատվիրատուի կողմից Կապալառուին վճարված ցանկացած գումար, այդ թվում Պայմանագրի՝ «Վճարման պայմաններ և ընթացակարգեր» վերտառությամբ Հավելվածի համաձայն ցանկացած կանխավճար:
ՀՈԴՎԱԾ (37) Զիջում (փոխանցում)	**37.1** Ո՛չ Պատվիրտուն, ո՛չ Կապալառուն առանց մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնությունը ստանալու, որը սակայն չպետք է մերժվի անհիմն կերպով, իրավասու չէ Պայմանագիրը կամ Պայմանագրից բխող իր իրավունքները և (կամ) պարտականությունները փոխանցել երրորդ անձի:

Պատվիրատու՝

Կապալառու՝

	37.2 ՊԸՊ 37.1 Ենթահոդվածով սահմանված կարգով Պայմանագիրը կամ Պայմանագրից բխող իր իրավունքները և (կամ) պարտականությունները երրորդ անձին փոխանցած Կողմը, սակայն, չի ազատվում երրորդ անձի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելուց կամ ոչ պատշաճ կատարելուց և չի ազատվում է երրորդ անձի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով առաջացած պատասխանատվությունից, որը կկրեր այդ Կողմը, եթե Պայմանագիրը կամ Պայմանագրից բխող իր իրավունքները և (կամ) պարտականությունները չփոխանցեր երրորդ անձի: **37.3** Ի լրումն ՊԸՊ 37.2 Ենթահոդվածի՝ Կողմն իրավունք ունի Պայմանագիրը կամ Պայմանագրից բխող իր իրավունքները և (կամ) պարտականությունները երրորդ անձին փոխանցած Կողմին համապատասխան պահանջ ներկայացնել, եթե երրորդ անձը, ում համապատասխան Կողմը փոխանցել է Պայմանագիրը կամ Պայմանագրից բխող իր իրավունքները և (կամ) պարտականությունները, հրաժարվում է Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները կատարելուց: **37.4** Երրորդ անձը համարվում է Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները կատարելուց հրաժարվող, եթե Կողմը վերջինիս ներկայացնում է իր պարտավորությունները կատարելու կամ պատշաճ կատարելու վերաբերյալ պահանջ, իսկ երրորդ անձն այդպիսի պահանջը ստանալուց հետո 14 (տասնչորս) օրվա ընթացքում դարձյալ չի կատարում իր պարտավորությունները կամ չի վերացնում խախտումը:
ԲԱԺԻՆ Մ	ՊԱՀԱՆՋՆԵՐ
ՀՈԴՎԱԾ (38) Կապալառուի պահանջներ	**38.1** Եթե Կապալառուն գտնում է, որ ՊԸՊ 38 Հոդվածի կամ Պայմանագրի որևէ դրույթի շրջանակներում ունի Օբյեկտի Ավարտման ժամկետի երկարաձգում և (կամ) լրացուցիչ գումար պահանջելու իրավունք, ապա Կապալառուն պետք է ծանուցագիր ներկայացնի Պատվիրատուին՝ նկարագրելով դեպքը կամ հանգամանքը, որը հանգեցրել է այդպիսի պահանջի: Ծանուցագիրը պետք է տրվի գործնականում որքան հնարավոր է շուտ, բայց ոչ ուշ, քան 14 (տասնչորս) օրվա ընթացքում, երբ Կապալառուն իմացել է դեպքի կամ հանգամանքի մասին: Եթե Կապալառուին չի հաջողվում պահանջի մասին ծանուցագիրն ուղարկել 14 (տասնչորս) օրվա ընթացքում, ապա Ավարտման ժամկետը չպետք է

Պատվիրատու՝

Կապալառու՝

երկարաձգվի, Կապալառուն չպետք է լրացուցիչ գումարի նկատմամբ պահանջի իրավունք ունենա, իսկ Պատվիրատուն պետք է ազատվի այդպիսի պահանջի հետ կապված բոլոր պատասխանատվություններից: Մյուս բոլոր դեպքում պետք է կիրառվեն ՊԸՊ 38.2 Ենթահոդվածում նշված դրույթները:

38.2 Կապալառուն պետք է ներկայացնի նաև Պայմանագրի շրջանակներում պահանջվող ցանկացած այլ ծանուցագիր և պահանջը հիմնավորող մանրամասներ, որոնք կապված են այդպիսի դեպքի կամ հանգամանքի հետ:

Կապալառուն պետք է պահի պարբերաբար կատարվող գրանցումները, որոնք կարող են անհրաժեշտ լինել Տեղանքում կամ Պատվիրատուի համար ընդունելի այլ վայրում ցանկացած պահանջ հիմնավորելու համար:

Պահանջի հանգեցրած դեպքի կամ հանգամանքի մասին Կապալառուին հայտնի դառնալուց հետո Կապալառուն պետք է Պատվիրատուին ներկայացնի մանրամասն պահանջ, որը ներառում է պահանջի, Ավարտման ժամկետի երկարաձգման և (կամ) լրացուցիչ գումարի հիմքերը հավաստող մանրամասները: Եթե պահանջի հանգեցրած դեպքը կամ հանգամանքը կրում է շարունակական ազդեցություն, ապա՝

(a) այդպիսի ամբողջական մանրամասներով պահանջը պետք է համարվի միջանկյալ,

(b) Կապալառուն պետք է հետագա միջանկյալ պահանջներն ուղարկի շաբաթական ընդմիջումներով՝ ներկայացնելով հաշվարկված ուշացումը և (կամ) պահանջվող գումարը և նմանատիպ այլ մանրամասներ, որոնք Պատվիրատուն կարող է ողջամտորեն պահանջել, և

(c) Կապալառուն պետք է ուղարկի վերջնական պահանջը դեպքի կամ հանգամանքի ազդեցության ավարտից հետո ողջամիտ ժամկետի ընթացքում:

Պահանջը կամ նախկին պահանջը հիմնավորող մանրամասները ստանալուց հետո 14 (տասնչորս) օրվա կամ այդպիսի այլ ժամկետի ընթացքում Պատվիրատուն պետք է պատասխանի հաստատմամբ կամ մերժմամբ՝ տալով մերժման մանրամասն մեկնաբանություններ: Պատվիրատուն կարող է նաև պահանջել անհրաժեշտ լրացուցիչ մանրամասներ, սակայն բոլոր դեպքերում պետք է ներկայացնի պահանջի պատճառների վերաբերյալ իր պատասխանն այդպիսի ժամկետի ընթացքում:

Որևէ պահանջով յուրաքանչյուր վճարման սերտիֆիկատ պետք է ներառի այնպիսի գումարներ, որոնք Պայմանագրի համապատասխան դրույթների

	շրջանակներում ողջամտորեն հիմնավորված են: Քանի դեռ և մինչև ներկայացված մանրամասն հիմնավորումները բավարար չեն պահանջն ամբողջությամբ հիմնավորելու համար, ապա Կապալառուն ունի միայն պահանջ այն մասի գումարի նկատմամբ իրավունք, որը կարողացել է հիմնավորել: Պատվիրատուն ղեկավարը պետք է համաձայնվի Կապալառուի հետ կամ հաշվարկի՝ **(i)** Ավարտման ժամկետի (մինչև ժամկետի լրանալը և նրանից հետո) երկարաձգումը (եթե կա այդպիսին) ՊԸՊ 34 Հոդվածի համաձայն և (կամ) **(ii)** լրացուցիչ վճարումը (եթե կա այդպիսին), որի նկատմամբ Կապալառուն Պայմանագրի շրջանակներում ունի պահանջի իրավունք: ՊԸՊ 38.2 Ենթահոդվածի պահանջները հանդիսանում են ի լրումն մյուս Ենթահոդվածների, որոնք կարող են կիրառվել պահանջի նկատմամբ: Եթե Կապալառուին չի հաջողվում պահպանել ՊԸՊ 38.2 Ենթահոդվածի կամ մյուս այլ Ենթահոդվածների պահանջները, որոնք կապված են որևէ պահանջի, Ավարտման ժամկետի որևէ երկարաձգման և (կամ) լրացուցիչ վճարման հետ, ապա Կապալառուն պետք է հաշվի առնի այն հանգամանքները (եթե այդպիսիք առկա են), որոնք խոչընդոտել կամ կանխել են հաշվի առնելու այդ հանգամանքները՝ բացառությամբ այն դեպքի, երբ պահանջը բացառվում է ՊԸՊ 38.1 Ենթահոդվածի երկրորդ պարբերության համաձայն: Այն դեպքում, երբ Կապալառուն և Պատվիրատուն չեն կարողանում համաձայնության գալ պահանջի շրջանակներում ներկայացված որևէ հարցի վերաբերյալ, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դիմել դատարան:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1550001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն՝

Հ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Սաբա Նիրո ընկերություն
Հասցե՝ Թեհրան, Սավե մայրուղու 9 կմ,
Շոհադայե Սադիդ փողոց
«Մելլաթ Բանկ» ՓԲԸ, Երևան
Հ/Հ 2080001258970107
ՀՎՀՀ 411376567635
Դիրեկտիվ մենեջեր

---------- Ալի Ղորբանի
(ստորագրություն)
Կ.Տ.

Պատվիրատու՝

Կապալառու՝

Հավելված 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով ՀՀ Լոռու մարզի Պուշկինի լեռնանցքում գտնվող «Լոռի-1» հողմակայանի Vestas-47 մակնիշի թվով 4 հատ 660 կՎտ հողմաագրեգատների թերությունների վերացման, արտադրող գործարանի հրահանգների ծավալների համաձայն մեկանգամյա տարեկան տեխսպասարկման (էլեկտրոնային, էլեկտրական և մեխանիկական մասեր) և շահագործման հանձնման աշխատանքների ձեռքբերման

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	CPV կոդ	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Նախահաշվային գինը Եվրո	Աշխատանքի կատարման վայրը	Աշխատանքի կատարման ժամկետը
1.	ՀՀ Լոռու մարզի Պուշկինի լեռնանցքում գտնվող «Լոռի-1» հողմակայանի Vestas-47 մակնիշի թվով 4 հատ 660 կՎտ հողմաագրեգատների թերությունների վերացման, արտադրող գործարանի հրահանգների ծավալների համաձայն (կցվում է) մեկանգամյա տարեկան տեխսպասարկման (էլեկտրոնային, էլեկտրական և մեխանիկական մասեր) և շահագործման հանձնման աշխատանքների ձեռքբերում	45231138	**<u>Հողմակայանի տեխնիկական տվյալները</u>** **1.** տուրբինաների քանակը–4 հատ **2.** տուրբինաների տիպը - Vestas-47 -660 կՎտ **3.** յուրաքանչյուր տուրբինայի հզորությունը – 0,66 Մվտ **4.** ընդհանուր հզորությունը – 2,64 Մվտ **5.** յուրաքանչյուր տուրբինայի բարձրությունը – 41 մ **6.** Յուրաքանչյուր տաուրբինայի թևերի քանակը – 3 հատ **7.** քամու արագությունը 5,0 մ/վրկ-25,0 մ/վրկ	դրամ	1	118 095	ՀՀ Լոռու մարզ Պուշկինի լեռնանցք (Բարձրությունը ծովի մակարդակից 2038 մ)	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 աշխատանքային օրվա ընթացքում

Պատվիրատու՝

Կապալառու՝

			Կից ներկայացվում է կատարվելիք աշխատանքների և դրանց համար անհրաժեշտ սարքերի, սարքավորումների և նյութերի ցանկերը՝ ըստ պատվիրատուի կանխատեսումների (հավելված 2)					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Գլխավոր տնօրեն՝

_____ Հ. Հարությունյան
/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Սաբա Նիրո ընկերություն
Հասցե՝ Թեհրան, Սավե մայրուղու 9 կմ,
Շոհադայե Սադիդ փողոց
«Մելլաթ Բանկ» ՓԲԸ, Երևան
Հ/Հ 2080001258970107
ՀՎՀՀ 411376567635
Դիրեկտիվ մենեջեր

_____ Ալի Ղորբանի
(ստորագրություն)

Կ.Տ.

Պատվիրատու՝

Կապալառու՝

Հավելված 2

Ցանկ 1՝

Կատարվելիք աշխատանքների՝ ըստ պատվիրատուի կանխատեսումների

(եվրո)

Հողմաագրեգատ թիվ 1

Հ/Հ	Կատարվելիք աշխատանք	Միավոր	Քանակ	Գին
1.	Ռեդուկտորի կանգնակի վերանորոգում	լրակազմ	1	399.3
2.	Հողմացույցի և հողմաչափի տաքացուցիչի փոխարինում	լրակազմ	1	82.4
3.	Հողմացույցի և հողմաչափի տվիչների փոխարինում	լրակազմ	1	82.4
4.	Փոխանցման տուփի ճկափողի փոխարինում	հատ	1	82.4
5.	K700 հպարկիչի թողարկիչի փոխարինում	լրակազմ	1	137.4
6.	Թիակների խցվածքի (уплотнение) փոխարինում	մետր	9,6	934.2
7.	Ատամնաանիվի ատամների վերանորոգում	լրակազմ	1	2542.5
8.	VRCC էլեկտրոնային բլոկի փոխարինում	հատ	1	187.8
9.	VRCC կառավարման բլոկի փոխարինում	հատ	1	187.8
10.	Ատամնաանիվի արգելակման սարքի/դետալի փոխարինում	հատ	8	100.7
11.	Տարեկան մեկանգամյա սպասարկում	լրակազմ	1	1362.8

Հողմաագրեգատ թիվ 2

Հ/Հ	Կատարվելիք աշխատանք	Միավոր	Քանակ	Գին
1.	Ռեդուկտորի կանգնակի վերանորոգում	լրակազմ	1	399.3
2.	Հողմացույցի և հողմաչափի տաքացուցիչի փոխարինում	լրակազմ	1	82.4
3.	Փոխանցման տուփի ճկափողի փոխարինում	հատ	1	82.4

Պատվիրատու՝

Կապալառու՝

4.	K700 հպարկիչի թողարկիչի փոխարինում	լրակազմ	1	137.4
5.	Ատամնաանիվի արգելակման սարքի/դետալի փոխարինում	հատ	8	100.7
6.	VRCC էլեկտրոնային բլոկի փոխարինում	հատ	1	187.8
7.	VRCC կառավարման բլոկի փոխարինում	հատ	1	187.8
8.	Գոնդոլայի և աշտարակի լուսավորության համակարգերի վերանորոգում	լրակազմ	1	558.7
9.	Տարեկան մեկանգամյա սպասարկում	լրակազմ	1	1362.8

Հողմաագրեգատ թիվ 3

Հ/Հ	Կատարվելիք աշխատանք	Միավոր	Քանակ	Գին
1.	Ռեդուկտորի կանգնակի վերանորոգում	լրակազմ	1	399.3
2.	Հողմացույցի և հողմաչափի տաքացուցիչի փոխարինում	լրակազմ	1	82.4
3.	Փոխանցման տուփի ճկափողի փոխարինում	հատ	1	82.4
4.	K700 հպակիչի թողարկիչի փոխարինում	լրակազմ	1	137.4
5.	Ատամնաանիվի արգելակման սարքի/դետալի փոխարինում	հատ	1	100.7
6.	VRCC էլեկտրոնային բլոկի փոխարինում	հատ	1	187.8
7.	VRCC կառավարման բլոկի փոխարինում	հատ	1	187.8
8.	Գոնդոլայի և աշտարակի լուսավորության համակարգերի վերանորոգում	լրակազմ	1	558.7
9.	Գեներատորի ջերմաստիճանի PT100 տվիչների փոխարինում	հատ	3	265.6
10.	Տարեկան մեկանգամյա սպասարկում	լրակազմ	1	1362.8

Հողմաագրեգատ թիվ 4

Հ/Հ	Կատարվելիք աշխատանք	Միավոր	Քանակ	Գին
1.	Ռեդուկտորի կանգնակի վերանորոգում	լրակազմ	1	399.3

Պատվիրատու՝

Կապալառու՝

2.	Հողմացույցի և հողմաչափի տաքացուցիչի փոխարինում	լրակազմ	1	82.4
3.	Հողմացույցի և հողմաչափի տվիչների փոխարինում	լրակազմ	1	82.4
4.	Փոխանցման տուփի ճկափողի փոխարինում	հատ	1	82.4
5.	K700 հպակային թողարկիչի փոխարինում	լրակազմ	1	137.4
6.	Թիակների վերանորոգում 3 M տեսակի պոլիուրեթանային կպչուն ժապավենով	գլանափաթեթ	1	1373.8
7.	Ատամնաանիվի արգելակման սարքի/դետալի փոխարինում	հատ	8	100.7
8.	Տարեկան մեկանգամյա սպասարկում	լրակազմ	1	1362.8

Ցանկ 2՝

Կատարվելիք աշխատանքների համար անհրաժեշտ սարքերի, սարքավորումների և նյութերի՝ ըստ պատվիրատուի կանխատեսումների

Հողմաագրեգատ թիվ 1

Հ/Հ	Անհրաժեշտ սարքեր, սարքավորումներ և նյութեր	Միավոր	Քանակ	Միավորի գին	Ընդհանուր գին
1.	200x102x8 ափսեաձև զսպանակ՝ ռեդուկտորի կանգնակի /տակդիրի համար	հատ	18	68.0	1224.0
2.	200x102x12 ափսեաձև զսպանակ՝ ռեդուկտորի կանգնակի /տակդիրի համար	հատ	2	85.0	170.0
3.	Հողմացույցի և հողմաչափի տաքացուցիչ	լրակազմ	1	775.0	775.0

Պատվիրատու՝

Կապալառու՝

4.	Հողմացույցի և հողմաչափի տվիչ	լրակազմ	1	312.0	312.0
5.	Փոխանցման տուփի ճկափող	հատ	1	724.0	724.0
6.	K700 հպարկիչի թողարկիչ	լրակազմ	1	904.0	904.0
7.	Թիակների խցվածք (уплотнение)	մետր	9,6	44.3	425.0
8.	VRCC էլեկտրոնային բլոկ	հատ	1	11 150.0	11 150.0
9.	VRCC կառավարման բլոկ	հատ	1	9 450.0	9 450.0
10.	Ատամնաանիվի արգելակման սարք (փակող միջոց)	հատ	8	4.5	36.0
11.	M 16 պտուտակ	հատ	8	8.0	64.0
12.	M 16 տափօղակ	հատ	8	4.5	36.0
13.	Սպասարկման համար անհրաժեշտ նյութեր	լրակազմ	1	5 690.0	5 690.0

Հողմաագրեգատ թիվ 2

Հ/Հ	Անհրաժեշտ սարքեր, սարքավորումներ և նյութեր	Միավոր	Քանակ	Միավորի գին	Ընդհանուր գին
1.	200x102x8 ափսեաձև զսպանակ՝ ռեդուկտորի կանգնակի /տակդիրի համար	հատ	18	68.0	1224.0
2.	200x102x12 ափսեաձև զսպանակ՝ ռեդուկտորի կանգնակի /տակդիրի համար	հատ	2	85.0	170.0
3.	Հողմացույցի և հողմաչափի տաքացուցիչ	լրակազմ	1	775.0	775.0
4.	Փոխանցման տուփի ճկափող	հատ	1	312.0	312.0
5.	K700 հպարկիչի թողարկիչ	լրակազմ	1	904.0	904.0
6.	Ատամնաանիվի արգելակման սարք(փակող միջոց)	հատ	8	4.5	36.0
7.	VRCC էլեկտրոնային բլոկ	հատ	1	11 150.0	11 150.0
8.	VRCC կառավարման բլոկ	հատ	1	9 450.0	9 450.0
9.	M 16 պտուտակ	հատ	8	8.0	64.0
10.	M 16 տափօղակ	հատ	8	4.5	36.0

Պատվիրատու՝

Կապալառու՝

11.	Սպասարկման համար անհրաժեշտ նյութեր	լրակազմ	1	5 690.0	5 690.0

Հողմաագրեգատ թիվ 3

Հ/Հ	Անհրաժեշտ սարքեր, սարքավորումներ և նյութեր	Միավոր	Քանակ	Միավորի գին	Ընդհանուր գին
1.	200x102x8 ափսեաձև զսպանակ՝ ռեդուկտորի կանգնակի /տակդիրի համար	հատ	18	68.0	1 224.0
2.	200x102x12 ափսեաձև զսպանակ՝ ռեդուկտորի կանգնակի /տակդիրի համար	հատ	2	85.0	170.0
3.	Հողմացույցի և հողմաչափի տաքացուցիչ	լրակազմ	1	775.0	775.0
4.	Փոխանցման տուփի ճկափող	հատ	1	724.0	724.0
5.	K700 հպարկիչ	հատ	1	904.0	904.0
6.	Ատամնաանիվի արգելակման սարք(փակող միջոց)	հատ	8	4.5	36.0
7.	VRCC էլեկտրոնային բլոկ	հատ	1	11 150.0	11 150.0
8.	VRCC կառավարման բլոկ	հատ	1	9 450.0	9 450.0
9.	Գեներատորի ջերմաստիճանի PT100 տվիչ	հատ	3	190.0	570.0
10.	M 16 պտուտակ	հատ	8	8.0	64.0
11.	M 16 տափօղակ	հատ	8	4.5	36.0
12.	Սպասարկման համար անհրաժեշտ նյութեր	լրակազմ	1	5 690.0	5 690.0

Պատվիրատու՝

Կապալառու՝

Հողմաագրեգատ թիվ 4

Հ/Հ	Անհրաժեշտ սարքեր, սարքավորումներ և նյութեր	Միավոր	Քանակ	Միավորի գին	Ընդհանուր գին
1.	200x102x8 ափսեաձև զսպանակ՝ ռեդուկտորի կանգնակի /տակդիրի համար	հատ	18	68.0	1224.0
2.	200x102x12 ափսեաձև զսպանակ՝ ռեդուկտորի կանգնակի/տակդիրի համար	հատ	2	85.0	170.0
3.	Հողմացույցի և հողմաչափի տաքացուցիչ	լրակազմ	1	775.0	775.0
4.	Հողմացույցի և հողմաչափի տվիչ	լրակազմ	1	312.0	312.0
5.	Փոխանցման տուփի ճկափող	հատ	1	724.0	724.0
6.	K700 հպակային թողարկիչ	լրակազմ	1	904.0	904.0
7.	3 M տեսակի պոլիուրեթանային կպչուն ժապավեն	գլանափաթեթ	1	411.0	411.0
8.	Ատամնաանիվի արգելակման սարք(փակող միջոց)	հատ	8	4.5	36.0
9.	M 16 պտուտակ	հատ	8	8.0	64.0
10.	M 16 տափօղակ	հատ	8	4.5	36.0
11.	Սպասարկման համար անհրաժեշտ նյութեր	լրակազմ	1	5 690.0	5 690.0

* Կապալառուին կտրամադրվի պայմանագրի ընդհանուր գնի մինչև **50%**-ի չափով կանխավճար՝ բանկային երաշխիքի ներկայացման դեպքում, իսկ պայմանագրի ընդհանուր գնի մնացած մասը կվճարվի Աշխատանքի ամբողջական կատարումն ավարտելուց և պայմանագրով սահմանված կարգով Պատվիրատուին հանձնելուց հետո՝ պայմանագրով սահմանված ժամկետում: Մինչև տրամադրված կանխավճարի ամրումը Կապալառուին այլ վճարումներ չեն կատարվում:

* Կատարվող աշխատանքների՝ այդ թվում տեղադրվող մասերի համար Կապալառուն պետք է տրամադրի շահագործման ընդունման օրվանից հաշված 365 օր երաշխիքային ժամկետ,

Պատվիրատու՝

Կապալառու՝

* Աշխատանքների կատարման համար համապատասխան միջոցները (տեխնիկա, գործիքներ) և սարքերի /նյութերի ապահովումը իրականացվելու է Կապալառուի կողմից,

* Կապալառուն պետք է ներկայացնի մատակարարվող ապրանքների համապատասխանության սերտիֆիկատ,

* Ապրանքների մատակարարումը մինչև Պուշկինի լեռնանցքում գտնվող «Լոռի-1» հողմակայան իրականացվելու է Կապալառուի կողմից,

* Աշխատանքի ամբողջական կատարումն (այսուհետ՝ նաև Աշխատանքների ամբողջական կատարում) իր մեջ ներառում է բոլոր չորս հողմաագրեգատների շահագործման հանձնումը՝ ներառյալ շահագործման հանձնման համար անհրաժեշտ բոլոր մատակարարումների, վերանորոգման և թերությունների վերացման աշխատանքների, ինչպես նաև արտադրող գործարանի հրահանգների ծավալների համաձայն մեկանգամյա տարեկան տեխսպասարկման (էլեկտրոնային, էլեկտրական և մեխանիկական մասեր) աշխատանքների ամբողջական իրականացումը: Հայտատուն և/կամ Կապալառուն պետք է նկատի ունենա, որ սույն հայտի հավելվածով ներկայացված՝ կատարվելիք աշխատանքների և մատակարարումների ցանկը կանխատեսումային է, և ոչ մի ձևով չի համարվում որպես Կապալառուի պարտավորությունների ամբողջական նկարագրություն: Հետևաբար, մասնակիցը պետք է իր գնային առաջարկում և դրան կից ներկայացվող միավոր գների բացվածքում ներառի բոլոր այն մատակարարումները և աշխատանքները, որոնք անհրաժեշտ են Աշխատանքների ամբողջական կատարման համար, եթե նույնիսկ դրանք հստակորեն նշված չեն սույն հրավերի հավելվածով ներկայացված՝ կատարվելիք աշխատանքների և մատակարարումների ցանկում, իսկ Կապալառուն պարտավոր է լինելու իրականացնել այն բոլոր մատակարարումները և աշխատանքները, որոնք անհրաժեշտ լինեն Աշխատանքների ամբողջական կատարման համար, եթե նույնիսկ դրանք հստակորեն նշված չլինեն աշխատանքների իրականացման պայմանագրում:

* **Մասնակցի գնային առաջարկը ներառում է հարկերը (ուղղակի և անուղղակի), տուրքերը, պարտադիր վճարներն ու ծախսերը, այլ վճարները՝ բացառությամբ Պատվիրատուի անունով ապրանքների և սարքավորումների մատակարարումների դեպքում առաջացող ՀՀ պետական բյուջե վճարվող մաքսազերծման հետ կապված հարկերի ու տուրքերի և այլ վճարների, որոնք վճարվելու են Պատվիրատուի կողմից**:

Պատվիրատու՝ **Կապալառու՝**

* Աշխատանքի կատարումը համարվելու է ավարտված՝ Աշխատանքի ամբողջական կատարումն ավարտելուց և պայմանագրով սահմանված կարգով Պատվիրատուին հանձնելուց հետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Հ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Գլխավոր տնօրեն՝

Հ. Հարությունյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Սաբա Նիրո ընկերություն
Հասցե՝ Թեհրան, Սավե մայրուղու 9 կմ,
Շոհադայե Սադիդ փողոց
«Մելլաթ Բանկ» ՓԲԸ, Երևան
Հ/Հ 2080001258970107
ՀՎՀՀ 411376567635
Դիրեկտիվ մենեջեր

Ալի Ղորբանի

(ստորագրություն)

Կ.Տ.

شرکت صبا نیرو (سهامی خاص)
۱
شماره ثبت
۱۰۳۸۲۶
SABANIROO CO.

Պատվիրատու՝

Կապալառու՝